



<<ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆ 2014

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	6
ՄԱՍ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ, ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ	14
1.1. Ընդհանուր տեղեկատվություն երկրի և նրա կենսաբազմազանության մասին	14
1.2. Կենսաբազմազանության կարևորությունը Հայաստանի համար	16
1.3. 2009-2013 թթ. Հայաստանի կենսաբազմազանության վիճակի հիմնական փոփոխություններն ու միտումները	19
1.3.1. Լանդշաֆտներ և էկոհամակարգեր	19
1.3.2. Ֆլորա և բուսականություն	31
1.3.3. Ֆաունա	36
1.3.4. Ջրային կենսաբազմազանություն	41
1.3.5. Ագրոկենսաբազմազանություն	46
1.4. Էկոհամակարգերին և կենսաբազմազանության կարևոր բաղադրիչներին սպառնացող հիմնական վտանգները, դրանց պատճառներն ու ազդեցության մեխանիզմները	49
1.4.1. Բնակմիջավայրերի կորուստ	51
1.4.2. Կենսառեսուրսների գերօգտագործում	59
1.4.3. Շրջակա միջավայրի աղտոտում	59
1.4.4. Օդարածին տեսակների ազդեցություն	61
1.4.5. Կլիմայի փոփոխություն	64
1.5. Կենսաբազմազանության փոփոխությունների ազդեցությունը ԷԾ-ների վրա և դրա սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքները	66
ՄԱՍ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	75
2.1. Ընդհանուր վերլուծություն	75
2.2. 2009-2013 թթ. Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ Հայաստանում ձեռնարկված գործողությունները և դրանց հիմնական արդյունքները	77
2.2.1. Օրենսդրության կադրեր ձևավորում	77
2.2.2. Կառավարման համակարգի բարեփոխումներ	78
2.2.3. Կենսաբազմազանության in-situ պահպանությունը	79
2.2.4. Կենսաբազմազանության ex-situ պահպանությունը	81
2.2.5. Անտառավերականգնման և անտառապայտման աշխատանքներ	84
2.3. Միջազգային համագործակցության և միջազգային ծրագրերի դերը կենսաբազմազանության պահպանության գործում	86
2.4. Կենսաբազմազանության խնդիրների ներգրավումը ճյուղային և միջճյուղային ռազմավարություններում, պլաններում և ծրագրերում	95
ՄԱՍ 3. ԱՅԻԶԻՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ <<ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ>> ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	100
Հավելված 1. Բուսական տարբեր տիպերի հիմնական ցուցանիշները	117
Հավելված 2. Կենդանիների որոշ խմբերի բաշխվածությունը ըստ լանդշաֆտային գոտիների ..	121
Հավելված 3. Կենդանիների տեսակային հարստությունը՝ ըստ բարձրագույն կարգաբանական խմբերի	122
Հավելված 4. Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքները ..	124
Հավելված 5. ՀՀ կենսաբազմազանության պահպանությունը և կայուն օգտագործումն ապահովող օրենսդրությունը	125
Հավելված 6. Տեղեկատվություն Կենսաբազմազանության հինգերորդ ազգային զեկույցը ներկայացնող Կողմ-երկրի և զեկույցի պատրաստման ընթացքի մասին	131
Հավելված 7. Տեղեկատվական աղբյուրներ	132

Հ Ա Պ Ա Վ ՈՒ Մ Ն Ե Ր

ԲԲԱԱ - Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառներ.

ԲՀ - Բարեգործական հիմնադրամ.

ԲՀՀ (WWF) - Բնության համաշխարհային հիմնադրամ.

ԲՀՊՏ - Բնության հատուկ պահպանվող տարածք.

ԲՊԿԶՆ - «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման»
ծրագիր.

ԲՊՄՄ (IUCN) - Բնության պահպանության միջազգային միություն.

ԳԷՀ (GEF) - Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ.

ԵԽ - Եվրախորհուրդ.

ԵՀ - Եվրոպական հանձնաժողով.

ԵՄ - Եվրոմիություն.

ԵՏՀ - Եվրոպական տնտեսական հանձնաժողով.

ԷԾ - Էկոհամակարգերի ծառայություններ.

ԿԲԿ - <<Կենսաբանական բազմազանության մասին>> կոնվենցիա.

ԿՌԳԾ - Կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր.

ԿՏԲԿ (RECC) - Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն.

ՀԱԱՀ - Հայաստանի ազգային ագրարային համալսարան.

ՀԲ (WB) - Համաշխարհային բանկ.

ՀԷԿ - Հիդրոէլեկտրակայան.

ՀԷՑ - Համաեվրոպական էկոլոգիական ցանց.

ՀԿ - Հասարակական կազմակերպություն.

ՀՀ ԲՊՆ - Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն.

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա.

ՀՀ ԳՆ - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն.

ՀԳՌԿՄ - <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և
մրցունակություն>>.

ՀՆԱ - Համախառն ներքին արդյունք.

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն.

ՄԶԳ - Միջազգային զարգացման գրասենյակ.

ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն.

ՊՏԳԾ - Պահպանվող տարածքների վերաբերյալ գործողությունների ծրագիր.

ՍԹԽ - Սահմանային թույլատրելի խտություն.

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին.

ՓԲԸ - Փակ բաժնետիրական ընկերություն.

ՓՀԷԿ - Փոքր հիդրոէլեկտրակայան.

ՔՀՑ - Քաղաքացիական համագործակցության ցանց.

ASPB - <<Հայաստանի թռչունների պահպանման միություն>> ՀԿ.

BMU - Գերմանիայի դաշնության շրջակա միջավայրի, բնապահպանության և միջուկային անվտանգության դաշնային նախարարություն.

BMZ - Գերմանիայի դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության Նախարարություն.

CENN - Կովկասի բնապահպանական հասարակական կազմակերպությունների ցանց.

CEPF - <<Բույսերի Կարմիր ցուցակի պատրաստում>> միջազգային ծրագիր.

CI - Միջազգային պահպանություն.

CIMMYT - Եգիպտացորենի և ցորենի բարելավման միջազգային կենտրոն.

CITES - <<Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին>> կոնվենցիա.

CM/ResDip - Եվրոպայի նախարարների կոմիտեի դիպլոմ.

CNF - Կովկասի բնության հիմնադրամ.

ENPI FLEG - ԵՄ/ՀԲ - <<Անտառային օրենսդրության կիրարկման և անտառային ոլորտի կառավարման բարելավում>> ծրագիր.

EURISCO - Եվրոպական համագործակցության ծրագրի *ex-situ* նմուշների էլեկտրոնային կատալոգ.

FAO - Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն.

FSC - Անտառի հոգեբարձուների խորհուրդ.

ICARDA - Չորային տարածքներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոն.

OECD - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն.

GIZ - Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն.

KfW - Գերմանիայի զարգացման բանկ.

MAVA- հիմնադրամ

UNDP - ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր.

UNEP - ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր.

UNESCO – ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

GEF/WB ֆինանսական աջակցությամբ իրականացվող <<Կենսաբանական բազմազանության մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի պատրաստում և Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայում>> ծրագիրը մեկնարկել է 2014 թ.-ի մայիսին: Ծրագրի պատվիրատուն է ՀՀ ԲՊՆ <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, իրականացնողը՝ <<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ-ն:

Հայաստանի կենսաբազմազանության 5-րդ Ազգային զեկույցը պատրաստվել է համաձայն ԿԲԿ Քարտուղարության կողմից մշակված <<5-րդ Ազգային զեկույցի պատրաստման ղեկավար սկզբունքների>> և <<5-րդ Ազգային զեկույցին կից տեղեկատու ձեռնարկի>>: Այն կազմված է 3 բաժիններից, որոնք ընդգրկում են տեղեկատվություն՝ կենսաբազմազանության վիճակի, փոփոխման միտումների, սպառնալիքների և մարդկանց բարեկեցության վրա դրանց հետևանքների մասին, ինչպես նաև <<Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի>> և Այիջիում ընդունված <<Կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման ոլորտում 2011-2020 թվականների ռազմավարական պլանի և կենսաբազմազանության պահպանության ու կայուն օգտագործման նպատակային խնդիրների>> իրականացման արդյունքները Հայաստանում:

5-րդ Ազգային զեկույցի պատրաստման ընթացքում կատարվել է 2009-2013 թթ. Հայաստանի կենսաբազմազանության վերաբերյալ ժամանակակից նորացված տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն և ամփոփում, բացահայտվել են կենսաբազմազանության փոփոխության առկա միտումները, սպառնացող վտանգների պատճառները ու դրա հետ կապակցված բնակչության խնդիրները:

Հայաստանի կենսաբազմազանության 5-րդ Ազգային զեկույցի նախագծի պատրաստման ընթացքում ապահովվել է բոլոր շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցությունը՝ կլոր սեղանի (Երևանում) և աշխատանքային սեմինարի (Վանաձորում) կազմակերպմամբ, որոնց ընթացքում ստացված կարծիքներն ու առաջարկությունները հաշվի են առնվել Ազգային զեկույցի վերջնական տարբերակի մշակման ժամանակ:

5-րդ Ազգային զեկույցի պատրաստմանը մասնակցել են՝

Ժ. Վարդանյան, կենսաբանական գիտությունների դոկտոր՝

<<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ-ի նախագահ/ծրագրի ղեկավար.

Տ. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու՝

<<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ-ի նախագահի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար.

- Գ. Ֆայվուշ**, կենսաբանական գիտությունների դոկտոր՝ <<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ.
- Ա. Ղուկասյան**, կենսաբանական գիտությունների թեկնածու՝
<<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ.
- Ս. Նանագյուլյան**, կենսաբանական գիտությունների դոկտոր՝ Երևանի պետական համալսարան,
- Բ. Գաբրիելյան**, կենսաբանական գիտությունների դոկտոր՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն.
- Հ. Խաչատրյան**, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն.
- Մ. Քալաշյան**, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն.
- Հ. Ղուլիջանյան**, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ ՀՀ ԲՊՆ <<Զիկատար>> բնապահպանական կենտրոն.
- Մ. Հովհաննիսյան**, կենսաբանական գիտությունների դոկտոր՝ ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ.
- Ս. Գալստյան**, ԲՀՀ-ի (WWF) Հայաստանյան գրասենյակ.
- Ա. Ավագյան**, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ ՀԱԱՀ.
- Ա. Գևորգյան**, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ Երևանի պետական համալսարան.
- Ա. Ասատրյան**, կենսաբանական գիտությունների թեկնածու՝ ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ.
- Զ. Թարխանյան**, <<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ.
- Ե. Խանամիրյան**, <<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ:

<<Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում ԲՀՀ-ի (WWF) Հայաստանյան գրասենյակին, Երևանի պետական համալսարանին և <<Հայաստանի թռչունների պահպանման միություն>> ՀԿ-ին՝ տրամադրած տեղեկատվության համար:

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության 5-րդ Ազգային զեկույցը պատրաստվել է տպագրության կենսաբանական գիտությունների դոկտոր Ս.Բալոյանի խմբագրությամբ (ՀՀ ԲՊՆ <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ):

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, որտեղ լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի ֆլորայի և ֆաունայի հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով, հետևաբար, և իր մասնագիտացված դերով: Հայաստանում ձևավորված 10 լանդշաֆտակլիմայական գոտիներին բնորոշ պայմանները նպաստել են բուսական ու կենդանական տեսակների բնակության միջավայրերի մեծ բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են՝ ինքնատիպ համակեցություններ, էնդեմիզմի բարձր մակարդակ և հարուստ ագրոկենսաբազմազանություն: Կենսաբազմազանության տեսակային կազմի առատությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհների ձևավորման կարևոր մարզերի հանգուցակետում, ինչպես նաև հանդիսանում է միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ: Արդյունքում՝ երկրի ոչ մեծ տարածքում (մոտ 30 հազ.կմ²) աճում են շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսեր, 428՝ հողային և ջրային ջրիմուռներ, 399՝ մամուռներ, 4207՝ սնկեր, 464՝ քարաքոսեր, բնակվում են 549՝ ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակի անողնաշար կենդանիներ: Հայաստանի կենսաբազմազանությունն աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով. մոտ 500 կենդանատեսակ՝ (ֆաունայի շուրջ 3 %-ը) և 144 բուսատեսակ (ֆլորայի 3.8 %-ը) համարվում են Հայաստանի էնդեմիկներ: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 կմ² տարածքում աճում է մոտ 107 տեսակ:

Հայաստանի տարածքն աչքի է ընկնում նաև տեսակառաջացման ակտիվությամբ և պատահական չէ, որ միայն վերջին 10 տարիների ընթացքում նկարագրվել է գիտության համար 50-ից ավելի նոր տեսակներ:

Հայաստանը հայտնի է նաև մշակաբույսերի վայրի ցեղակիցներով (252 տեսակ), որի շնորհիվ համարվում է վայրի ցորենի, աշորայի, գարու և այծակնի տեսակների պահպանման գլոբալ կենտրոն, որտեղից շատ տեսակներ հետագայում տարածվել են ամբողջ աշխարհով: Երկրի բույսերի գենետիկական ռեսուրսների հարուստ բազմազանությունը ներառում է նաև հինավուրց տեղական և ժամանակակից սելեկցիայի սորտեր և վայրի ուտելի բույսեր:

Ըստ լանդշաֆտային գոտիների՝ 2009-2013 թթ. կենսաբազմազանության վիճակի փոփոխությունների հիմնական միտումների պատկերը հետևյալն է.

Կիսաանապատներ՝ ակտիվացել են հողային էրոզիայի և անապատացման երևույթները, նկատվում է կիսաանապատային գոտու ընդլայնում լեռնային պրոֆիլով մոտ 50 մ դեպի վեր, իսկ առանձին էդիֆիկատորներ գրանցվել են իրենց տարածման նախկին բարձունքային սահմաններից 200-300 մ ավելի բարձր կետերում:

Տափաստաններ և մարգագետնափափաստաններ՝ կիսաանապատների ընդլայնման հետևանքով նկատվում է տափաստանային գոտու ստորին մասի կրճատում, որի արդյունքում տափաստաններին բնորոշ տեսակները ներթափանցում են մարգագետնատափաստանային գոտի:

Չորասեր նոսրանտառներ՝ անտառի ստորին սահմանի նոսրացման հետևանքով նկատվում է այս էկոհամակարգի զբաղեցրած տարածքների ընդլայնում՝ նոսրանտառներին և շիբլակին բնորոշ տեսակների, գլխավորապես՝ Ցաքի փշոտի (*Paliurus spina-christi*) և Դժնիկ քաղցրի (*Rhamnus pallasii*) ներթափանցմամբ:

Անտառներ՝ բնական և մարդածին գործոնների ազդեցության արդյունքում անբավարար է անտառկազմող արժեքավոր տեսակների՝ կաղնու և հաճարենու բնական սերմնային վերականգնումը, խիստ կրճատվել են կովկասյան սոճու, հատապտղային կենու, արջատխլենու և այլ հազվագյուտ ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները, որոնց հաճախ փոխարինում են տափաստանա-մարգագետնային բուսական տիպերը:

Մերձալպյան և ալպյան մարգագետիններ՝ արոտավայրերի թերի ծանրաբեռնվածության հետևանքով նկատվում են որոշակի սուկցեսիոն փոփոխություններ՝ մերձալպյան տեսակները բարձրանում են ալպյան գոտի, իսկ ալպյան գորգերը աստիճանաբար փոխարինվում են հացազգիների գերակայմամբ ալպյան մարգագետիններով: Ամենուրեք նկատվում է ոչ կերային էքսպանսիվ բուսատեսակների տարածում, հատկապես՝ Եռակողասերմիկ անդրկովկասյանի (*Tripleurospermum transcaucasicum*):

Ջրահեծային էկոհամակարգեր՝ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ գոտիներում առաջացած ծանծաղուտների շնորհիվ բարելավվել են մի շարք թռչնատեսակների (սպիտակ փոքր տառեղի-*Egretta garzetta*, դեղին տառեղի-*Ardeola ralloides*, կվակվայի-*Nycticorax nycticorax*, քաջահավի-*Plegadis falcinellus*, կտցարի որոշ տեսակների) կենսապայմանները և վերականգնվել կերահանդակները: 60 տարվա բացակայությունից հետո այստեղ նորից բնադրել է մեծ ձկնկուլը (*Phalacrocorax crabo*): Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների պահպանման նպատակով լճում իրականացվել են ամառային իշխանի և գեղարքունի տեսակի արհեստական վերարտադրության գործընթացներ: Սակայն դրանց բնական վերարտադրությունը խոչընդոտվում է ձվադրավայր հանդիսացող գետերի հունների գրեթե լիովին անանցանելիության և ջրաբանական ռեժիմի խախտումների պատճառով:

Վերջին հնգամյակում Հայաստանում արձանագրվել են որոշակի հուսադրող դրական փոփոխություններ ֆաունայի ներկայացուցիչների առավել խոցելի տեսակների վիճակի վերաբերյալ: Մի շարք տեսակների վիճակը կայուն բարվոք է, օրինակ՝ արջի (*Ursus arctos*), գայլի (*Canis lupus*), չախկալի (*Canis aureus*), Կովկասյան ընձառյուծի (*Pantera pardus ciscaucasica*), հայկական մուֆլոնի (*Ovis orientalis gmelinii*), բեզուարյան այծի (*Capra aegargus*):

2007-2009 թթ. գիտական ուսումնասիրությունների վերլուծությունները մեծ ծավալներով իրականացվել են <<Հայաստանի Կարմիր գրքի լրամշակում>> ծրագրի շրջանակներում, որի արդյունքում պատրաստվել և ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 29-ի № 71-Ն և № 72-Ն որոշումներով հաստատվել են ՀՀ Կարմիր գրքերը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Համաձայն 2011 թվականին GIZ-ի կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի Հանրապետության անտառածածկի մակերեսը կազմում է 332.333 հա կամ ՀՀ ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը: Հայաստանի անտառների 75 %-ը կառավարվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի, իսկ 25 %-ը (ԲՀՊՏ-ների անտառային զանգվածներ)՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Ընդհանուր առմամբ 2008-2012 թթ. նկատվում է ապօրինի ծառահատումների ծավալների զգալի նվազում, որն արդյունք է գազամատակարարման համակարգի զարգացման:

Կենսաբազմազանության պահպանությունը Հայաստանում հիմնականում իրականացվում է ԲՀՊՏ-ներում, որտեղ կենտրոնացված է ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70 %-ը, այդ թվում՝ հազվագյուտ, կրիտիկական վիճակում գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը: Ներկայումս հանրապետությունում գործում են հետևյալ ԲՀՊՏ-ները, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 387054 հա կամ ՀՀ ընդհանուր տարածքի 13.1 տոկոսը՝

- 3 պետական արգելոց (<<Խոսրովի անտառ>>, <<Շիրկահող>> և <<Էրեբունի>>), որոնք զբաղեցնում են 35 439.6 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 1.19 %-ը.
- 4 ազգային պարկ (<<Սևան>>, <<Դիլիջան>>, <<Արփի լիճ>> և <<Արևիկ>), որոնք զբաղեցնում են 236 802.1 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 7.96 %-ը.
- 232 բնության հուշարձան.
- 27 պետական արգելավայրեր, որոնք զբաղեցնում են 114 812.7 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 3.95 %-ը:

5-րդ Ազգային զեկույցի պատրաստման ընթացքում արված վերլուծությունը վկայում է, որ 2009-2013 թթ.-ին, համեմատած նախորդ հնգամյակի հետ, էկոհամակարգերին և կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները

հիմնականում մնացել են նույնը: Փոփոխվել են կենսաբազմազանության վրա բացասական ներգործության ուժգնությունը և ազդեցության ենթարկված էկոհամակարգերի տարածական ցուցանիշները: Հարկ է նշել, որ կենսաբազմազանության կորուստները, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների փոփոխությունները շատ դեպքերում միայն մեկ գործոնի արդյունք չեն, այլ համալիր ներգործությունների հետևանք են:

Անտառային էկոհամակարգերը, արոտավայրերը և Սևանա լիճը, որպես կարևոր էկոհամակարգային ծառայություններ տրամադրող լանդշաֆտներ, նպաստում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը և բնակչության բարեկեցության ապահովմանը: Այս էկոհամակարգերում տեղի ունեցող կենսաբազմազանության բաղադրիչների փոփոխությունը և դրանց ուղղակի կորուստը առաջին հերթին ազդում է սոցիալապես անապահով խավերի վրա: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են էկոհամակարգերին և կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները, դրանց առաջացման պատճառները և հնարավոր հետևանքները մարդկանց բարեկեցության և առողջության համար: Հետևանքները կարող են լինել ուղղակի և շատ էական, ցայտուն կամ անուղղակի, բայց նույնպես ազդեցիկ: Այս դեպքում դրանք գնահատվում են որպես տագնապալի և գունավորված են կարմիր գույնով: Եթե փոփոխություններ առաջացնող պատճառները և դրանց հետ կապակցված հետևանքները վերջին հնգամյակում կայուն են, սակայն գնահատվում են որպես պոտենցիալ ռիսկային, ապա դրանք գունավորված են դեղին գույնով: Այն դեպքում երբ արձանագրվում են էկոհամակարգերի և կենսաբազմազանության վիճակի բարելավման որոշակի դրական միտումներ, գունավորումը կանաչ է:

Էկոհամակարգերին և կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները, դրանց առաջացման պատճառները և հնարավոր հետևանքները մարդկանց բարեկեցության և առողջության համար

Վտանգներ	Պատճառներ	Հետևանքներ էկոհամակարգերի և կենսաբազմազանության համար	Հետևանքներ բնակչության բարեկեցության և առողջության համար	Միտումների գնահատում
Բնակմիջավայրի ֆրագմենտացիա և կորուստ	Երկրագործություն	Գյուղատնտեսության սխալ վարման պատճառով հողերի էրոզիա և երկրորդային աղակալում, բնական էկոհամակարգերի փոփոխություն և դեգրադացիա, կենսաբազմազանության բաղադրիչների ֆրագմենտացիա և ուղղակի կորուստ:	Մշակաբույսերի բերքատվության անկում, պարենապահության նվազում, ֆերմերների եկամուտների նվազում: Առողջական խնդիրների սրացում՝ պարարտանյութերի լրացուցիչ քանակների օրտագործման հետևանքով:	Երկրագործության համար բաղեցրած տարածքները գրեթե չեն ավելանում:
	Անասնապահություն	Արոտավայրերի բուսածածկի խախտում, հողերի էրոզիայի օջախների առաջացում, պնդացում, կենսացենոզների տեսակային կազմի փոփոխություն, էկոհամակարգերի դեգրադացիա:	Անասունների մթերատվության անկում, եկամուտների նվազում և աղքատության խորացում	Արոտավայրերի վիճակը դեռևս բարվոք չէ
	Ձկնաբուծություն	Ստորերկրյա ջրերի ծավալների փոքրացում և ջրաշերտերի իջեցում, անապատացման երևույթների զարգացում, ֆլորայի և ֆաունայի տեսակափոխության տեմպերի արագացում:	Երկրի բնակչության համար խմելու ջրի ու սննդամթերքի պակաս, առողջական խնդիրների սրացում:	Արարատյան դաշտի ԷԾ-ների կտրուկ փոփոխություններ:
	Գերխոնավ տարածքների չորացում	Հողերի աղակալում, էկոհամակարգերի դեգրադացիա, կենսաբազմազանության փոփոխություն և կորուստ:		Ներկայումս չի իրականացվում:
	Անտառների հատում	Հողերի էրոզիա, սելավների և սողանքների ակտիվացում, ջրագրական ռեժիմի խախտում, էվտրոֆացում, խոնավասեր բույսերի քանակական և որակական փոփոխություններ, մարդածին սուկցեսիա, կենդանիների բնադրավայրերի, ապրելավայրերի վերացում:	Կլիմայի անբարենպաստ փոփոխությունների, ջրային դեֆիցիտի պատճառով առողջական խնդիրների սրացում, գյուղմթերքի և անտառի կողմնարդյունքի ծավալների նվազում, բնակչության եկամուտների անկում, աղքատության սրացում:	Ուղղակի և անուղղակի հետևանքները շատ ցայտուն են և էական:

Վտանգներ	Պատճառներ	Հետևանքներ էկոհամակարգերի և կենսաբազմազանության համար	Հետևանքներ բնակչության բարեկեցության և առողջության համար	Միտումների գնահատում
	Բաց եղանակով հանքերի շահագործում	Լանդշաֆտների խախտում, հողերի, օդային և ջրային ավազանների աղտոտում, բուսատեսակների պոպուլյացիաների անհետացում, կենդանիների բնադրավայրերի, ապրելավայրերի վերացում:	Հիվանդությունների սրացում, անձնական կարիքների համար օգտագործվող հողատարածքների մակերեսի փոքրացում, գյուղական արտադրանքի չափերի նվազում, եկամուտների անկում:	Ուղղակի և անուղղակի հետևանքները շատ ցայտուն են և էական:
	Սևանա լճի էկոհամակարգի կայունության խախտում	Ջրի մակարդակի իջեցում, էվտրոֆացում, ձկնաշխարհի աղքատացում, ձկնային պաշարների նվազում:	Ջրի մակարդակի վերջին տարիների բարձրացումը հանգեցրել է էվտրոֆացիայի նվազմանը, ձկնաշխարհի և թռչնախարհի, ինչպես նաև էկոհամակարգի կայունացմանը:	Արհեստական վերարտադրությունը նպաստել է ամառային իշխանի ու գեղարքունիի պոպուլյացիայի ավելացմանը:
	Հիդրոէներգետիկայի զարգացում	Ջրագրական ռեժիմի փոփոխություն, ջրային ռեսուրսների սպառում, գետերի հունների չորացում, ձկների ձվադրավայրերի անհասանելիություն և վերարտադրության խախտում, միգրացիոն ուղիների խախտում, կենսաբազմազանության կրճատում:	Ջրային դեֆիցիտի պատճառով ոռոգվող տարածքների կրճատում, գյուղմթերքի ծավալների նվազում, այդ թվում՝ բնական ջրահամակարգերից ստացվող ձկնամթերքի: Բնակչության եկամուտների կրճատում և աղքատության աճ:	Ուղղակի և անուղղակի հետևանքները շատ ցայտուն են և էական:
	Շինարարություն	Հողատարածքների օտարում և բնական լանդշաֆտների խախտում, բուսածածկի և կենդանատեսակների միգրացիոն ուղիների խախտում, բուսական և կենդանական պոպուլյացիաների ֆրագմենտացիա, կենսաբազմազանության բաղադրիչների կրճատում:	Անձնական կարիքների համար օգտագործվող հողատարածքների մակերեսի փոքրացում, գյուղական արտադրանքի չափերի նվազում, եկամուտների անկում: Օդի, ջրի, հողերի աղտոտման պատճառով առողջական խնդիրների սրացում:	Շինարարության ծավալների կրճատման պատճառով սպառնալիքը մեծ չէ:
	Ռեկրտացիա և զբոսաշրջություն	Բուսածածկի ռեկրեացիոն տրոհում, տարածքների աղտոտում, կենդանիների անհանգստություն և ապրելատեղերի լքում, լանդշաֆտների և էկոհամակարգերի փոփոխություն:	Լանդշաֆտների գրավչության նվազեցման պատճառով զբոսաշրջության թերի զարգացում, բնակչության եկամուտների անկում:	Ազդեցությունը դեռևս ցայտուն չէ:

Վտանգներ	Պատճառներ	Հետևանքներ էկոհամակարգերի և կենսաբազմազանության համար	Հետևանքներ բնակչության բարեկեցության և առողջության համար	Միտումների գնահատում
Կենսաբանական պաշարների գերօգտագործում (բնափայտ, դեղատու, կերային, ուտելի, տեխնիկական, գեղազարդ բույսեր, սնկեր, վայրի ընկույզներ, պտուղներ, հատապտուղներ, ձկներ և այլ ջրային կենդանիներ, որսակենդանիներ)	Անկատար օրենսդրություն	Չկանոնակարգված բնօգտագործում, կենսաբազմազանության փոփոխություններ, ԷԾ-ների ծավալների և որակի նվազում:	Կենսաբազմազանության, այդ թվում՝ սննդային արժեք ունեցող պաշարների կրճատում, երկարաժամկետ կտրվածքով աղքատության ավելացում:	Ազդեցությունը անուղղակի է և ցայտուն չէ:
	Կենսառեսուրսների օգտագործման վերահսկողության անբավարար վիճակ	Էկոհամակարգերի վրա մարդածին ներգործության աճ, կենսաբազմազանության և էկոհամակարգերի վերականգնման հնարավորության նվազում:	Բնական էկոհամակարգերի գործառույթների խորը խախտման, կենսառեսուրսների ծավալների սպառման ռիսկ, երկարաժամկետ կտրվածքով աղքատության ավելացում:	Ազդեցությունը անուղղակի է, բայց ցայտուն է և էական:
	Կենսապաշարների հաշվառման, գույքագրման և օգտագործման քվոտաների մասին տվյալների բացակայություն	Լանդշաֆտների վրա մարդածին ներգործության աճ, համակեցությունների վիճակի խախտում, տեսակային կազմի փոփոխություն, արոտավայրերի դեգրադացում, օգտակար, հազվագյուտ և անհետացող տեսակների կրճատում:	Բնական էկոհամակարգերի գործառույթների խախտման, կենսառեսուրսների օգտագործման օպտիմալ ծավալների գերազանցման ռիսկ և վերացման վտանգ, երկարաժամկետ կտրվածքով աղքատության ավելացում:	Ազդեցությունը անուղղակի է, բայց ցայտուն է և էական:
	Կենսաբանական թափաքանության մոնիթորինգի համակարգի բացակայություն	Տեսակների, պոպուլյացիաների, էկոհամակարգերի վիճակի գնահատման, նորմավորման և քվոտավորման սկզբունքի կիրառման, գիտականորեն հիմնավորված քաղաքական և վարչական որոշումների ընդունման անհնարինություն:	Չկանոնակարգված բնօգտագործում, կենսառեսուրսների գերօգտագործման բարձր ռիսկ, բնակչության կենսամակարդակի անկում:	Ազդեցությունը անուղղակի է, բայց ցայտուն է և էական:
Շրջակա միջավայրի	Արդյունաբերություն	Հողում վնասակար նյութերի կուտակում, օդային ավազանի, ստորերկրյա ջրերի և գետերի աղտոտում, թափոնների ու պոչերի կուտակում, լանդշաֆտների դեգրադացիա, տեսակների աճի և վերարտադրության պայմանների խախտում, արժեքավոր, անհետացող և հազվագյուտ տեսակների ոչնչացում, ագրոցենոզների բերքատվության անկում, բերքի որակի վատթարացում:	Բնակչության առողջական խնդիրների առաջացում, եկամուտների անկում:	Ազդեցությունը շատ ցայտուն և էական է, հատկապես շահագործվող հանքերի շրջաններում:

Վտանգներ	Պատճառներ	Հետևանքներ էկոհամակարգերի և կենսաբազմազանության համար	Հետևանքներ բնակչության բարեկեցության և առողջության համար	Միտումների գնահատում
աղտոտում	Գյուղատնտեսություն	Հանքային պարարտանյութերով, պեստիցիդներով և թունաքիմիկատներով հողերի և ջրերի աղտոտում, հողային կենսաբազմազանության ոչնչացում, կիսաանապատային, մարգագետնային, տափաստանային համակեցություններից արժեքավոր և հազվագյուտ բուսատեսակների դուրս մղում:	ԷԾ-ների խախտման պատճառով բնակչության առողջական վիճակի վատթարացում:	Ազդեցությունը անուղղակի է և ցայտուն չէ:
	Տրանսպորտ	Հողերի, օդային և ջրային ավազանների աղտոտում, ագրոցենոզներում վնասակար նյութերի կուտակում, էկոհամակարգերի դեգրադացիա, տեսակների և պոպուլյացիաների կրճատում:	ԷԾ խախտման և գյուղատնտեսական մթերքի որակի փոփոխության պատճառով բնակչության առողջական վիճակի վատթարացում:	Ազդեցությունը անուղղակի է և դեռևս ցայտուն չէ:
Օտարածին տեսակների ազդեցություն		Էկոհամակարգերի հավասարակշռության խախտում, բնական համակեցությունների և ագրոցենոզների տեսակային կազմի փոփոխություն, աբորիգեն արժեքավոր տեսակների դուրս մղում կամ ոչնչացում:	ԷԾ խախտման պատճառով բնակչության կենսամակարդակի և եկամուտների անկում:	Ազդեցությունը անուղղակի է և դեռևս ցայտուն չէ:
Կլիմայի փոփոխություն		Ջրային պաշարների նվազում, ջրաճահճային էկոհամակարգերի չորրոցում, անապատացման ենթակա տարածքների ավելացում, էկոհամակարգերի կայունության նվազում, ֆաունայի և ֆլորայի տարածման սահմանների ուղղահայաց տեղաշարժ, տեսակների ֆենոլոգիական ցուցանիշների փոփոխություն, համակեցությունների կազմի փոփոխում, էնդեմիկ տեսակների ոչնչացման ռիսկի մեծացում, վնասատուների բռնկման դեպքերի ավելացում, անտառային հրդեհների դեպքերի ավելացում:	Բնակչության առողջության, սնունդապահովման, ջրապահովման խնդիրների սրացում:	Ազդեցությունը անուղղակի է և դեռևս չի գնահատվում որպես էական:

ՄԱՍ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ, ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1.1. Ընդհանուր տեղեկատվություն երկրի և նրա կենսաբազմազանության մասին

Հայաստանը դեպի ծով ելք չունեցող փոքր լեռնային երկիր է (մոտ 30 հազ.կմ²), գտնվում է Հարավային Կովկասում: Հայաստանի տարածքի 44 %-ը բարձր լեռնային է, բնակեցման համար ոչ պիտանի: Տարածքների իրացվածության աստիճանը խիստ անհամաչափ է: Ինտենսիվ իրացված գոտիները կազմում են Հայաստանի տարածքի 18.2 %-ը, որտեղ կենտրոնացված է բնակչության 87.7 %-ը: Այստեղ բնակչության խտությունը մի քանի անգամ գերազանցում է խտության էկոլոգիական շեմային չափանիշը (200 մարդ/կմ²)՝ հասնելով 480-558 մարդ/կմ²: Թույլ իրացված գոտիները կազմում են տարածքի 38.0 %-ը, որտեղ բնակվում է բնակչության ընդամենը 12.3 %-ը, բնակչության խտությունը շատ ցածր է՝ 11-20 մարդ/կմ²: Ինտենսիվ իրացված տարածքներն ապահովված են ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներով, առավել մատչելի են հանրային ծառայությունները, մեծ են մարդկային ռեսուրսները և ֆինանսական հնարավորությունները: Թույլ իրացված տարածքները հարուստ են բնական ռեսուրսներով, պահպանվել են բնության անձեռակերտ էկոհամակարգերը, գեղեցիկ լանդշաֆտները, մաքուր ջուրը, օդը և կենսաբանական պաշարները:

Հայաստանը լանդշաֆտային և կլիմայական հակասությունների երկիր է՝ բարդ ռելիեֆի և բարձրունքագոտիական հերթակայության հետևանքով նույնիսկ փոքր տարածությունների վրա կարելի է տարբերակել վեց կլիմայական տիպեր և լանդշաֆտային տաս գոտի՝ կիսաանապատային տարածքներից մինչև ձյունապատ բարձրավանդակներ: Երկրի տեղադրությունը երեք կենսաաշխարհագրական շրջանների հատման վայրում, կլիմայական պայմանների զանազանությունը և երկրաբանական ակտիվ գործընթացները հանգեցրել են տարատեսակ էկոհամակարգերի և բարձր աստիճանի էնդեմիզմ ունեցող հարուստ կենսաբազմազանության առաջացմանը: Արդյունքում՝ երկրի ոչ մեծ տարածքում աճում են շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսեր, 428՝ հողային և ջրային ջրիմուռներ, 399՝ մամուռներ, 4207՝ սնկեր, 464՝ քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակի անողնաշար կենդանիներ (աղյուսակ 1): Այստեղ ներկայացված են Կովկասի բոլոր հիմնական բնական էկոհամակարգերը, բացառությամբ խոնավ մերձարևադարձայինների: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանը աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 կմ²-ին ընկնում է մոտ 107 տեսակ: Հայաստանի տարածքն աչքի է ընկնում ինտենսիվ տեսակառաջացման պրոցեսներով և պատահական չէ, որ

հաճախակի հայտնաբերվում են գիտության համար նոր տեսակներ: Միայն վերջին 10 տարիների ընթացքում նկարագրվել է գիտության և Հայաստանի համար 50-ից ավելի նոր տեսակներ: Հայաստանը հանդիսանում է ագրոկենսաբազմազանության առաջացման գլոբալ նշանակության կենտրոն: Այստեղ պահպանվել են բազմաթիվ մշակաբույսերի՝ ցորենի (*Triticum*), աշորայի (*Secale*), գարու (*Hordeum*), այծակնի (*Aegilops*), և մի շարք ընտանի կենդանիների վայրի ցեղակիցները:

Աղյուսակ 1.

Հայաստանում բուսական ու կենդանական տեսակների և էնդեմիկների քանակը ըստ կարգաբանական խմբերի (2010-2014 թթ. ճշգրտված տվյալներով)

Սնկեր		Բույսեր		Կենդանիներ	
Տեսակների քանակը/ էնդեմիկների քանակը		Տեսակների քանակը/ էնդեմիկների քանակը		Տեսակների քանակը/ էնդեմիկների քանակը	
Միկրոսնկեր	Մակրոսնկեր	Ստորակարգ բույսեր	Բարձրակարգ բույսեր	Անողնաշար կենդանիներ	Ողնաշարավոր կենդանիներ
2987	1220/2	հողային և ջրային ջրիմուռներ	մամուռներ	17200/479	ծկներ-39/3
		428	399		երկկենցաղներ 7/0
		քարաքոսեր	անոթավոր բույսեր		սողուններ 53/6
		464	3800/142		թռչուններ 357/1
					կաթնասուններ 93/6
Ընդամենը		Ընդամենը		Ընդամենը	
4207/2		5091 /142		17749/495	

Ինտենսիվ բնօգտագործման հետևանքով Հայաստանում բնական լանդշաֆտների մարդածին փոփոխությունների աստիճանը մեծ է: Տարածքի ավելի քան 60 %-ը ներառված է ակտիվ գյուղատնտեսության ոլորտ, իսկ կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում այն հասնում է 80-90 %: Գերօգտագործման հետևանքով տեղի է ունեցել վայրի կենսաբազմազանությամբ զբաղեցված տարածքների կրճատում, աղտոտում, առանձին տեսակների բնակմիջավայրերի կորուստ, էկոհամակարգերի ծառայությունների փոփոխություն:

Կովկասը, որի մասն է կազմում Հայաստանը, աչքի է ընկնում իր բացառիկ հարուստ կենսաբազմազանությամբ, որի շնորհիվ ԲՀՀ-ի կողմից (WWF) ընդգրկված է համամոլորակային նշանակություն ունեցող 200 էկոտարածաշրջանների ցանկում, սակայն այն ճանաչվել է նաև որպես վտանգված տարածք և ներառվել 34 Առանցքային վտանգված տարածքների ցանկում:

1.2. Կենսաբազմազանության կարևորությունը Հայաստանի համար

2010 թ. ընդունված ԿԲԿ-ի Ռազմավարական պլանը և Այիչիի Նպատակային խնդիրները, կենսաբազմազանության պահպանության հետ մեկտեղ, շեշտադրել են էկոհամակարգային ծառայությունների ապահովման հարցը, քանի որ ֆլորայի և ֆաունայի յուրաքանչյուր տեսակ ոչ միայն դերակատարում ունի գենոֆոնդի պահպանության հարցում, այլև՝ էկոհամակարգում: Հայտնի է, որ էկոհամակարգերի կայունությունը պայմանավորված է բուսակենդանական տեսակների հարստությամբ, որի աղքատացումը սպառնում է գենետիկական ռեսուրսների անդարձելի կորուստին և այս գործընթացը կարող է լուրջ հետևանքներ ունենալ՝ էկոհամակարգային ծառայությունների կորուստի տեսակետից:

Հայաստանի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսապաշարների առկայությունից, որոնք երկրի համար ռազմավարական ռեսուրսներ են և Հայաստանի Հանրապետության կառավարությունը դրանց պահպանությունը դասում է գերակա խնդիրների շարքում: Դարեր շարունակ կենսապաշարները օգտագործվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ որպես սննդամթերք, վառելիք, շինանյութ, դեղամիջոցներ և այլն:

Սնունդ. Սկսած հնադարից հայ ժողովուրդն իր գոյությունը պահպանել է որսորդությամբ, ձկնորսությամբ և վայրի բույսերի օգտագործմամբ՝ փոխանցելով այդ ավանդույթը սերունդներին: Հայաստանը հարուստ է մակրոսնկերի և օգտակար բույսերի հետևյալ խմբերով.

1. **ուտվող սնկեր.** ներկայացված են 290 տեսակով: Առավել շատ օգտագործվում են սովորական ականջասունկը (*Pleurotus ostreatus*), մարգագետնային շամպինյոնը (*Agaricus campestris*), մանուշակագույն ոտիկով լեպիստան (*Lepista personata*), շեկիկը (*Lactarius deliciosus*) աղվեսասունկը (*Cantharellus cibarius*).
2. **ուտվող խոտաբույսեր.** ներկայացված են շուրջ 200 տեսակներով: Օգտագործվում են ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված (եփված, թթու դրած և այլն) վիճակում՝ կազմելով սպառվող սննդի 10-15 տոկոսը: Առավել օգտագործվող տեսակներից են սիբեխը (*Falcaria*), բոխին (*Hippomarathrum*), ծներեկը (*Asparagus*), մանդակը (*Chaerophyllum*) և այլ ցեղերի տեսակները.
3. **վայրի պտղա-հատապտղատուներ.** հայտնի են շուրջ 120 տեսակներ՝ Հայաստանի դենդրոֆլորայի մոտ 40 %-ը: Առավել արժեքավոր են ընկուզենին (*Juglans*), տխլենին (*Corylus*), տանձենին (*Pyrus*), խնձորենին (*Malus*), հոնենին (*Cornus*), մոշենին (*Rubus*), հաղարջենին (*Ribes*) և բազմաթիվ այլ տեսակներ.
4. **մեղրատու բույսեր.** կազմում են շուրջ 350 տեսակ և լայնորեն տարածված են բոլոր լանդշաֆտային գոտիներում: Մեղրատուներին են պատկանում բույսերի հետևյալ խմբերը՝

- պտղատու ծառատեսակներ – ծիրանենի, սալորենի, դեղձենի, կեռասենի, բալենի, խնձորենի, տանձենի և այլն.
- անտառային ծառատեսակներ – ուռենի, թխկի, կաղնի, չիչխան, ցաքի, լորենի և այլն.
- մարգագետնային խոտաբույսեր – կատվադաղձ, արեղախոտ, հորթալեզու, շաղգամախոտ, ուրց, առվույտ, եղեսպակ և այլն.

Սիրողական ձկնորսությունը թույլատրվում է Հայաստանի բոլոր գետերում և լճերում, բացառությամբ ԲՀՊՏ-ների: Արդյունագործական ձկնորսության 90 տոկոսը իրականացվում է Սևանա լճում: Մինչև լճի մակարդակի իջնելը հիմնական որսատեսակներն էին Սևանի իշխանը (*Salmo ischchan*) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi*), իսկ մակարդակի իջեցումից հետո՝ սիգը (*Coregonus lavaretus sevanicus*): 20-րդ դարի առանձին տարիներին որսաչափը կազմել է շուրջ 2000 տոննա: 1980-ական թվականներին Սևանա լիճ է ներթափանցել արծաթափայլ ծածանը (*Carassius auratus*) և երկարաչանչ խեցգետինը (*Pontastacus leptodactylus*), որոնք ավամերձ տարածքների բնակչության համար ներկայումս պարենապահովության կարևոր աղբյուր են:

Կենդանիների սիրողական որսը թույլատրվում է արտոնագրերի միջոցով: Ըստ վիճակագրական տվյալների՝ առավել շատ որսվող տեսակներն են՝ լորը (*Coturnix coturnix*), քարակաքավը (*Alectoris Graeca*), կոնչան բադը (*Anas platyrhynchos*), վայրի աղավնին (*Columba livia*):

Բնափայտ. Օգտագործվում է որպես վառելափայտ և շինափայտ: Բարձր է գնահատվում կաղնու, հաճարենու, բոխու բնափայտը: Շինափայտը կազմում է տարեկան հատված փայտանյութի ընդհանուր ծավալի 8-11 %-ը:

Դեղաբույսեր. Կազմում են երկրի ֆլորայի տեսակային կազմի շուրջ 10 տոկոսը: Ժողովրդական բժշկության մեջ վաղուց լայնորեն օգտագործվում են դժնիկի (*Rhamnus*), սզնու (*Crataegus*), գիհու (*Juniperus*), մասրենու (*Rosa*), արևքուրիկի (*Hypericum*), ծորենու (*Berberis*) և այլ ցեղերին պատկանող բազմաթիվ ներկայացուցիչներ: Ապացուցված է, որ լեռնային շրջաններում աճող վայրի դեղաբույսերի օգտակար հատկություններն ավելի բարձր են, որի պատճառով դրանց հավաքը տարեց տարի ավելանում է: Շուրջ 15 տեսակներ օգտագործվում են զովացուցիչ և բուժիչ թեյերի պատրաստման համար:

Դեղաբանական հատկություններ ունեն նաև Հայաստանում աճող 122 տեսակի մակրոսնկեր, որոնցից առավել հարուստ տեսակային կազմով ներկայացված է գլխարկավոր սնկերի (*Agaricomycetidae*) ենթադասն իր 14 ընտանիքներով, որոնցից, համեմատաբար, մեծ տեսակային բազմազանությամբ աչքի են ընկնում *Tricholomataceae* (10 ցեղ, 17 տեսակ), *Russulaceae* (2 ցեղ, 15 տեսակ), *Boletaceae* (2 ցեղ, 8 տեսակ) և *Amanitaceae* (2 ցեղ, 7 տեսակ) ընտանիքները: Հայտնաբերված

տեսակներից 12-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (*Agaricus xanthodermus*, *Amanita muscaria*, *A. phalloides*, *Astraeus hygrometricus*, *Boletus edulis*, *B. satanas*, *Hericium erinaceus*, *Mutinus caninus*, *Phallus impudicus*, *Pleurotus eryngii*, *Podaxis pistillaris*, *Suillus grevillei*): Որոշ սնկատեսակներից պատրաստված դեղամիջոցները (*Inonotus obliquus* - չափա, *Ganoderma lucidum* - լաքապատ արեթասունկ) վաճառվում են դեղատներում, իսկ սպառողների շրջանում պահանջարկ ունեցող մի շարք սնկատեսակներ (*Agaricus campestris*, *A. bisporus* - շամպինյոններ, *Pleurotus ostreatus* - կախասունկ) աճեցվում են ջերմոցներում:

Դեղագործական նպատակներով օգտագործվում է նաև հայկական իծի (*Vipera raddei*) և գյուրզայի (*Vipera lebetina*) թույնը:

Տնտեսական նշանակության բույսեր. Կերային բույսերից հայտնի են ավելի քան 2000 տեսակներ: Առավել արժեքավոր են կորնգանի (*Onobrychis*), երեքնուկի (*Trifolium*), առվույտի (*Medicago*), աղվեսագու (*Alopecurus*) ցեղերին պատկանող տեսակները: Եթերայուղատու բույսերը ներկայացված են շուրջ 150 տեսակներով, որոնցից առավել արժեքավոր են ուրցի (*Thymus*), անթառամի (*Helichrysum*), օշինդրի (*Artemisia*) և այլ ցեղերի տեսակներ: Հայաստանի տարածքում աճում են մոտ 120 տեսակի ներկատու բույսեր, որոնցից դեռ վաղ ժամանակներից ավանդաբար օգտագործվում են իշակաթնուկի (*Euphorbia*), դժնիկի (*Rhamnus*), կտտկենու (*Sambucus*), տորոնի (*Rubia*) և այլ ցեղերի տեսակները: Հայտնի են նաև բազմաթիվ վիտամինատու, դաբաղանյութեր պարունակող և խեժատու բույսեր:

Վայրի բույսերի գենետիկական բազմազանությունը. Հայաստանում հայտնաբերված են մշակաբույսերի մեծ քանակի վայրի ցեղակիցներ (հացազգիներ, պտղատու ծառեր և այլն), որոնք գենետիկական նյութի առանձնահատուկ աղբյուր են հանդիսանում: Հայաստանի տարածքը դեռևս Ն.Ի.Վավիլովի կողմից գնահատվել է որպես մշակաբույսերի առաջացման հարուստ օջախներից մեկը: Այս հարուստ գենոֆոնդը օգտագործվում է բուժիչ, երաշտադիմացկուն, ցրտադիմացկուն և օգտակար այլ հատկանիշներով օժտված նոր սորտերի ստացման համար:

Ներկայումս հանրապետության տարածքը պատկանում է մշակաբույսերի (փափուկ և կարծր ցորեն, ոլոռ, ոսպ, խաղող) առաջացման Առաջավոր Ասիական կենտրոնին, որն առաջին հերթին առանձնանում է ցորենի տեսակների և էկոտիպերի բազմազանությամբ: Գիտությանը հայտնի ցորենի չորս վայրի տեսակներից Հայաստանի տարածքում աճում է երեքը՝ վայրի միահատիկը (*Triticum boeoticum* Boiss.), ուրարտու միահատիկը (*T.urartu* Thum. ex Gandil.) և վայրի երկհատիկավոր արարատյանը (*T. araraticum* Jakubz.): Վերջին երկուսն առաջին անգամ հայտնաբերվել են Հայաստանում: *T.araraticum* տեսակը համարվում է մշակովի *T.timofeevii* Zhuk. տեսակի նախահայրը, *T. boeoticum* ցորենը՝ մշակովի *T.monococcum* տեսակի: *T.urartu* տեսակն աճում է երրորդական կարմիր կավային հողերի և բազալտների վրա ծովի մակարդակից 1300-1400 մ բարձրության վրա՝

որպես կիսաչորային բուսականության բաղադրիչ և դոնոր է հանդիսանում պոլիպլոիդ ցորենների համար: Այլ վայրի ցորենների հետ մեկտեղ այդ տեսակը պահպանվում է էրեբունի արգելոցում:

Հանրապետության տարածքում հանդիպում է այծակնի ինը տեսակ՝ իրենց ներտեսակային հարուստ բազմազանությամբ: Սելեկցիայի տեսակետից արժեքավոր է հատկապես *A. tauschii* Cosson (*A. squarrosa* L.) դիպլոիդ ինքնափոշոտվող տեսակը, որը հանդիպում է կիսաանապատային և տափաստանային գոտիներում՝ ծովի մակարդակից 500-1650 մ բարձրության վրա: Այծակնի մնացած ութ տեսակները համարվում են չորադիմացկունության, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկունության և այլ հատկանիշների գենների կրողներ: Վայրի հացազգիներից Հայաստանում հանդիպում են նաև աշորայի (*Secale*) երկու (36 տարատեսակներով), ինչպես նաև վայրի գարու (*Hordeum*) ութ տեսակ:

Հանրապետության տարածքում աճում են հատիկալնդեղեն մշակաբույսերի բազմաթիվ վայրի տեսակներ՝ բանջարանոցային (280 տեսակ), յուղատու, դեղատու, համեմունքային բույսերի վայրի ազգակիցներ: Պտղահատապտղայիններից Հայաստանի տարածքում աճում են խնձորենու, տանձենու, արոսենու, սզնու, սալորենու, ծիրանենու, կեռասենու, սերկևիլի, պիստակենու, նռնենու, նշենու, խաղողի, մորենու, հաղարջենու և այլ տեսակների վայրի ազգակիցները:


1.3. 2009-2013 թթ. Հայաստանի կենսաբազմազանության վիճակի հիմնական փոփոխություններն ու միտումները

1.3.1. Լանդշաֆտներ և էկոհամակարգեր. Հայաստանում առկա են 10 լանդշաֆտային գոտիներ (նկար 1): Առկա են նաև մի շարք ինտրազոնալ էկոհամակարգեր (ջրաճահճային, ժայռային, փլվածքային, քարակուտակային), որոնք տարածված են գրեթե բոլոր բարձրունքային գոտիներում:

ա/ Կիսաանապատային գոտի. Զբաղեցրած տարածքի 80-90 %-ը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով, որի դեպքում հաճախ նկատվում է ոռոգման և հողի մշակման կանոնների խախտում, ինչը հանգեցրել է հողերի էրոզիայի և երկրորդային աղակալման երևույթների զարգացմանը:

Վերջին տարիներին Արարատյան դաշտում նոր տազնապալի հիմնախնդիր է առաջացել՝ կապված ստորերկրյա (արտեզիան) ջրերի ծավալների փոքրացման և ջրաշերտերի իջեցման հետ: Ինչպես ցույց է տրված <<Մաքուր էներգիա և ջուր>> ծրագրի (ԱՄՆ ՄԶԳ, 2014) շրջանակներում կատարված <<Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատման ուսումնասիրություն>> փաստաթղթում, 2013 թ. դրությամբ արտեզյան ավազանի դրական ճնշման գոտում շահագործվել է 1235 հորատանցք՝ 50.5 մ³/վրկ ջրաելքով, որով խախտվել է հորատանցքերով ջրի օգտագործման համար սահմանված միջին տարեկան 20.8 մ³/վրկ ջրաքանակը՝ գերազանցելով այն 2.4-4.5 անգամ: Հիմնականում արտեզիան

ջրերի օգտագործման ոլորտը ձկնաբուծությունն է, որի կարիքների համար ջրառը կազմել է 35.5 մ³/վրկ:



Նկար 1. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Արդյունքում՝ չորացման ենթարկվեցին վերին հողաշերտերը, նկատելի են դարձել բնական էկոհամակարգերի փոփոխության միտումներ՝ ֆլորայի և ֆաունայի տեսակափոխության տեմպերի արագացում, անապատացման երևույթների զարգացում: Բնական էկոհամակարգերի դեգրադացման ցայտուն օրինակ է մինչև 20-րդ դարի կեսը այստեղ գոյություն ունեցած աղուտային ճահիճների արհեստական

չորացումը (գյուղատնտեսական նպատակներով հողերի օգտագործման, ինչպես նաև սանիտարա-համաճարակային վիճակի բարելավման նպատակով), որի պատճառով վերացել են միայն այս էկոհամակարգին բնորոշ արժեքավոր հազվագյուտ բույսեր և կենդանիներ: Այժմ տեղի է ունենում պահպանված ճահճուտների ինքնաբուխ չորացում, մի շարք ջրաճահճային բույսերի և թռչունների բնակության միջավայրի կորուստ և ամբողջ գերխոնավ էկոհամակարգի կազմալուծում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում եզակի և քիչ ուսումնասիրված Արմավիրի մարզի հարավ-արևմուտքում՝ Արաքս գետի հովտում գտնվող, բույսերի, սնկերի և կենդանիների տեսակներով հարուստ կիսաանապատային լանդշաֆտը: Տեղանքի աշխարհագրական պայմանների շնորհիվ այստեղ պահպանվել են հանրապետության ֆլորայի, միկոբիոտայի և ֆաունայի հազվագյուտ, անհետացող և էնդեմիկ տեսակներ, որոնք այլ լանդշաֆտներում գրեթե չեն հանդիպում: Հայաստանում տարածված 51 տեսակի սողուններից շատերը հանդիպում են այստեղ, որոնցից առավել վտանգված են միջերկրածովային կրիան (*Testudo greaca*), անդրկովկասային մողեսիկը (*Eremias pleskei*), պարսկական կլորագլուխը (*Phrynocephalus horvathi*), հանրապետության տարածքում արագորեն կրճատվող Շտրաուխի մողեսիկը (*Eremias shtrauchi*), ոսկեգույն մաքույան (*Trachylepis septemtaeniata*), անդերկովկասյան վիշապիկը (*Eryx jaculus*) և այլն:

Մերձարաքսյան հատվածում տեղ-տեղ կան ավազային կուտակումներ, իսկ ցածրադիր աղակալված հողերի վրա ձևավորվել են աղուտային անապատները: Սրանց սպառնացող հիմնական վտանգը շինարարական նպատակներով ավազի արդյունահանումն է: Ավազային անապատի առավել հետաքրքիր հատվածը՝ ջուզգունային (*Calligonum*) անապատը միակ տեղամասն է Փոքր Կովկասում, որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները: Այդ տարածքը ընդգրկված է <<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրի մեջ:

Հայաստանի կիսաանապատային ցամաքային էկոհամակարգերում գրանցված է ողնաշարավոր կենդանիների 101 (երկկենցաղներ՝ 4, սողուններ՝ 30, թռչուններ՝ 23, կաթնասուններ 44) և անողնաշարների 1687 տեսակ (փափկամարմիններ՝ 59, սարդակերպեր 97, միջատներ՝ 1531): Այստեղ հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ՝ միջերկրածովյան, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ *Porphiophora hamelii* արարատյան որդանի գոյությունը:

Կիսաանապատներում գյուղատնտեսական հողատեսքերի ընդարձակման պատճառով տեղի է ունենում թռչունների տեսակային կազմի կրճատում (սևափոր դոլոն-*Pterocles orientalis*, փոքր արտույտ-*Calandrella brachydactyla*), իսկ կիսաանապատային լանդշաֆտները պտղատու այգիներով փոխարինելու շնորհիվ՝ տեսակափոխություն (ամուրիկ-*Fringilla coelebs*, կարմրակատար-*Carduelis carduelis*):

Կիսաանապատային էկոհամակարգերը և աճելավայրերը 623.14 հա ընհանուր տարածքով պահպանության են վերցված <<Էրեբունի>> և <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցներում, <<Արևիկ>> ազգային պարկում և <<Որդան կարմիր>> ու <<Գոռավանի ավազուտներ>> պետական արգելավայրերում:

բ/ Տափաստանային գոտի. Այն Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000 մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500 մ: Գոտին ստորին մասում տիպիկ տափաստանային է, վերին մասում՝ մարգագետնատափաստանային: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ և տեսակային կազմի հարստությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է: Կենդանիների բնորոշ տեսակներից են՝ ողնաշարավոր կենդանիների 96 (երկկենցաղներ՝ 4, սողուններ՝ 32, թռչուններ՝ 19, կաթնասուններ՝ 41) և անողնաշարների 992 տեսակ (փափկամարմիններ՝ 81, սարդակերպեր՝ 126, միջատներ՝ 785): Անողնաշարների տափաստանային ֆաունան ծագմամբ ավելի երիտասարդ է և համեմատաբար ավելի միատեսակ:

Տափաստաններում հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքները, նաև հրդեհները բացասաբար են ազդում բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը:

Տափաստանային էկոհամակարգերի կողմից տրամադրվող բարիքները և ծառայությունները մինչ օրս գնահատված չեն: Թեպետ տեղաբնակները ակտիվորեն հավաքում և անձնական կարիքների ու ներքին շուկայում վաճառելու համար օգտագործում են տափաստանային բազմաթիվ դեղատու և ուտելի բույսեր, իսկ թեք լեռնալանջերին տեղակայված տափաստանները նույնիսկ օգտագործվում են որպես արոտներ խոտհարքներ, սակայն տափաստանների մեծ մասը, հատկապես մեղմաթեք լանջերն ու հարթավայրերը, ներկայումս հիմնականում հերկվել են և օգտագործվում են երկրագործության նպատակով: Բնական վիճակում պահպանվել են միայն առանձին հատվածներ՝ առավել զառիթափ և քարքարոտ լանջերին, և փոքր կտորներ լեռնային սարահարթերի դաշտերի միջև:

Ներկայումս Հայաստանում տափաստանները կորցնում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ ջրային պաշարների պահպանման և գոլորշիացման կարգավորումը, հողապաշտպան ազդեցությունը, արոտավայրային դիգրեսիայի ռիսկի նվազումը, ջրային և քամու էրոզիայի կանխարգելումը, աղտոտումների չեզոքացումը, այդ թվում՝ հողում, բիոտայում և գյուղատաղրանքում, Հայաստանի


Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակների աճելավայրերի/ապրելավայրերի պահպանումը, բնական բուսականության վերարտադրման շնորհիվ փոշոտիչների քանակի ապահովումը և այլն:

Տափաստանային էկոհամակարգերի պահպանությունը կատարվում է մի շարք ԲՀՊՏ-ներում՝ <<Խոսրովի անտառ>> արգելոց, <<Սևան>>, <<Դիլիջան>>, <<Արփի լիճ>> և <<Արևիկ>> ազգային պարկեր, մի շարք արգելավայրեր, որոնց մակերեսը կազմում է 61 391.7 հա, ինչը ԲՀՊՏ-ների ողջ տարածքի 15.8 %-ն է:


գ/ Անտառային գոտի. Համաձայն 2011 թվականին GIZ-ի կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի անտառածածկի մակերեսը կազմում է 332.333 հա կամ երկրի ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը:

Անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունների ու բարիքների ծավալը և քանակը չափազանց բարձր է: Սակայն անտառային էկոհամակարգերի վրա մարդածին ազդեցության առկա պայմաններում (անտառների գերշահագործում, անկանոն հատումներ, արածեցում, խոտհունձ, հողազավթումներ և այլ) կրճատվում են անտառային տարածքները, տեղի են ունենում տեսակային կազմի և կառուցվածքային փոփոխություններ, ծառուտները կորցնում են բնական վերականգնման ունակությունը և իջնում է դրանց արտադրողականությունը:


Սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառհատումները դեռևս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը: Փայտանյութը շարունակում է մնալ անտառամերձ տարածքների բնակչության վառելիքի հիմնական աղբյուրը: Ըստ 2010 թ. <<Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից բնակչության շրջանում կատարված սոցիալոգումների՝ սպառված վառելափայտի պահանջարկը կազմել է 709 851 խմ, որն առավել քան 20 անգամ գերազանցում է օրինական հատումներից իրացված փայտանյութի ծավալը: Ստորև բերվում են պաշտոնական տվյալներ փայտանյութի ծավալների մթերման և իրացման մասին (նկար 2,3): Ընդհանուր առմամբ՝ 2008-2012 թթ. նկատվում է ապօրինի ծառահատումների ծավալների զգալի նվազում (նկար 4, 5), որն արդյունք է հիմնականում գազամատակարարման համակարգի զարգացման: Ապօրինի անտառհատումների նվազեցման միտումը, ըստ <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի պաշտոնական տվյալների, պահպանվել է նաև 2013 թ.-ին: Ապօրինի անտառհատումների կանխարգելման խնդրում որոշ դրական ազդեցություն է ունեցել 2011 թ. ՀՀ կառավարության N 1535-Ն որոշումը, համաձայն որի անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքներին թույլատրվում է սեփական միջոցներով մթերել և անվճար ձեռք բերել մինչև 8 խմ թափուկ վառելափայտ:




Նկար 2. Հայաստանում փայտանյութի մթերման ծավալները (մ³) (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ <<Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ)



Նկար 3. Հայաստանում փայտանյութի իրացման ծավալները (մ³) (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ <<Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ)



Նկար 4. Անտառային տարածքներում 2008-2012 թթ.-ի ընթացքում հայտնաբերված և արձանագրված ապօրինի հատումները (հատ ծառ) (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ <<Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ)




Նկար 5. 2009-2013 թթ. հայտնաբերված ապօրինի հատված ծառերի քանակը (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ <<Հայաստան>> ՊՈԱԿ)

Այնուամենայնիվ Հայաստանին բնորոշ սակավ անտառածածկի պայմաններում անտառազրկումն էական սպառնալիք է, որը կործանարար հետևանքներ կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև եկամուտների նշանակալի կորստի պատճառ դառնալ՝ երկարաժամկետ ազդեցության ընթացքում էկոհամակարգային ծառայությունների ծավալների և քանակների կրճատման պարագաներում:

Վերջին տարիներին անտառային զանգվածների հատված տեղամասերում և դրանց հարող տարածքներում նկատվում է էկոհամակարգերի անկայունություն՝ ավելացել են հողմատապալ կամ ձնետապալ տարածքները, հողատարման, ծորակառաջացման, սողանքների, էրոզիոն-սելավային պրոցեսների ակտիվացման, աղբյուրների չորացման, փոշու ամպերի գոյացման և այլ երևույթներ, որոնք վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին:


Որպես անտառային էկոհամակարգերի որակական հատկանիշների փոփոխման հետևանք կարող են դիտվել վնասատուների (հատկապես տերևակեր միջատների) զանգվածային համաճարակները, ինչը պահանջում է անտառապաշտպանական հրատապ աշխատանքների իրականացում: Ընդհանուր առմամբ՝ 2003-2013 թթ. ընթացքում անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն քիմիական պայքարի աշխատանքներն իրականացվել են 76 786 հա տարածքում (նկար 6), որից 2009-2013 թթ.՝ շուրջ 23242.5 հա վրա (22 828 հա վրա՝ ավիացիոն պայքարի եղանակով):




Նկար 6. 2009-2013 թթ. վնասատուների և հիվանդությունների դեմ իրականացված պայքարի միջոցառումներ (հազ. հա), (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ <<Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ)

Հարկ է նշել, որ վերոհիշյալ աշխատանքների առյուծի բաժինն իրականացվում է ավիացիոն քիմիական պայքարի միջոցով, ինչը շատ դեպքերում կործանարար է անտառային որոշ կենդանատեսակների գոյության համար: Անտառի վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն քիմիական պայքարը 2014 թ.-ին իրականացվել է ՀՀ Վայոց ձորի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի անտառային տարածքներում:

Ավելացել են անտառային հրդեհների ծավալները: Եթե 2003 թ. գրանցվել են հրդեհներ 3.92 հա անտառային հողերում, ապա 2013 թ.՝ 91.575 հա անտառային հողերում: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1998-2013 թթ. Առավել հաճախ անտառային հրդեհներ գրանցվել են 2006, 2010 և 2011 թթ.-ին: 1998-2013 թթ. այրված անտառային տարածքները 2875.3 հա, որից 2323.9 հա անտառաձածկ են: Համաձայն պաշտոնական տեղեկատվության՝ 2009-2013 թթ. արձանագրվել է անտառային հրդեհների 198 դեպք՝ 1616.721 հա տարածքի վրա (նկար 7, 8): Անտառային հրդեհների առաջացման հիմնական պատճառը հարակից տարածքների գյուղատնտեսական հողատեսքերի այրումն է, որոնց դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են բարդ ռելիեֆը, անտառային ճանապարհային ցանցի անմխիթար վիճակը, հրդեհների մարման համապատասխան տեխնիկական սարքավորումների բացակայությունը և այլն:




Նկար 7. 2009-2013 թթ. ՀՀ անտառներում և անտառային հողերում արձանագրված հրդեհների քանակը (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ ՀՀ անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ)



Նկար 8. 2009-2013 թթ. ՀՀ անտառներում և անտառային հողերում հրդեհված տարածքների ընդհանուր մակերեսը (հա) (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ ՀՀ անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ)

Ինչպես հայտնի է՝ անտառային էկոհամակարգերի դեգրադացման աստիճանի գնահատման համար չափանիշներ են հանդիսանում հրդեհից մասնակիորեն կամ ամբողջովին ոչնչացված, վնասատուների և հիվանդությունների պատճառով բնական դիմադրողականությունը կորցրած, չորացող կամ արդեն չորացած անտառը, բնական վերածի ընդունակությունից զուրկ, հիմնովին ծառահատված անտառային տարածքները, էրոզացված մեծ մակերեսի վրա տեղակայված նոսրուտները: Նշված գրեթե բոլոր չափանիշները բնութագրում են Հայաստանի անտառային էկոհամակարգերի ներկա վիճակը, որի շտկումը պահանջում է երկարաժամկետ, հետևողական, բազմակողմանի, կշռադատված և ֆինանսատար աշխատանքների ճիշտ պլանավորում ու իրականացում: Այս ամենի հետ մեկտեղ՝ վերջին տարիներին նվազել է նաև պետական բյուջեից <<Հայաստան>> ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը: Եթե 2008-2009 թթ. պետական բյուջեից տարեկան ֆինանսավորումը կազմել է 1.3 մլրդ դրամ, ապա 2013 թ. այն նվազել է մինչև 734 մլն. դրամ (նկար 9):

Անտառային պաշարների կայուն օգտագործման կազմակերպումը կարող է հանդիսանալ լրացուցիչ եկամուտների աղբյուր, միևնույն ժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով հարակից համայնքների բնակչության զբաղվածության և կենսամակարդակի բարձրացման գործում:



Նկար 9. 2003-2013 թթ. «Հայաստան» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը (Աղբյուրը՝ ՀՀ ԳՆ «Հայաստան» ՊՈԱԿ)

Հայաստանի անտառների 75 %-ը կառավարվում է ՀՀ ԳՆ «Հայաստան» ՊՈԱԿ-ի, իսկ 25 %-ը (ԲՀՊՏ-ների անտառային զանգվածներ)՝ ՀՀ ԲՊՆ-ի կողմից: «Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվում են 13 անտառային բնույթի արգելավայրեր, որոնցում ներկայումս անհրաժեշտ է իրականացնել սահմանների ճշգրտում և կառավարման պլանների մշակում: «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում գտնվող «Արզական-Մեղրաձոր» արգելավայրում արդեն իրականացվել են քարտեզագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, 2014 թ. նախատեսվում է իրականացնել կառավարման պլանների մշակման աշխատանքներ: ՀՀ ԲՊՆ ենթակայության ներքո գտնվող ԲՀՊՏ-ներում գերակշռում են անտառածածկ տարածքները: Դրանցից են «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցները, «Դիլիջան», «Սևան», «Արևիկ» ազգային պարկերը, մի շարք արգելավայրեր, որտեղ անտառային լանդշաֆտները զբաղեցնում են 110 269.2 հա՝ կազմելով ԲՀՊՏ-ների ընդհանուր տարածքի 28.5 %-ը:

դ/ Մերձալպյան և ալպյան մարգագետնային գոտի. Մերձալպյան և ալպյան լանդշաֆտները, հանդիսանալով արժեքավոր գենո և ցենոֆոնդի կրողներ, հանրապետության խոտհարքի և ամառային արոտների հիմնական վայրերն են: Գյուղատնտեսական հանդակների կառուցվածքում խոտհարքները կազմում են 10 %, իսկ արոտավայրերը՝ 49 %: ՀՀ ԳՆ տվյալների համաձայն՝ Հայաստանում առկա է 1 մլն. 118 հազար հա արոտավայր (բոլոր լանդշաֆտային գոտիներում), որից արդյունավետ օգտագործվում է միայն 30 տոկոսը: Ներկայումս անասնապահական

մթերքների, մասնավորապես՝ տարեկան արտադրվող կաթի շուրջ 70 %-ը, մսի՝ կեսից ավելին, բրդի ողջ քանակը ստացվում է արոտային կերերի օգտագործումից:

Ներկայումս բնական կերհանդակների կենսաբանական և տնտեսական վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության արոտավայրերի շուրջ 57 %-ը դեգրադացված են (հողատարված, ոտնահարված, կազմալուծված): Դրա հիմնական պատճառը արոտավայրերի անկանոն օգտագործումն է, ինչպես նաև խնամքի և բարելավման միջոցառումների գրեթե իսպառ բացակայությունը: Բացի այդ, այսօր խիստ անհամաչափ են օգտագործվում գյուղամերձ և հեռագնա արոտավայրերը: Եթե վերջիններն օգտագործվում են թերբեռնված կամ գրեթե չեն օգտագործվում, ապա գյուղամերձները, ընդհակառակը՝ խիստ գերծանրաբեռնված են:

Այս գոտու ֆաունայի կազմում գրանցված է ողնաշարավոր կենդանիների 58 (երկկենցաղներ՝ 3, սողուններ՝ 10, թռչուններ՝ 12, կաթնասուններ՝ 33) և անողնաշարների 508 տեսակ (փափկամարմիններ՝ 49, սարդակերպեր՝ 12, միջատներ՝ 447):


ԲՀՊՏ-ների համակարգում մերձալպյան ու ալպյան մարգագետինները կազմում են 87 516.24 հա՝ զբաղեցնելով ընդհանուր տարածքի 22.6 %-ը: Դրանք առավել լավ են ներկայացված <<Արփի լիճ>> և <<Արևիկ>> ազգային պարկերում, <<Ձանգեզուր>>, <<Խուստուփ>>, <<Արագածի ալպյան>>, <<Սև լիճ>> և <<Ջերմուկի ջրաբանական>> պետական արգելավայրերում:

Ե/ Ինտրագոնալ էկոհամակարգեր. Ինտրագոնալ էկոհամակարգերի ընդհանուր մակերեսը շատ դժվար է որոշել, քանի որ դրանք հիմնականում փոքր տարածքներով առկա են ամենուր: Սրանց են պատկանում գերխոնավ կամ ջրաճահճային տարածքները, որոնք, համաձայն <<Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես ջրլող թռչունների բնադրավայրերի մասին>> կոնվենցիայի (Ռամսար, 1971) սահմանման՝ ներկայացված են լճերով, լճակներով, գետերով, ջրամբարներով, ջրատարներով, ժամանակավորապես ջրածածկ տարածքներով, ճահիճներով և տորֆավայրերով:

Հանրապետության գետերը Հարավային Կովկասի խոշոր գետերի՝ Արաքսի և Քուռի վտակներն են: Հայտնի են շուրջ 9500 գետ և գետակ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 23 հազար կմ (նկար 10): Գետերի միջին տարեկան հոսքը կազմում է 6.3 մլրդ մ³, իսկ մակերևութային ջրերի ընդհանուր ծավալը՝ 7.2 մլրդ մ³: Այս ռեսուրսների մի մասը հոսում է հարևան երկրներ:

Հանրապետությունում սահմանված են վեց ջրավազանային կառավարման տարածքներ: Վերջին հինգ տարվա ընթացքում պատրաստվել են մի շարք գետավազանային կառավարման պլանների նախագծեր, որոնց ինտեգրումից հետո

կմշակվեն համապատասխան ջրավազանային կառավարման պլանները՝ ջրային էկոհամակարգերի կայուն օգտագործման և պահպանման առումով:



Նկար 10. Հայաստանի հիմնական գետավազանները (Աղբյուրը՝ Զրային պետական կադաստր 2014 թ.)

Ներքին ջրերի շարքում առանձնահատուկ տեղ են գրավում լճերն ու լճակները: Հայաստանի տարածքում, ըստ նորագույն ջրաբանական ուսումնասիրությունների, հաշվում է շուրջ 250 լիճ, որոնց կեսից ավելին ժամանակավոր են և պարբերաբար չորանում են: Ամենամեծը Սևանա լիճն է, որին հաջորդում են Արփի, Սև և Ակնա լճերը: Լճերի ընդհանուր ջրային պաշարները գնահատվում են 39.8 մլն մ³:

Սևանա լճի ջրային ռեսուրսները տարիներ շարունակ օգտագործվել են տնտեսական նպատակներով, որի արդյունքում լճի էկոլոգիական վիճակը աստիճանաբար վատացել է: 1999 թ. լճի մակարդակն իր նախնական նիշի համեմատ իջել էր 19.3 մ: Սևանա լճում ընթացող էվտրոֆացման երևույթները կանխելու և լճի վիճակը բարելավելու նպատակով 2002 թ.-ից սկսվել են աշխատանքներ լճի ջրի մակարդակի բարձրացման ուղղությամբ (աղյուսակ 2): 2013 թ. օգոստոսի 1-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը հավասարվել է 1900.52 մ նիշին, մակերեսը կազմել է 1278.73 կմ², ծավալը՝ 38.20 կմ³: Ընդհանուր առմամբ 2014

թ. հունվարի 1-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը 2002 թ. հունվարի 1-ի համեմատությամբ բարձրացել է 3.84 մետրով:

Աղյուսակ 2.

Սևանա լճի մակարդակի փոփոխությունը 2002-2013 թթ .

Տարեթիվ	Մակարդակ մ.ծ.մ	2007	1898,8
2002	1896.32	2008	1899,2
2003	1896.76	2009	1899.34
2004	1897.24	2010	1899.77
2005	1898.07	2012	1900.10
2006	1898.23	2013	1900.16

Գերխոնավ տարածքներից են Արաքս գետի հովտում առկա ճահճային գոյացումները: Հայկական կողմում հայտնի է Խոր Վիրապի խոնավ տարածքը, որը գտնվում է Արաքս գետի հին հունի տեղում, ինչպես նաև Մեծամոր ճահճային գոյացությունների համակարգը, որի մեջ մտնում են Այդր լիճը, Սևջուր գետը և մոտակա ճահիճները: Հայաստանի տարածքում ճահիճներ հանդիպում են նաև Մասրիկի հովտում, Սևանի թերակղզու մոտ, ինչպես նաև ռելիկտային ծագում ունեցող ճահճա-լճային գոյացումները Լոռվա սարահարթի մարգագետիններում: Ընդհանուր առմամբ երկրում ճահիճները և տորֆավայրերը զբաղեցնում են 42 կմ²:

Ռամսարի կոնվենցիայի Միջազգային նշանակության խոնավ տարածքների ցանկում ներառված են Սևանա լիճը, Արփի լիճը և Խոր Վիրապ ջրաճահճային տարածքը, որոնք ներառված են նաև Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում: Ընդհանուր առմամբ ջրային ու խոնավ տարածքների մակերեսը ԲՀՊՏ-ների համակարգում կազմում է 127 254.08 հա, կամ դրանց ամբողջ տարածքի 32.9 %-ը, որի զգալի մասը պատկանում է <<Սևան>> ազգային պարկին՝ 124 759.0 հա:

1.3.2. Ֆլորա և բուսականություն. Հայաստանի էնդեմիկ բույսերի նախկին կազմից (124 տեսակ) հանվել է 9 տեսակ՝ հաշվի առնելով դրանց լայն տարածվածություն ունենալու փաստը: Միաժամանակ, կարգաբանական նոր հետազոտությունների շնորհիվ, էնդեմիկների ցանկը լրացվել է 29 տեսակով, որոնց մեծ մասը գիտության համար նոր նկարագրված են, իսկ մյուսների համար ճշգրտվել է տարածվածությունը: Այսպիսով, ներկայումս Հայաստանի ֆլորայի կազմում առկա է 144 էնդեմիկ տեսակ (ամբողջ ֆլորայի 3.8 %-ը) (աղյուսակ 3): Հայաստանի տարածքում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ (աղյուսակ 4, նկար 11):

Վերջին տարիներին հանրապետության բուսաբանների կողմից կատարվել է նաև Հայաստանի տարածքում ինվազիվ և էքսպանսիվ բույսերի առաջնային գնահատումը: Առավել տագնապալի է 77 ագրեսիվ տեսակների տարածումը, որոնցից 38-ը ներթափանցել են բնական էկոհամակարգեր և սպառնում են տեղական բուսական բազմազանությանը:

Աղյուսակ 3.

Հայաստանի էնդեմիկ բույսերի բաշխվածությունը ըստ ընտանիքների և ցեղերի


Ընտանիք	Էնդեմիկներ	Ցեղ	Էնդեմիկներ
Վարդագգիներ (Rosaceae)	30	Տանձենի (Pyrus)	10
Բարդաձողկավորներ (Asteraceae)	27	Պսեֆելլուս (Psephellus)	8
		Տերեփուկ (Centaurea)	7
Բակլազգիներ (Fabaceae)	15	Գազ (Astragalus)	12
Հացազգիներ (Poaceae)	13		
Մեխակազգիներ (Caryophyllaceae)	10		
Խլածողկազգիներ (Scrophulariaceae)	8	Խոնդատ (Verbascum)	4
Խաչածողկավորներ (Brassicaceae)	7	Լոջուն (Isatis)	3
Կակաչազգիներ (Papaveraceae)	5	Կակաչ (Papaver)	5
Շնդեղազգիներ (Colchicaceae)	4		
Այլ ընտանիքներ	26		

Աղյուսակ 4

Հայաստանի ֆլորիստիկ շրջանների համեմատական բնութագիրը

h/h	Ֆլորիստական շրջանը	Տեսակների թիվը	Բուսականության հիմնական տիպերը	Բարձունքային սահմանները մ.ծ.մ.	Էնդեմիկների քանակը	ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների թիվը
1.	Վերին Ախուրյանի	880	տափաստաններ, մարգագետնա- տափաստաններ, մարգագետիններ	1700-3100	4	25
2.	Շիրակի	1126	կիսաանապատներ, տափաստաններ, մարգագետիններ	900-2400	15	39
3.	Արագածի	916	անտառներ, մարգագետնա- տափաստաններ, մերձալպյան և ալպյան մարգագետիններ	1400-4095	10	19
4.	Լոռու	1280	մարգագետիններ, անտառներ, ջրածառային	1400-2550	7	47
5.	Իջևանի	1160	նոսրանտառներ, անտառներ, մարգագետիններ	400-3100	19	71
6.	Ապարանի	1320	տափաստաններ, մարգագետնա- տափաստաններ, անտառներ	1300-3100	17	26
7.	Սևանի	1660	տափաստաններ, մարգագետիններ, կաղնու անտառներ և գիհու նոսրանտառներ	1850-3500	28	48
8.	Գեղամա	820	մերձալպյան և ալպյան մարգագետիններ, կաղնու անտառներ	1700-3590	20	14
9.	Երևանի	1920	կիսաանապատներ, աղուտացված ճահիճներ, անապատ, տափաստաններ, գիհու նոսրանտառներ	700-1700	46	144
10.	Դարեղեգեսի	1740	կիսաանապատներ, անապատներ, անտառներ, մարգագետիններ, պետրոֆիլ բուսականություն	900-3500	38	98

11.	Զանգեզուրի	2000	կիսաանապատներ, անտառներ, տափաստաններ, մարգագետիններ, նոսրանտառներ	600-3900	41	95
12.	Մեղրու	1680	կիսաանապատներ, անտառներ, նոսրանտառներ, մարգագետիններ	400-3100	26	112



Նկար 11. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)

2007-2009 թթ. ֆլորիստիկ ուսումնասիրությունների վերլուծությունները մեծ ծավալներով իրականացվել են <<Հայաստանի Կարմիր գրքի լրամշակում>> ծրագրի շրջանակներում, որի ընթացքում առկա տվյալների և դաշտային նոր հետազոտությունների հիման վրա պատրաստվել և ՀՀ կառավարության 2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Այդ նպատակով ՀՀ ամբողջ տարածքում կատարվել է կենդանական և բուսական աշխարհի հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող տեսակների արդի

վիճակի, էկոլոգիական հատկանիշների քանակական և որակական ցուցանիշների, տարածվածության բացահայտում, ապրելավայրերի վիճակի գնահատում և քարտեզագրում, տեղեկատվական բազայի ստեղծում: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են անոթավոր բույսերի կրիտիկական, վտանգված և խոցելի կատեգորիաների 452 տեսակ (Հայաստանի ֆլորայի 11,89 %), որոնք անհավասարաչափ են բաշխված ՀՀ մարզերում (նկար 12): 223 տեսակի բույսեր պատկանում են անհետացող վիճակին մոտ գտնվող, քիչ մտահոգող և տվյալների անբավարարություն կատեգորիաներին: Բույսերի կատեգորիաները սահմանվել են ըստ ԲՊՄՄ-ի (IUCN) չափորոշիչների (աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

Բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կատեգորիաները

Կրիտիկական վիճակում գտնվողներ	CR	141
Վտանգվածներ	EN	248
Խոցելի տեսակներ	VU	63
Անհետացող վիճակին մոտ գտնվող տեսակներ	NT	21
Քիչ մտահոգող տեսակներ	LC	106
Տվյալների անբավարարություն	DD	96

Բույսերի Կարմիր գրքի վերանայված տարբերակում բարձրակարգ բույսերի քանակը ավելացել է 227 անունով: Նոր տեսակների ավելացման պատճառներն են՝

- տեսակները գնահատվել են միջազգային չափորոշիչներով.
- կրճատվել են տեսակների տարածման արեալները.
- կրճատվել է պոպուլյացիաների քանակը և դրանցում առանձնյակների թիվը.
- հայտնաբերվել են հազվադեպ հանդիպող նոր տեսակներ:

Կարմիր գրքի առաջին հրատարակությունում (1989) ընդգրկված 387 տեսակների վերագնահատման արդյունքում 159-ը դուրս են մնացել հետևյալ պատճառներով.

- տեսակը համեմատաբար լայնորեն տարածված է Հայաստանում և գոյության համար ուղղակի սպառնալիքները բացակայում են.
- հայտնաբերված են նոր աճելավայրեր և տեսակի գոյության համար ուղղակի սպառնալիքը վերացել է.
- տեսակի գոյությունը Հայաստանում չի հաստատվում փաստացի նյութով:

Բույսերի Կարմիր գրքում ներառվել են նաև սնկեր (40 տեսակ), որոնք ընդգրկված չեն եղել նախկին հրատարակությունում: Վերջիններս պատկանում են հետևյալ կատեգորիաներին.

- Անհետացած (EX) – 1 տեսակ.
- Կրիտիկական վիճակում գտնվող (CR) - 6 տեսակ.
- Վտանգված (EN) - 15 տեսակ.
- Խոցելի (VU) - 12 տեսակ:

Նշված սնկերից 5-ը ընդգրկված են սնկերի Եվրոպական Կարմիր ցուցակում: Բացի այդ, Եվրոպայում սնկերի վտանգված տեսակների քարտեզում ներկայացված են Հայաստանում հայտնաբերված 10 տեսակի սնկեր:

Իրականացվել են նաև հետազոտություններ քարաքոսերի բազմազանության վերաբերյալ, որոնց արդյունքում ներկայումս Հայաստանում հայտնի են քարաքոսերի 462 տաքսոն և քարաքոսաֆիլ սնկերի (lichenicolous fungi) 2 տեսակ: Ստեղծվել է Հայաստանի քարաքոսերի և առցանց քարաքոսաբանության վերաբերյալ վեբ-կայք՝ www.lichenology.am:

2010 թ-ին ավարտվել է CEPF ծրագիրը, որի արդյունքում Միջազգային Կարմիր Ցուցակում ներառվել են Կովկասի էկոտարածաշրջանի ֆլորայի 375 էնդեմիկ տեսակներ, այդ թվում՝ 109-ը Հայաստանից:



Նկար 12. ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների քանակը ըստ Հայաստանի մարզերի

Հայաստանում տարածված բուսական տիպերի առաջացումը, ձևավորումը և բուսաաշխարհագրական տարածումը հիմնականում պայմանավորված է երկրի լեռնային ռելիեֆով և կլիմայական պայմաններով (նկար 13): Բուսականությունն աչքի է ընկնում կենսացենոզների առատությամբ, տեսակային հարուստ կազմով, էնդեմիզմի բարձր մակարդակով (Հավելված 1):



Նկար 13. ՀՀ բուսական ծածկույթը

1.3.3 Ֆաունա. Ողնաշարավոր կենդանիների տեսակային կազմի պարզաբանման գործընթացը ներկայումս կարելի համարել ավարտված, ինչը չի կարելի ասել անողնաշար կենդանիների մասին, որոնք ենթադրաբար ուսումնասիրված են 30 %-ով: Հանրապետության կենդանական աշխարհի կազմում ողնաշարավոր կենդանիները ներկայացված են 549 տեսակով, դրանցից 93-ը կաթնասուններ են (նախկինում նշված 83 տեսակի փոխարեն), 357-ը՝ թռչուններ (նախկինում նշված 353 տեսակի փոխարեն), 53-ը՝ սողուններ, 7-ը՝ երկկենցաղներ և 39-ը՝ ձկներ: Հայաստանում հայտնաբերվել է աշխարհի ամենափոքր ցամաքային կաթնասունը՝ սրնչակը (*Suncus etruscus*): Անողնաշարների 90 %-ը կազմում են միջատները (Insecta): Հայաստանի կենդանական աշխարհին աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով (մոտ 500 տեսակ՝ Ֆաունայի շուրջ 3 %-ը), որի գերակշռող մասը անողնաշարներ են (Հավելված 2, 3):

Ֆաունայի ներկայացուցիչների առավել խոցելի տեսակների վիճակի վերաբերյալ վերջին հնգամյակում Հայաստանում արձանագրվել են որոշակի հուսադրող դրական փոփոխություններ: Մի շարք տեսակների վիճակը կայուն բարվոք է, օրինակ՝ արջի (*Ursus arctos*), գայլի (*Canis lupus*), չախկալի (*Canis aureus*), կրծողների որոշ պոպուլյացիաների: Վիճակը ոչ միայն կայունացել է, այլև որոշակի դրական միտումներ են նկատվում Կովկասյան ընձառյուծի (*Pantera pardus ciscaucasica*), հայկական մուֆլոնի (*Ovis orientalis gmelinii*), բեզուարյան այծի (*Capra aegargus*), թռչունների մի շարք տեսակների պոպուլյացիաներում: Ըստ ԲՀՀ (WWF) տվյալների Հայաստանում 2004 թվականին արձանագրվել է 2-3 ընձառյուծ, 150-200 մուֆլոն և 1500-2000 բեզուարյան այծ, իսկ 2014 թվականին հաշվառվել է 4-6 ընձառյուծ, 350-400 մուֆլոն և 3200-3500 բեզուարյան այծ: Այսպես՝ մինչ օրս ընձառյուծին հաջողվել է լուսանկարել 2005, 2007, 2013 և 2014 թվականներին: Ի դեպ՝ 2013 թ.-ի սեպտեմբերից մինչև 2014 թ.-ի ապրիլը ԲՀՀ-ին (WWF) հաջողվել է թաքնված տեսախցիկների միջոցով կովկասյան ընձառյուծի 14 լուսանկարներ ստանալ, որոնց վերլուծությունները վկայում են, որ առնվազն մեկ արու և երկու էգ մոտ մեկ տարի բնակվում են Հայաստանի հարավում: Դա հույս է տալիս ակնկալելու, որ 2014 թ.-ին ընձառյուծները ձագեր կունենան, ինչն իր հերթին ավելի մեծ ուշադրություն և ջանքեր կպահանջի ընձառյուծի պահպանությունն ավելի արդյունավետ դարձնելու համար: Համաձայն ստացված լուսանկարների և դաշտային մոնիթորինգի տվյալների՝ ընձառյուծի որսատեսակների (բեզուարյան այծերի, Հայկական մուֆլոնների) քանակը նույնպես աճել է:

ASPB-ի տվյալներով՝ մինչև 2002 թ. <<Խոսրովի անտառ>> արգելոցում առկա սև անգղի (*Aegypius monachus*), Հայաստանի միակ պոպուլյացիայի, թվաքանակը տազնապալի կրճատվում էր, սակայն շնորհիվ կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումների (կերակրում, ձվերի և ճտերի պահպանություն) այս տեսակի թվաքանակի կրճատումը հաջողվեց ոչ միայն կասեցնել, այլև կայունացնել վիճակը: Այսպես, 2000-2002 թթ. գրանցվել էր սև անգղի 4 զույգ, 2003 թ.-ին՝ 6, 2004 թ.-ին՝ 7, 2005-2008 թ.-ին՝ ևս 7-8 զույգ, իսկ 2013-2004 թթ.՝ 11-12 զույգ:



Աղբյուր՝ WWF Հայաստանյան մասնաճյուղ

Սկսել է վերականգնվել Սևանա լճի թռչնաշխարհը: Ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ գոտիներում առաջացած ծանծաղուտների շնորհիվ բարելավվել են մի շարք թռչնատեսակների (սպիտակ փոքր տառեղ-*Egretta garzetta*, դեղին տառեղ-*Ardeola ralloides*, կվակվա-*Nycticorax nycticorax*, քաջահավ-*Plegadis falcinellus*, կոցարներ-*Haematopodidae*) կենսապայմանները և վերականգնվել կերահանդակները: 60 տարվա բացակայությունից հետո այստեղ նորից սկսել է բնադրվել մեծ ձկնկուլը (*Phalacrocorax carbo*): 2013 թ. ձմեռային հաշվառման ընթացքում գրանցվել է ջրլող թռչունների մեծ քանակություն, մասնավորապես սև փարփարի (*Fulica atra*) և կարմրակտուց սուզաբադի (*Netta rufina*): Դրա հետ մեկտեղ նկատվում է այն տեսակների քանակական նվազումը, որոնք առավելապես կապված են ափամերձ գոտու հետ:

Նոր տեղեկություններ են ձեռք բերվել տարբեր տեսակների տարածման վերաբերյալ, գրանցվել են նրանց գտնվելու նոր լոկալիտետներ, տեսակների տարածման սահմանների փոփոխություններ՝ ինչպես դեպի հյուսիս, այնպես էլ դեպի հարավ: Արարատյան դաշտում հայտնաբերվել են նոր լոկալիտետներ՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված միջատների 12 տեսակի համար: Հայաստանի ֆաունայի համար նորություն են իլիկաթիթեռի (*Hyles livornica*) հավաքները Մեղրիում, որի միգրացիայի գոտին ենթադրաբար գտնվում էր Հայաստանի տարածքից ավելի հարավ և արևմուտք: Այս տեսակը Հայաստանում կազմում է ոչ կայուն պոպուլյացիաներ, որի պատճառով շատ հազվագյուտ է: Բազմաթիվ անգամ կատարվել է նաև *Laothoe populeti* իլիկաթիթեռի հավաք Մեղրիում, որի տարածման գոտին սահմանափակվում է Թուրքիայի և Իրանի հյուսիսով: Հայտնաբերվել են նաև հազվադեպ հանդիպող ճահճային կրիայի (*Emys orbicularis*) նոր լոկալիտետներ և պարզվել է, որ նրա տարածման հարավային սահմանը հասնում է մինչև Արաքս գետը:

Կենդանիների հազվագյուտ և խոցելի տեսակների անհետացման վտանգի բացահայտման և գնահատման ուղղությամբ վերջին տարիներին տարվել է մեծ աշխատանք՝ վերլուծվել և ամփոփվել են առկա տվյալները, իրականացվել են նոր հետազոտություններ, գնահատվել է վտանգված տեսակների բնապահպանական կարգավիճակը ըստ ԲՊՄՄ-ի (IUCN) չափորոշիչների, որի արդյունքում պատրաստվել և և ՀՀ կառավարության 2010 թ. թիվ 73-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը, որում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր կենդանիներ (աղյուսակ 6):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի ֆաունան կրել է քանակական և որակական փոփոխություններ: Դրա վառ ապացույցն է 2010 թ. ՀՀ Կարմիր գրքում և 1986 թ. ՀԽՍՀ Կարմիր գրքում գրանցված ողնաշարավոր կենդանիների վերաբերյալ տվյալների համադրումը (աղյուսակ 7):

Աղյուսակ 6.

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակները և դրանց
կատեգորիաները՝ ըստ ԲՊՄՄ-ի (IUCN) չափորոշիչների

Կարգաբանական խումբը \ Կատեգորիան	Անհետացած (EX)	Տարածաշրջանում անհետացած (RE)	Կրիտիկական վիճակում գտնվող (CR)	Վտանգված (EN)	Խոցելի (VU)	Տվյալները անբավարար են (DD)	Ընդամենը
Անողնաշար կենդանիներ (Invertebrata)							
Տիպ Mollusca (Փափկամարմիններ)							
Դաս Gastropoda (Փորոտանիներ)		2	10	2			14
Դաս Bivalvia (Երկփեղկանիներ)			2				2
Տիպ Arthropoda (Հոդվածոտանիներ)							
Դաս Insecta (Միջատներ)	1		38	62	38		139
Ընդամենը	1	2	50	64	38		155
Ողնաշարավոր կենդանիներ (Vertebrata)							
Դաս Osteichties (Ձկներ)	2 ռասա		2	1	3	2	7
Դաս Amphibia (Երկկենցաղներ)			1		1		2
Դաս Reptilia (Սողուններ)			7	2	10		19
Դաս Aves (Թռչուններ)				18	65	13	96
Դաս Mammalia (Կաթնասուններ)		3	3	10	12	1	29
Ընդամենը	2	3	12	31	91	16	153
Ընդհանուր		5	62	95	129	16	308

Աղյուսակ 7.

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված ողնաշարավոր կենդանիների տեսակների թիվը

Կարգաբանական խումբը	Տեսակների թիվը	
	1986	2010
Ձկներ (Osteichties)	2	7
Երկկենցաղներ (Amphibia)	1	2
Սողուններ (Reptilia)	11	19
Թռչուններ (Aves)	67	96
Կաթնասուններ (Mammalia)	18	29
Ընդամենը	99	153

Ներկայումս ՀՀ Կարմիր գրքում գրանցված որոշ տեսակների վիճակն էլ ավելի է վատթարացել: Այսպես, անդրկովկասյան անապատային մողեսիկի (*Eremias pleskei*) նախկինում հայտնի 9 լոկալիտետներից վերջին տարիներին հաջողվել է հայտնաբերել ընդամենը 1-ը, իսկ անդրկովկասյան տակիրային կլորագլուխ մողեսի

(*Phrynocephalus horvathi*) գրական աղբյուրներից հայտնի 27 լոկալիտետներից՝ միայն 2-ը և ևս 1-ը նշվել է որպես հայտնաբերման նոր վայր: Այդ տեսակների պոպուլյացիաներն իրարից տարանջատված են, իսկ խիստ սակավաթիվ քանակը գնալով էլ ավելի է կրճատվում (10-12 առանձնյակ 1 հա-ի վրա՝ 1954թ., 1-2 առանձնյակ 1 հա-ի վրա՝ 2013 թ.): Առկա են նաև տվյալներ, որոնք ապացուցում են այս տեսակների առկայությունը Արմավիրի մարզում, Գորավանի ավազուտներում և այլ տարածքներում: Մտահոգիչ է նաև անդրկովկասյան բազմազույն մողեսիկի (*Eremias arguta transcaucasica*) Հայաստանում միակ և սահմանափակ արեալով պոպուլյացիայի վիճակը: Արմավիրի և Արարատի մարզերում խիստ կրճատվել են Միջերկրածովային կրիայի (*Testudo graeca*) մեկական պոպուլյացիաների արեալներն ու թվաքանակը: Հիմնական սպառնալիքը հողերի գյուղատնտեսական նպատակներով յուրացումն է, քանի որ Արարատյան հարթավայրի շատ շրջաններում ստեղծվում են խոշոր ֆերմերային տնտեսություններ, մինչ այդ չմշակված հողերում հիմնվում են պտղատու և խաղողի այգիներ: Նշված տեսակներն ունեն անհետաձգելի հետազոտման անհրաժեշտություն և բնապահպանական միջամտության կարիք:

2011-2012 թթ. արձանագրվել են մարդու բնակավայրերում գայլերի հայտնվելու և գյուղատնտեսական կենդանիների վրա հարձակման բազմաթիվ դեպքեր, որը հիմնականում պայմանավորված է նրանց համար կեր հանդիսացող կենդանիների գլխաքանակի կրճատմամբ: Այսպես, ըստ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի մասնագետների կարծիքի, նկատվել է գրեթե 50 %-ով նապաստակի, 90 %-ով վարազի և 30-40 %-ով այծամի թվաքանակի նվազում: ԲՀՀ-ի տվյալներով նապաստակի թվաքանակը նվազել է 20 %, իսկ վարազի՝ 70 %, այն դեպքում երբ այծամի վիճակը բավականին բարվոք է: Միանգամայն պարզ է, որ անհրաժեշտ է անցկացնել այս տեսակների հաշվառում՝ ընդգրկելով նրանց ապրելավայրերի առավել մեծ տարածքներ:

ԲՀՊՏ-ներում և ԲՀՊՏ-ներից դուրս գտնվող անտառային տարածքներում վարազի (*Sus scrofa*) թվաքանակի կտրուկ նվազումը բացատրվում է 2008-2012 թթ. Աֆրիկյան ժանտախտի բռնկմամբ: Ի դեպ՝ նույնիսկ վարազի արագ վերականգնման ունակությունը չի կայունացնում պոպուլյացիան, քանի որ հիվանդության ամենամյա բռնկումները կրկին նվազացնում են կենդանատեսակի թվաքանակը:

Մտահոգիչ է թռչունների շատ տեսակների (հատկապես հազվագյուտ) վիճակը Արմաշի ձկնաբուծական լճերի տարածքում, Սև ջուր ու Քացախ գետերի ափամերձ հատվածներում՝ կապված ջրային ռեսուրսների ոչ խելամիտ օգտագործման, բնական լճակների թվաքանակի կրճատման և բետոնապատված լճակների թվի մեծացման հետ: Այսպես 2013-2014 թթ. ձմեռային հաշվառման տվյալներով Արմաշի ձկնաբուծական լճերը աչքի են ընկել թռչունների փոքրաթիվ տեսակային և քանակային բազմազանությամբ՝ 2013 թ.-ին գրանցվել է 26 տեսակ, որը կազմում է հանրապետությունում հաշվառված թռչնատեսակների 3.2 %-ը, իսկ 2014 թ.-ին՝ 14

տեսակ կամ հանրապետությունում հաշվառված թռչնատեսակների 1.6 %-ը: Նվազել է ջրլող թռչունների տեսակների քանակը, օրինակ՝ կարմրակտուց սուզաբադի (*Netta rufina*), կարմրագլուխ սուզաբադի (*Aythya ferina*), մոխրագույն բադի (*Anas strepera*), կոնչան բադի (*Anas platyrhynchos*), սև փարփարի (*Fulica atra*), եղեգնահավի (*Gallinula chloropus*), սուզակների (*Podiceps* sp.) և այլն:

2014 թ. չի հաջողվել հայտնաբերել 2004 թ. Հայաստանի տարածքում գրանցված անապատային կաքավին (*Ammoperdix griseogularis*), մոնղոլական խածկտիկին (*Bucanetes mongolicus*) և 2013 թ. գրանցված կիսաանապատային խացկտիկին (*Rhodospiza obsoleta*): Անհանգստացնող է նաև վայրի հնդկահավի (*Tetraogallus caspica*)՝ ուլարի վիճակը, որի արեալը տարեց տարի կրճատվում է: Բնակավայրերի կանաչ տարածքների կրճատման պատճառով նվազել է փայտփորիկների և փչակներում բնադրվող այլ թռչունների քանակը:

Անողնաշարների ֆաունայում նկատվող փոփոխություններն ունեն համամոլորակային միտում՝ փոշոտող միջատների թվաքանակի շարունակական նվազում, գյուղատնտեսական վնասատուների զանգվածային զարգացման երևույթներ, ինչը պայմանավորված է մարդածին և կլիմայական բազմաթիվ գործոններով: 2011-2014 թթ. Հայաստանի հարավային անտառներին մեծ վնաս է հասցրել ոսկետուտը (*Euproctis chrysorrhoea*), 2014 թ. Արմավիրի, Կոտայքի և Նախալեռնային մի շարք տնտեսություններում գրանցվել է օկնոգինայի (*Ocnogina loevii armena*) զարգացման բռնկում, որը Հայաստանում որպես լուրջ վնասատու երբեք չի գրանցվել՝ բացառությամբ 1939 թ-ին:

1.3.4. Զրային կենսաբազմազանություն. 2009-2013 թթ. Հայաստանի ջրային կենսաբազմազանության ուսումնասիրությունները զգալիորեն ընդլայնվել են: Շարունակվել են ուսումնասիրությունները Սևանա և Արփի լճերում: Գետային համակարգերի հետազոտություններում ընդգրկվել են Փամբակ, Շնող, Դեբեդ, Աղստև, Ողջի, Որոտան, Արփա և Սևանա լճի ավազանի հիմնական գետերը: Զրամբարներից հետազոտվել են Սպանդարյանի և Կեչուտի ջրամբարները:

Սևանա լճի ձկնային հանրույթը արմատական փոփոխություններ է կրել: Դարեր շարունակ լճի ձկնաշխարհն աչքի է ընկել իր էնդեմիկ ձկնատեսակներով՝ սևանի իշխան (4 ենթատեսակներով. ամառային և ձմեռային բախտակ, գեղարքունի, բոջակ), սևանի կողակ, սևանի բեղլու: Լճի մակարդակի իջեցման արդյունքում ոչնչացել են իշխանի երկու ենթատեսակները՝ ձմեռային բախտակը և բոջակը, իսկ մնացած ձկնատեսակների թվաքանակը խիստ կրճատվել է: Էնդեմիկ ձկնատեսակների պահպանման նպատակով լճում իրականացվել են ամառային իշխանի և գեղարքունի տեսակի արհեստական վերարտադրության գործընթացներ: Վերջին 7 տարիների ընթացքում Սևանա լիճ է բաց թողնվել 348 մլն դրամ արժողությամբ շուրջ 2 մլն. մանրածուկ (աղյուսակ 8): Արհեստական

վերարտադրության արդյունքում Սևանա լճում գրանցվել է ամառային իշխանի ու գեղարքունիի հասուն ձկների պոպուլյացիայի առկայություն: Սակայն քանի որ այդ ձկնատեսակները ձվադրում են գետերում, դրանց բնական վերարտադրությունն անհնար է դառնում ձվադրավայր հանդիսացող գետերի հունների գրեթե անանցանելիության և ջրաբանական ռեժիմի խախտումների պատճառով:

Աղյուսակ 8.

2009-2013 թթ. Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիաների համալրման ցուցանիշները

Տարի	Սևանա լիճ բաց թողնված մանրածկան քանակները (հատ)
2009	312 000
2010	192 000
2011	366 700
2012	366 700
2013	366 700

Սևանա լճի արդյունագործական ձկնատեսակները նույնպես լուրջ փոփոխություններ են կրել: Հիմնական արդյունագործական ձկան՝ սիգի պաշարները սպառված են (աղյուսակ 9): Որակի աճ է գրանցվել 2013 թ.-ին, ինչը 2011-2012 թթ. լճում սիգի բեղուն սերնդի հայտնվելու և մարդածին ծանրաբեռնվածության նվազման հետևանք է: Սակային այսօր էլ արդյունագործական ձկնապաշարները գտնվում են նվազագույն շեմի վրա:

Աղյուսակ 9.

Սևանա լճում սիգի ընդհանուր կենսազանգվածը 2011-20013 թթ.

Տարի	Միջին խտությունը, կգ/հա	Ձկան ընդհանուր կենսազանգվածը,տ
2011	0.094	8.5
2012	0.051	6.5
2013	2.0	324

Զգալիորեն փոխվել է լճի ձկնաշխարհը: Լիճ են ներթափանցել օտարածին ձկնատեսակներ՝ արծաթափայլ լճածածանը (*Carassius auratus*), թեփուկավոր ծածանը (*Cyprinus carpio*), հայկական տառեխիկը (*Alburnoides bipunctatus armeniensis*) և ամուրյան չեբաչոկը (*Pseudorasbora parva*): Վերջինս հայտնաբերվել է Փոքր Սևանի ափամերձ հատվածներում, ինչպես նաև Ձկնագետ գետի գետաբերանում և Հրազդան գետի ակունքում, իսկ հայկական տառեխիկը՝ Սևանա լճում, Արգիճի, Վարդենիս, Ծակքար և Գավառագետ գետերի ստորին հոսանքներում և Հրազդան գետի ակունքում (նկար 15): Ներկայումս լճում հանդիպող ձկնատեսակներն են.

- **Սաղմոնազգիների ընտանիք – *Salmonidae***

Գեղարքունի - *Salmo ischchan gegarkuni*.

Ամառային իշխան - *Salmo ischchan aestivalis*.

- **Սիգազգիների ընտանիք (Coregonidae)**

Սիգ – *Coregonus lavaretus*.

- **Ծածանազգիների ընտանիք (Cyprinidae)**

Կողակ (*Capoeta capoeta sevangi*).

Բեղլու (*Barbus goktschaicus*).


Արծաթափայլ լճածածան (*Carassius auratus gibelio*).

Թեփուկավոր ծածան (*Cyprinus carpio*).

Հայկական տառեխիկ (*Alburnoides bipunctatus armeniensis*).

Ամուրյան չեբաչոկ – *Pseudorasbora parva*.

Սևանա լճում լայն տարածում գտած հաջորդ արդյունագործական հիդրոբիոնտը գետի երկարաչանչ խեցգետինն է (*Pontastacus leptodactylus*), որը լիճ է ներթափանցել 1980-ական թվականներին՝ պատահական ինտրադուկցիայի արդյունքում: Զբաղեցնելով ազատ էկոլոգիական խորշ, աստիճանաբար հարմարվելով միջավայրի նոր պայմաններին, երկարաչանչ խեցգետինը քանակական զարգացում ապրեց և իր վրա վերցրեց օրգանական տիղմի յուրացման հիմնական դերը: Լճում ձկնային պաշարների կրճատման արդյունքում հիմնական մարդածին ծանրաբեռնվածությունն ընկել է այս հիդրոբիոնտի վրա: 2005-2013 թթ. թթ. ընթացքում խեցգետնի արդյունագործական պաշարները կրճատվել են, սակայն 2013 թ. գրանցվել է նրա քանակի կտրուկ աճ (աղյուսակ 10):



Նկար 15. Սևանա լճի ավազանը

2004-2013 թթ. խեցգետնի արդյունագործական պաշարները (տոննա)

Սևանա լճում

2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
1800	2100	1700	1500	1370	980	830	860	810	1530

Սևանա լճի ալգոֆլորայի հիմքը ձևավորել են ջրիմուռների 3 հիմնական խմբեր՝ դիատոմային, կանաչ և կապտականաչ, ինչը բնորոշ է բարեխառն գոտու լճերին: Ֆիտոպլանկտոնային համակեցությունում առավել բազմազան է դիատոմային ջրիմուռների խումբը (50 %), երկրորդ տեղում են կանաչ ջրիմուռները (30 %): Պլանկտոնային ջրիմուռները պատկանում են 13 դասի, 15 կարգի, 37 ընտանիքի և 79 ցեղի: Ջրիմուռների գրեթե բոլոր խմբերում նկարագրվել են նախկինում պելագիալում չհայտնաբերված տեսակներ, որոնց մի մասը լճում արձանագրվում է առաջին անգամ (կանաչ ջրիմուռ-*Scenedesmus obtusus* և դիատոմային-*Cyclotella stelligera*): Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում 2008-2011 թթ. բացահայտվել են ջրիմուռների 5 բաժինների, 8 դասերի, 16 կարգերի պատկանող 184 տեսակներ, որոնցում գերակայել են ջրիմուռների բենթոսային ձևերը, իսկ աշխարհագրական տարածվածությամբ՝ կոսմոպոլիտները: Առավել հարուստ կենսաբազմազանությամբ աչքի են ընկել Մասրիկ, Մաքենիս, Լիճք և Արգիճի գետերի գետաբերանների ֆիտոպլանկտոնային համակեցությունները: Գետերում ջրիմուռների տեսակային բազմազանությունը հետևյալն է՝

- դիատոմային ջրիմուռներ (Bacillariophyta)՝ 109 տեսակ.
- կանաչ ջրիմուռներ (Chlorophyta)՝ 39 տեսակ.
- կապտականաչ ջրիմուռներ (Cyanophyta)՝ 31 տեսակ.
- դեղնականաչ ջրիմուռները (Xantophyta)՝ 3 տեսակ.
- էվգլենային ջրիմուռները (Euglenophyta)՝ 2 տեսակ:

Սևանի ջրհավաք ավազանին պատկանող Որոտան, Արփա գետերի, Կեչուտի ջրամբարի ջրակենսաբանական և ձկնաբանական հետազոտություններն (2013 թ.) ընդգրկել են տրոֆիկ շղթայի հիմնական օղակները՝ հատակային ֆաունա (զոոբենթոս), պլանկտոնային համակեցություն (զոոպլանկտոն), մակրոֆիտներ և իխտիոֆաունա: Ջրակենսաբանական հետազոտությունների ընթացքում Հայաստանի Կարմիր գրքում և ԲՊՄՄ-ի (IUCN) Կարմիր ցուցակում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Սակայն տարբեր ջրային էկոհամակարգերում հանդիպել են Հայաստանի և Կովկասի էնդեմիկներ (աղյուսակ 11):

Արփա գետի վերին և ստորին հոսանքում զոոբենթոսի համակեցության ուսումնասիրությունը վկայում է, որ չնայած գետի ստորին մասում, վերին հոսանքի հետ համեմատած, պարունակվում են ավելի շատ օրգանական նյութեր, այնուհանդերձ այստեղ, ինչպես և վերին հոսանքում, գրանցվել են ջրի մաքրության

մասին վկայող կենսահինդիկատորների մեծ քանակություն, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ Արփա գետի ջրերն այս պահին չեն ենթարկվում մարդածին լուրջ ազդեցության և ունեն բարձր որակ:

Աղյուսակ 11.

Արփա, Որոտան գետերի և Կեչուտի ջրամբարի ձկնատեսակները

Ջրային օբյեկտը	1990-ական թթ. տվյալները	2013 թ. տվյալները
Կեչուտի ջրամբար	Սիգ (<i>Coregonus lavaretus</i>), Քուռի բեղլու (<i>Barbus lacerta cyri</i>), Մանրաթեփուկ (<i>Acanthalburnus microlepis</i>)	Հայկական տառեխիկ (<i>Alburnoides bipunctatus armeniensis</i>), Ամուրյան չեբաչուկ (<i>Pseudorasbora parva</i>), Քուռի կողակ (<i>Capoeta capoeta</i>) Արծաթափայլ լճաձաձան (<i>Carassius auratus gibelio</i>)
Արփա գետ	Կարմրախայտ (<i>Salmo trutta fario</i>), Ծիածանափայլ իշխան (<i>Parasalmo mikissa</i>), Արաքսի մուրճա (<i>Barbus mursa</i>), Հայկական տառեխիկ (<i>Alburnoides bipunctatus armeniensis</i>), Քուռի կողակ (<i>Capoeta capoeta</i>), Հաշամ (<i>Aspius aspius</i>), Անդրկովկասյան սպիտակաձուկ (<i>Alburnus charusini hohenackeri</i>), Մանրաթեփուկ (<i>Acanthalburnus microlepis</i>)	Հայկական տառեխիկ (<i>Alburnoides bipunctatus armeniensis</i>), Քուռի բեղլու (<i>Barbus lacerta cyri</i>), Կարմրախայտ (<i>Salmo trutta fario</i>), Անդրկովկասյան սպիտակաձուկ (<i>Alburnus charusini hohenackeri</i>)
Որոտան գետ	Կարմրախայտ (<i>Salmo trutta fario</i>), Արաքսի մուրճա (<i>Barbus mursa</i>), Հայկական տառեխիկ (<i>Alburnoides bipunctatus armeniensis</i>), Քուռի կողակ (<i>Capoeta capoeta</i>), Հաշամ (<i>Aspius aspius</i>), Անդրկովկասյան սպիտակաձուկ (<i>Alburnus charusini hohenackeri</i>), Մանրաթեփուկ (<i>Acanthalburnus microlepis</i>)	Հայկական տառեխիկ (<i>Alburnoides bipunctatus armeniensis</i>), Արծաթափայլ լճաձաձան (<i>Carassius auratus gibelio</i>), Կարմրախայտ (<i>Salmo trutta fario</i>)

Որոտան գետի զոոբենթոսը հարուստ է Կովկասի և Փոքր Ասիայի տարածաշրջանի բազմաթիվ էնդեմիկ տեսակներով, որոնք ունեն կարևոր նշանակություն կենսաբազմազանության տեսանկյունից: Գետի ջրի որակը, կախված տարվա եղանակից, փոփոխվում է <<բարձրից-լավ>>: Հարկ է նշել, որ Որոտան գետի ավազանում նախատեսվում է պոչամբարի կառուցում: Հանքի բաց շահագործման և պոչամբարի առկայության պայմաններում ջրային էկոհամակարգերին հասցվող վնասը հնարավոր չի լինի լիովին բացառել: Բացի այդ, Որոտան գետի վրա կառուցված ՀԷԿ-երը ներկայումս էլ խախտում են գետի ջրաբանական ռեժիմը:

1.3.5. Ագրոկենսաբազմազանությունը.

Հայաստանի հարուստ ագրոկենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունը և կենսացենոզների ամբողջականությունն ապահովող բարձր հատկանիշներ, հանդիսանում է նաև երկրի տնտեսական զարգացման նախապայմանը: Առկա վայրի օգտակար բույսերից և կենդանիների էնդեմիկ ցեղերի ներկայացուցիչներից կախման մեջ են գտնվում գյուղատնտեսության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ բուսաբուծությունը, անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնաբուծությունը, թեթև և սննդարդյունաբերության որոշ կարևոր բնագավառները: Անգնահատելի է ագրոկենսաբազմազանության դերը էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական հատկանիշների պահպանման գործում, հատկապես՝ մշակաբույսերի և ընտանի կենդանիների գենոֆոնդի պահպանության, սելեկցիայի, դեղամիջոցների ստացման և կենսատեխնոլոգիաների միջոցով նոր նյութերի արտադրման համար՝ որպես բնակչության կենսապահովման նախապայման: Բույսերի և կենդանիների գենետիկական ռեսուրսների պահպանման ու կայուն օգտագործման նշանակությունը գնալով էլ ավելի է մեծանում և աստիճանաբար դառնում գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտում վարվող քաղաքականության կարևոր բաղադրիչը:

Պարենի և գյուղատնտեսության համար օգտագործվող գենետիկական ռեսուրսների պահպանումն ու օգտագործումն իրականացվում է գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությամբ սահմանված առաջնությունների համաձայն, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում մշակաբույսերի տեղական հին սորտերի և մշակաբույսերի վայրի ազգակիցների պահպանմանը, գենետիկական բանկի հնարավորությունների ընդարձակմանը, տնտեսական արժեք ներկայացնող տեսակների պլանտացիաների և բուծարանների ստեղծմանն ու բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործմանը:

Հայաստանի բույսերի գենետիկական ռեսուրսները ներկայացված են հիմնականում հացահատիկային, հատիկալնդեղեն, կերային, բանջարաբոստանային և յուղատու բույսերի խմբերին պատկանող տեսակներով: Հայաստանում հացահատիկային մշակաբույսերն (ցորեն, գարի, հաճար) ունեն ռազմավարական նշանակություն և գերակշռում են ինչպես ցանքատարածությունների կառուցվածքում, այնպես էլ՝ սերմերի հավաքածուներում (այդ թվում՝ նաև վայրի տեսակների):

Ըստ ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013 թ.-ին գյուղատնտեսության հիմնական մշակաբույսերի ցանքային տարածություններն ունեն հետևյալ կառուցվածքը.

- հացահատիկ և հատիկալնդեղեն՝ 178367 հա.
- կարտոֆիլ՝ 30680 հա.
- բանջարեղեն՝ 25400 հա.
- բոստանային՝ 5356 հա:

Վայրի հացազգիներից Հայաստանի տարածքում աճում է վայրի ցորենի երեք, այծակնի ինը, աշորայի երկու և վայրի գարու ութ տեսակ, որոնք աչքի են ընկնում իրենց ներտեսակային հարուստ բազմազանությամբ և համարվում են չորային կլիմայի, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկունության և այլ հատկանիշների գենների կրողներ: Հանդիպում են նաև հատիկաընդեղեն մշակաբույսերի բազմաթիվ աբորիգեն ձևեր և վայրի տեսակներ:

Հայաստանի առաջնային նշանակություն ունեցող բանջարանոցային մշակաբույսերի շարքում են՝ պոմիդորը, կաղամբը, վարունգը, գլուխ սոխը, բադրիջանը, տաքդեղը, որոնց բաժինն ընդհանուր բանջարաբույսերի մեջ կազմում է 61,9 տոկոս: Հայաստանի տարածքը հանդիսանում է նաև մի շարք բանջարանոցային բույսերի առաջացման առաջնային և երկրորդական կենտրոն, քանի որ բանջարաբուստանային մշակաբույսերի գերակշռող մասը Հայաստանում ևս ներկայացված է վայրի ցեղակիցներով (280 տեսակ):


Պտղահատապտղայինները բավական հարուստ են ներկայացված Հայաստանում և հիմնականում պատկանում են վարդազգիների ընտանիքին (Rosaceae), որոնց վայրի ցեղակիցների գենոֆոնդի պահպանությունը կարևոր խնդիր է ազգային և գլոբալ մակարդակներում:

Կերային բույսերը ներկայացված են դաշտավուկազգիների (Poaceae) և բակլազգիների (Fabaceae) ընտանիքներով, որոնք ներառում են բազմաթիվ տեսակներ, էկոտիպեր և ձևեր: Միայն Fabaceae ընտանիքի կազմում 346 տեսակի բույսեր են գրանցված Հայաստանում:

Վերջին տարիներին Հայաստանում առաջին անգամ նպատակային ուսումնասիրության են ենթարկվել բակլազգի և հացազգի 12 ցեղի պատկանող 96 տեսակի կերային բույսերի վրա մակաբուծող սնկերի ախտածին միկոբիոտան: Պարզվել է, որ այն ներառում է միկրոսկոպիկ սնկերի 160 տեսակ, որոնք ընդգրկված են 51 ցեղի, 18 կարգի, 7 դասի և 3 բաժնի մեջ: Առաջին անգամ Հայաստանի միկոբիոտայի համար հայտնաբերվել են կերաբույսերի մակաբույծ հանդիսացող 13 տեսակի սնկեր:

Հայտնի է, որ բույսերի գենետիկական ռեսուրսները հանդիսանում են մշակաբույսերի սելեկցիոն բազան: Ընդ որում՝ սելեկցիոն աշխատանքները հանրապետությունում տարվում են ինչպես լիամասշտաբ, այնպես էլ ադապտիվ սելեկցիայի ուղղությամբ: Ներկայումս մշակվում են ինչպես արտերկրից ներմուծված, այնպես էլ տեղական սելեկցիայի սորտեր և քիչ քանակությամբ հին ավանդական սորտեր: Սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանում գրանցված մշակվող սորտերի թիվը 2008-2013 թվականների ընթացքում աճել է, հատկապես՝ բանջարանոցային նոր սորտերի թիվը (85 %) (նկար 16): Այս տվյալները համահունչ են Այիչիի նպատակային 13-րդ խնդրին, որի համաձայն պետք է ավելի ընդլայնել գենետիկական ռեսուրսների ներգրավումը սելեկցիոն գործընթացներում:

Պաշտոնական անվանացանկում գրանցված սորտերից բացի, հանրապետության ֆերմերային տնտեսություններում մշակվում են նաև ներմուծված, դեռևս չգրանցված սորտեր: Ընդ որում՝ այս գործընթացն ամբողջությամբ դուրս է մնացել վերահսկողությունից և ներմուծվող նոր սորտերի առկայությունը ռիսկային գործոն է հանդիսանում նաև վայրի կենսաբազմազանության համար:



Նկար 16. Մշակաբույսերի գրանցված սորտերի թիվը 2000-2013 թթ.

Մինչև 1950 թ. Հայաստանում մշակվել են ցորենի 20-ից ավելի տեղական սորտեր: Ներկայումս առանձին տնտեսություններում դեռևս մշակվում է ցորենի 2-3 ավանդական տեղական սորտ, մյուսները ցածր բերքատվության պատճառով դուրս են մղվել մշակությունից: Ցորենի տեղական սորտերը մի շարք կարևոր հատկանիշների շնորհիվ կարող են հանդիսանալ սելեկցիոն արժեքավոր ելանյութ: Օրինակ՝ չորադիմացկունությամբ աչքի են ընկնում ցորենի Սպիտակահատ, Գալգալոս, Դեղնազարդա, Թավթուխի սորտերը, սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկունությամբ՝ Դեղնազարդա, Գրնանի, իսկ ցրտադիմացկունությամբ՝ Գյուլգանի, Ալթի-աղաջ և այլն:

Գարու տեղական սորտերից մշակության մեջ է Նուտանս տեղական սորտը, որը չորադիմացկուն է և քիչ պահանջկոտ հողի նկատմամբ: Բազմամյա կերային բակլազգի (Fabaceae) մշակաբույսերից հիմնականում տարածված են առվույտի (Medicago), կորնգանի (Onobrychis) տեղական սորտ-պոպուլյացիաները, որոնք ունեն բավականին կայուն գենետիկական հատկանիշներ և տարիներ շարունակ բարձր բերքատվություն են ապահովում: Բանջարաբոստանային մշակաբույսերից սահմանափակ քանակությամբ մշակվում են վարունգի, տաքդեղի, բադրիջանի,

լորու, կաղամբի, գազարի, ծնեբեկի, գլուխ սոխի, սեխի տեղական սորտ-պոպուլյացիաները: Հանրապետությունում մշակվող գրեթե բոլոր համեմունքային տերևաբանջարների սորտերն ունեն տեղական ծագում:

Հայկական բարձրավանդակը, հանդիսանալով մշակաբույսերի առաջացման կենտրոններից մեկը, հայտնի է նաև պտղատուների ավանդական սորտային բազմազանությամբ: Մասնավորապես՝ խնձորենու (40), տանձենու (15), ծիրանենու (15), դեղձենու (8), սալորենու, բալենու մի քանի սորտ-պոպուլյացիաները եզակի առանձնյակների ձևով պահպանվել են անհատական տնտեսություններում:

Հարկ է նշել, որ տեղական սորտերի մեծ մասը գրեթե չի պահպանվել սերմային հավաքածուներում, ուստի դրանց պահպանման համար անհրաժեշտ է հատուկ ծրագրերի մշակում ու իրականացում՝ արտերկրի գենետիկական բանկերից դրանց ներմուծման և տեղում բազմացման միջոցով:

Կենսաբազմազանության պահպանման Այիչիի 13-րդ նպատակային խնդրի համաձայն՝ անհրաժեշտ է նախաձեռնել միջոցառումներ, ուղղված տեղական ավանդական սորտերի գենետիկական էրոզիայի նվազեցմանը՝ հաշվի առնելով դրանց բազմազանության կարևորությունը որպես սելեկցիոն և յուրահատուկ համային հատկանիշներ ունեցող ելանյութ, որը բնորոշում է հայկական խոհանոցը և ավանդույթների հետ կապված մշակույթը:

1.4. Էկոհամակարգերին և կենսաբազմազանության կարևոր բաղադրիչներին սպառնացող հիմնական վտանգները, դրանց պատճառներն ու ազդեցության մեխանիզմները

Հայաստանի անկախության երկրորդ տասնամյակը նշանավորվեց բազմաբնույթ ճգնաժամից (էներգետիկ, սոցիալ-տնտեսական, հոգեբանական) դուրս գալու միտումով, ինչը արտահայտվեց երկրի տնտեսական և սոցիալական վիճակի որոշակի բարելավմամբ: 2001-2008 թթ. հանրապետությունում արձանագրված որոշակի վերելքը երկարատև չէր՝ կապված 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսական ճկնաժամի հետ, որի հետևանքով մեր երկրում ևս տեղի ունեցավ ՀՆԱ-ի կտրուկ անկում (աղյուսակ 12):

Աղյուսակ 12.

Տնտեսական աճը Հայաստանում ըստ տնտեսության հիմնական ճյուղերի (տոկոս նախորդ տարվա համեմատ)

	2005	2008	2009	2010	2011	2012	2013
ՀՆԱ	13,9	6,9	-14,1	2,2	4,7	7,2	3,5
Արդյունաբերություն	5,6	2,2	-6,9	9,2	13,6	6,3	5,4
Գյուղատնտեսություն	11,2	3,3	6,0	-16,0	14,0	9,5	7,2
Շինարարություն	27,9	11,3	-41,6	3,3	-12,2	4,8	-10,8

2012 թվականին ՀՆԱ-ն կազմել է 3981.5 մլրդ դրամ (ընթացիկ գներով), ընդ որում՝ իրական ՀՆԱ-ն աճել է 7.2 %-ով: Տնտեսության հիմնական ճյուղերում գրանցվել են աճի ցուցանիշներ: 2013 թ. տնտեսական ակտիվությունը պահպանվել է, սակայն արձանագրվել է աճի տեմպերի դանդաղում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության ցածր աճով և ներքին տնտեսությունում ներդրումների նվազմամբ: 2013 թ. տնտեսական աճը կազմել է 3.5 % (2012 թ.՝ 7.2 %), որն առավել բարձր է եղել հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության ենթաճյուղերում: Բերված ցուցանիշները վկայում են, թե տնտեսության որ ճյուղերը կարող են հիմնական սպառնալիք հանդիսանալ շրջակա միջավայրի համար: 2009-2013 թթ. ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության, տարածքային կառավարման, էներգետիկայի և բնական պաշարների, արտակարգ իրավիճակների նախարարությունների, մարզպետարանների, ԳԱԱ-ի հաշվետվությունների ու զեկույցների վերլուծությունը վկայում է, որ, համեմատած նախորդ հնգամյակի հետ, էկոհամակարգերին և կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները գրեթե փոփոխություններ չեն կրել:

2009-2013 թթ. փոփոխվել են կենսաբազմազանության վրա բացասական ներգործության ուժգնությունը և ազդեցության ենթարկված էկոհամակարգերի տարածական ցուցանիշները: Ընդ որում՝ կենսաբազմազանության կորուստները և էկոհամակարգային ծառայությունների փոփոխությունները հաճախ մեկ գործոնի արդյունք չեն, այլ համալիր ներգործությունների հետևանք են: Եթե հետխորհրդային վաղ շրջանում դրա պատճառները կապված էին հանրապետության ծանր սոցիալ-տնտեսական պայմանների, էներգետիկ ճգնաժամի և բնակչության լայն խավերի չքավորության եզրին հայտնվելու հետ, ապա ներկայումս էկոհամակարգերի դեգրադացիայի աճի տեմպը պայմանավորված է տնտեսական գործունեության ակտիվացմամբ, որն արտահայտվում է կենսառեսուրսների գերօգտագործմամբ, հանքավայրերի շահագործմամբ, կառուցապատված տարածքների ընդլայնմամբ, գյուղատնտեսության աշխուժացմամբ, զբոսաշրջության զարգացմամբ: Ըստ էության Հայաստանի կենսաբազմազանության վրա այս կամ այն չափով ազդում են IUCN-ի հիերարխիկ դասակարգման գրեթե բոլոր մարդածին սպառնալիքները: Հարկ է նշել, որ Հայաստանում նշված սպառնալիքների համալիր վերլուծություն և գնահատում գրեթե չի կատարվել: Որոշակի աշխատանք արվել է Մեղրիի տարածաշրջանում, որտեղ իրականացվել է սպառնալիքների հնարավոր ազդեցության գնահատումն անողնաշար ֆաունայի որոշ տեսակների վրա: Որպես սպառնալիք գնահատվել են հանքարդյունաբերության, ենթակառուցվածքի և գյուղատնտեսության զարգացման, ծառահատումների և բնափայտի մթերման, հրդեհների, թունաքիմիկատների օգտագործման, վնասատուների զանգվածային բռնկումների և այլնի ազդեցությունները: Ըստ այդ գնահատման՝ նշված գործոններն այս կամ այն չափով ազդում են կամ կարող են ազդել տարածաշրջանի խոցելի տեսակների 38 %-ի վրա:

1.4.1. Բնակմիջավայրերի կորուստ. Պայմանավորված է՝ բաց եղանակով հանքարդյունահանմամբ, շինարարության ծավալմամբ, գյուղատնտեսական գործունեությամբ, անտառահատումներով, հիդրոէներգետիկայի զարգացմամբ, ռեկրեացիայի և զբոսաշրջության զարգացմամբ:

2. Բաց եղանակով հանքարդյունաբերություն. Մոտավոր հաշվարկներով ՀՀ-ում կա 170 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ 613 հանքավայր, որտեղից կարելի է արդյունահանել 60 տեսակի օգտակար հանածո: Աշխարհում մոլիբդենի ընդհանուր պաշարների 5.1 %-ը Հայաստանում է: Կան նաև պղնձի, ցինկի, երկաթի, կապարի, ոսկու, արծաթի, ռենիումի, կադմիումի, թելուրի և այլնի զգալի պաշարներ, որոնց հիման վրա զարգացած հանքարդյունաբերությունը կազմում է արդյունաբերության ՀՆԱ-ի 17 %-ը:

ՀՀ կառավարության կողմից հանքարդյունաբերությունը հռչակված է տնտեսության գերակա ճյուղ, սակայն դրա զարգացումը հիմնականում ընթանում է առանց պաշարների կայուն օգտագործման երկարաժամկետ ծրագրի, հարկման և շրջակա միջավայրի պահպանության պատշաճ օրենսդրության և բնապահպանական ու սոցիալական հետևանքների համապարփակ գնահատման: Արդյունքում՝ հանքարդյունաբերությունը շարունակում է թողնել աղետալի հետևանքներ: Հանքապետության տարածքի հազարավոր հեկտարներ ծածկված են բաց հանքերով և թափոնների պոչամբարներով: Ըստ ՀՀ հողային հաշվեկշռի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 2009 թ. կազմել են 29.36 հազ.հա, 2010 թ.՝ 12.5 հազ.հա, 2011 թ.-ին՝ 33.0 հազ.հա, 2012 թ.-ին՝ 33.6 հազ.հա, 2013 թ.-ին՝ 34.9 հազ.հա, այսինքն՝ օգտագործվող հողատարածքների մակերեսը աստիճանաբար մեծանում է, հատկապես ընդերքօգտագործման հողերի հաշվին:

Հանքավայրերը հիմնականում կենտրոնացված են ՀՀ Լոռու մարզի Ալավերդու և Սյունիքի մարզի Կապան-Քաջարանի շրջաններում: Հանքարդյունաբերության պատճառով առաջացող գեոէկոլոգիական հետևանքները (հողային ծածկույթի խախտումը, պոչամբարների ընդլայնումը, թափոնների կուտակումները, ջրային ռեսուրսների աղտոտումը) մասնատում են բուսական և կենդանական պոպուլյացիաներն ու համակեցությունները, խախտում են կենդանիների միգրացիոն ուղիները և սպառնում են որոշ հազվագյուտ տեսակների գոյատևմանը: Առավել մտահոգիչ է բաց եղանակով հանքերի շահագործումը անտառային տարածքներում, որի վառ օրինակը Թեղուտում պղնձամոլիբդենային հանքի առկայությունն է, որը գտնվում է ՀՀ Լոռվա մարզի հյուսիս-արևելյան շրջանում՝ երկրաշարժերի և սողանքների ենթակա գոտում: Տեղանքում առկա են հնադարյան և միջնադարյան շուրջ 20 պատմամշակութային հուշարձան: Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101835 հա, որից անտառածածկ է 80867 հա-ը (մարզի տարածքի մոտ 26 %-ը): 1990-2000 թթ. մարզի անտառների մոտ 30 % ինտենսիվ ձևով

ոչնչացվել է: Անտառների ոչնչացմանը հաջորդել է կտրված ծառերի արմատային համակարգի փտումը, որի հետևանքով մարզում ակտիվացել են էրոզիոն և սողանքային երևույթները: Թեղուտի մերձակա անտառը Հայաստանում ամենալավ պահպանվածն է՝ հարուստ կենսաբազմազանությամբ, այդ թվում՝ շուրջ 200 բուսատեսակով, կաթնասունների 55, թռչունների 86, սողունների 10 և երկկենցաղների 4 տեսակներով: Այս բուսա- և կենդանատեսաներից շատերը հազվադեպ հանդիպող են և համարվում են վտանգված, իսկ 6 բուսատեսակ և 26 կենդանատեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Այս տարածքում բաց հանքի շահագործումը բնականաբար նախատեսում է անտառների հատման աշխատանքներ, պոչամբարների կառուցում, նոր ենթակառուցվածքների ստեղծում և այլն: Նշված գործողությունների հետևանքները կարող են կործանարար լինել էկոհամակարգերի և կենսաբազմազանության համար, ինչը մեծ անհանգստություն է առաջացնում բնապահպանների և բնակիչների շրջանակում: Հույս է ներշնչում այն փաստը, որ Vallex group ընկերությունը լուրջ մտահոգված է բնապահպանական խնդիրներով և Թեղուտում ձեռնարկում է հատուկ գործողություններ հանքի բացասական ազդեցությունը նվազացնելու համար (տես 3.1 բաժինը):

ՀՀ շրջակա միջավայրին վնաս է հասցրել նաև շինանյութերի արդյունաբերությունը, որի հետևանքով շրջանառությունից հանվել է ավելի քան 7 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողահանդակ:

Շարունակում են տագնապ առաջացնել իրենց տարածքն ընդլայնող հանքարդյունաբերական և լեռնահարստացման գործարանների պոչամբարները: Ընդ որում՝ եթե դրանց մի մասում (օրինակ՝ Ախթալայում) հարստացումը կատարվում է ֆլոտացիոն մեթոդով, որի արդյունքում բնությունը աղտոտում են միայն որոշ մակերեսային ակտիվ նյութեր, ապա ավելի հին տեխնոլոգիաների կիրառմամբ օգտագործվում են շատ ավելի վտանգավոր միացություններ, իսկ թափոնները շատ ավելի տոքսիկ են: Ըստ ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տվյալների՝ հանրապետության շատ շրջաններում հողի և ջրի աղտոտվածությունը զգալիորեն գերազանցում է ՍԹԽ-ները և այդ աղտոտման հիմնական աղբյուր են հանդիսանում պոչամբարների արտահոսքերը:

Վերը նշված հիմնախնդիրների մեղմացումը հնարավոր է միայն բնապահպանական նորմերի և կանոնների պահպանմանմամբ:

3. Շինարարություն. 2010-2011 թթ. շինարարական աշխատանքների ընդհանուր ծավալի անկման պատճառով ներկայումս էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության վտանգը մեծ չէ: Բնակավայրերի ընդլայնումը և նորերի ստեղծումը (ամառանոցային համայնքների տեսքով) վերջին տարիներին տեղի է ունենում ավելի դանդաղ, գրեթե առանց նոր տարածքների ներգրավման:

Ճանապարհային ցանցի հետ կապված աշխատանքները հիմնականում տարվում են արդեն եղած ճանապարհների ընդլայնման և վերանորոգման ուղղությամբ: Էկոհամակարգերին և կենսաբազմազանությանն առավել մեծ վնաս է հասցնում ճանապարհների անկանոն բացումը այն վայրերում, որոնք հետագոյում են երկրաբանական որոնողական աշխատանքների ժամանակ, որոնց ավարտից հետո լանդշաֆտի նախկին վիճակը գրեթե չի վերականգնվում:

Նոր ջրամբարների ստեղծման աշխատանքները դեռևս չեն մտել ակտիվ փուլ, սակայն նախատեսվում է, որ Կապսի և Վեդու ջրամբարների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները կավարտվեն մինչև 2014 թ. վերջ: Մաստարայի և Եղվարդի ջրամբարների կառուցման ծրագրերը քննարկվում են համապատասխան դոնոր կազմակերպությունների հետ:

4. Գյուղատնտեսություն. ՀՀ անկախությունից հետո հողերի սեփականաշնորհման գործընթացը լրջորեն փոխեց երկրի գյուղատնտեսության բնույթը և վիճակը: Ներկայումս հանրապետության գյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում են վարելահողերի ավելի քան 82 %-ը, բազմամյա տնկարկների՝ 75 %-ը, խոտհարքերի՝ 50 %-ը: Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի գերակշռող մասը (ավելի քան 98 %) ապահովվում է մասնավոր հատվածը:

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում շրջակա միջավայրին առնչվող խնդիրներն են՝ ոռոգման անարդյունավետության հետևանքով առաջացող ջրի կորուստները, հողի աղակալումը, էրոզիան, գյուղատնտեսական թափոնների հետևանքով առաջացող աղտոտումը:

Համաձայն ՀՀ հողահին հաշվեկշռի՝ վերջին տարիներին գյուղատնտեսական նշանակության հողերի կաուցվածքում չեն կատարվել խոշոր փոփոխություններ, սակայն որոշ չափով աճել է գյուղատնտեսության մեջ նոր հողատարածքների ներգրավումը չօգտագործվող մշակահողերի հաշվին: Ստեղծվում են պտղատու ծառերի և խաղողի նոր այգիներ՝ հիմնականում Արարատյան դաշտում և Վայոց ձորում: 2012 թ. պտղահատապտղային տնկարկների տարածքները, 2008 թ. համեմատությամբ, աճել են մոտ 10 %-ով: Միամյա մշակաբույսերի աճեցման համար հողատարածքների ընդլայնում գրեթե չի իրականացվում:

Հայաստանը սակավահող երկիր է, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողերը կազմում են 0.65 հա, իսկ վարելահողերը՝ 0.14 հա: Տարբեր գործոնների հետևանքով ներկայումս վարելահողերի շուրջ 33 %-ը կամ 150 հազ. հա նպատակային նշանակությամբ չի օգտագործվում: Այդ հանգամանքը վտանգ է ներկայացնում վայրի կենսաբազմազանության համար, քանի որ լքված

մշակահողերը ծածկվում են ագրեսիվ մոլախոտերով, որոնք բազմանալով տարածվում են մշակվող դաշտերում ու բնական էկոհամակարգերում:

Միջազգային փորձագետների կողմից փաստվում է, որ Հայաստանում հողի դեգրադացման մոտավորապես 11 %-ը մարդկային գործունեության արդյունք է, որից մոտ 10 %-ը առաջանում է գյուղատնտեսության ոչ ճիշտ վարման հետևանքով (<<Կլիմայի փոփոխություն և գյուղատնտեսություն>> երկրի մասին զեկույց, 2012 թ., ՀԲ): Այդ գործընթացների հետևանքներն են՝ հողերի էրոզիան և երկրորդային աղակալումը, բնական էկոհամակարգերի դեգրադացիան, կենսաբազմազանության փոփոխությունն ու կորուստը, ինչն առաջացնում է էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական խորը փոփոխություններ:

Որպես արոտավայր օգտագործվող բնական էկոհամակարգերի համար առավել մեծ վտանգ է ներկայացնում արոտավայրային ծանրաբեռնվածության անհավասարաչափ բաշխումը: Ընդ որում՝ հեռավոր արոտավայրերի թերարածեցման պատճառով տեղի է ունենում էկոհամակարգերի փոփոխություն, մասնավորապես՝ ալպյան գորգերը փոխարինվում են ալպյան մարգագետիններով, իսկ մերձալպյան մոլախոտերը ակտիվ ներխուժում են ալպյան էկոհամակարգեր: Փոխարենը մեծացել է գյուղամերձ արոտների ծանրաբեռնվածությունը, որի արդյունքում ակտիվացել են բուսական ծածկույթի փոփոխությունները, էրոզիայի օջախների առաջացումը, սողանքներն ու սելավները: Գերարածեցման արդյունքում կարող են տուժել նաև ՀՀ Կարմիր գրքում ներառված տեսակները՝ ձարխոտ բաժակատերև (Athyrium discenifolium), բանպոտ նիզականման (Polystichum lonchitis), իժալեզու սովորական (Ophioglossum vulgatum), երնջակ Վանատուրի (Eryngium vanaturii), ստենոտենիա դարալագյազի (Staenotaenia daralaghezica), արիստոլոխիա վրացական (Aristolochia iberica), տերեփուկ Վավիլովի (Centaurea vavilovii), դորոնիկում Բալանզայի (Doronicum balansae), թրաշուշան ջավախքի (Gladiolus dzhavakheticus), թրաշուշան հայաստանյան (Gladiolus hajastanicus), կտավախոտ բրգաձև (Linaria pyramidata), կորնգան հայաստանի (Onobrychis hajastana), կորնգան խոշոր (Onobrychis major), կորնգան մեսխեթական (Onobrychis meschetica), կորնգան Թախտաջանի (Onobrychis takhtajanii):

Բնական կերհանդակների բազմամյա ոչ արդյունավետ օգտագործման և խնամքի բացակայության հետևանքով՝ դրանց մի մասը (մոտ 150 հազ հա) ենթակա չէ օգտագործման: Ներկայումս այստեղ նկատվում է ջրային էրոզիայի ակտիվացում, ճահճուտների ընդարձակում: Կենսաբազմազանության համար մեծ կարևորություն ունեցող արոտավայրերի պահպանությունը պետք է կենտրոնացվի դրանց կանոնակարգված արդյունավետ օգտագործման, նոր տեխնոլոգիաների մշակման, արոտավայրային հողերի էկոլոգիական վիճակի գնահատման ու բարելավման, գործնական սելեկցիայում նոր կերային բազմամյա խոտաբույսերի ստացման համար տեղական ֆլորայի լայն կիրառման վրա:

Գյուղատնտեսական օգտագործման նպատակով բնական աղուտների աղազրկումը լուրջ խնդիր է կենսաբազմազանության համար: Այն մեծ մասշտաբներով կիրառվել է Խորհրդային տարիներին, որի արդյունքում ներկայումս Հայաստանում գրեթե չեն պահպանվել հազվագյուտ հալոֆիլ տեսակներով հարուստ կենսաբազմազանությամբ բնական աղուտներ: Անհետացման շեմին են կանգնած Կարմիր գրքում գրանցված այնպիսի աղուտային տեսակներ, ինչպիսիք են՝ սարսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum*), աղահասկիկ Բելանժեի (*Halostachys belangeriana*), կալախոտ կասպիական (*Kalidium capsicum*), միկրոկնեմում մարջանանման (*Microcnemum coralloides*), օշան Օշեի (*Salsola aucheri*), օշան սողակիր (*Salsola soda*), որդախոտ սողացող (*Aeluropus repens*) և ավազային անապատներին բնորոշ Կարմիր գրքում ընդգրկված հետևյալ տեսակները՝ խինձ գորովանի (*Scorzonera gorovanica*), կնճիտաթերթիկ սապատավոր (*Rhinopetalum gibbosum*), գեղաձնկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*):

Արարատյան հարթավայրի հողերի յուրացման արդյունքում վտանգված են նաև Կարմիր գրքում ընդգրկված հետևյալ տեսակները՝ ասպերուգինոիդես անոթային (*Asperuginoides axillaris*), նվարդակ քնարաձև (*Lepidium lyratum*), նրբախոտ թելատերև (*Leptaleum filifolium*), կեղծանկաթաթիկ դիխոտոմիկ (*Pseudoanastatica dichotoma*), հոհենակերիա անցողուն (*Hohenackeria excarpa*), գինեծաղիկ գազարատերև (*Oenanthe silaifolia*), ակտինոլեմ խոշորաբաժակ (*Actinolema macrolema*), տերեփուկ արփայի (*Centaurea arvensis*), վարդատերեփուկ սովորական (*Amberboa amberboi*), վարդատերեփուկ Իլյինի (*Amberboa iljiniana*), վարդատերեփուկ մոշկային (*Amberboa moschata*), վարդատերեփուկ Սոսնովսկու (*Amberboa sosnovskyi*), գազ ամբողջատերև (*Astragalus holophyllus*), ինչպես նաև Կովկասում միակ ականթ դիոսկորեյանման (*Acanthus dioscoridis*) տեսակի աճեցվայրը:

Արիդային երկրներում ջրաճահճային բնակմիջավայրերի արհեստական չորացումը շատ լուրջ վտանգ է էկոհամակարգերի և հիգրո- ու հիդրոֆիլ կենսաբազմազանության համար: Արարատյան հարթավայրի աղակալված ճահիճների չորացման, ինչպես նաև անասունների արածեցման արդյունքում վտանգի են ենթարկվում Կարմիր գրքում ընդգրկված հետևյալ տեսակները՝ խլուպուզ ընձյուղավոր (*Merendera sobolifera*), սֆերոֆիզա աղուտային (*Sphaerophysa salsula*), ֆրանկենիա փոշեպատ (*Frankenia pulverulenta*), հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica*), կնյուն սուր (*Juncus acutus*), կտավատ Բարսեղյանի (*Linum barsegianii*), թեզիում սեղմված (*Thesium compressum*), կղմուխ Օշեի (*Inula aucheriana*), տատասկ թևավոր (*Cirsium alatum*), ինչպես նաև Կարմիր գրքում գրանցված ջրա-ճահճային բուսականության հետևյալ ներկայացուցիչները՝ ծովոսպ լողացող (*Salvinia natans*), տելիպտեր ճահճային (*Thelypteris palustris*), նետախոտ նետախոտանման (*Sagittaria sagittifolia*), կկվածաղիկ (*Coccyganthe flos-cuculi*), ջրաերեքնուկ եռատերև (*Menyanthes trifoliata*), կոկոռ դեղին (*Nuphar lutea*) տեսակները:

Գյուղատնտեսական և էներգետիկ նպատակներով ջրառի արդյունքում հաճախ չորանում է գետերի հունը, որի պատճառով ոչնչանում են ափամերձ և ջրային էկոհամակարգերի տարրերը, հատկապես ձկնատեսակներն ու նրանց կերային բազան: Հաճախ կամայական ձևով կազմակերպվում են հունների մաքրման և փոփոխման աշխատանքներ, որի արդյունքում ոչնչանում են գետերի արդեն ձևավորված բիոտոպերը՝ զրկելով ձկներին կերային բազայից և ձվադրելու հնարավորություններից: Մեծամոր գետի համակարգում 2014 թ.-ին անցկացված թռչունների հաշվառման արդյունքները ցույց տվեցին, որ այդ տարածքն ամբողջովին կորցրել է իր նշանակությունը՝ որպես տեսակների ձմեռման վայր: Որսի շրջանում որսորդների կողմից իրականացվող անհանգստացումը, ինպես նաև ողջ տարածքի կենսամիջավայրի փոփոխությունները (գյուղատնտեսական նպատակով հողերի հերկումը և ճահիճների չորացումը) հանգեցրել են թռչնաֆաունայի ամբողջական աղքատացման: Հաշվառման օրվա ընթացքում գրանցված 16 թռչնատեսակի ընդանուր քանակության 81 %-ը կազմել են սպիտակ արագիլները, որոնց մի մասը, անկախ եղանակային պայմաններից, ամեն տարի ձմեռում է այստեղ:

5. Անտառահայրումներ. 2011 թ. GIZ-ի <<Կենսաբազմազանության կայուն կառավարումը Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակում հեռահար զոնդավորմամբ կիրառված հետազոտության արդյունքում պարզվել է, որ Հայաստանում անտառները զբաղեցնում են 332 հազ. 333 հա տարածք: Ստացվում է՝ Հայաստանում վերջին 18 տարում հատվել է ընդամենը 1.7 հազ. հա անտառ, որն իհարկե հեռու է իրականությունից, քանի որ 1993-2004 թթ. իրականացված հատումներից հետո տեղի ունեցած անտառի անկանոն վերաճը արբանյակային նկարով երևում է որպես անտառածածկ տարածք, որն ըստ էության մացառուտներ և թփուտներ են, որոնց որակը և հետագայում անտառ դառնալու հնարավորությունը քիչ հավանական է: Բացահայտվել է նաև, որ քարտեզներում առկա անճշտությունների հետեւանքով ավելի քան 23 հազ. հա անտառ ընդգրկված չի եղել հանրապետության անտառային ֆոնդում: Ընդ որում՝ հեռահար զոնդավորումը չի բացահայտում նաև անտառի այն որակական փոփոխությունները, որոնք ակնհայտ նկատվում են Հայաստանում: Անտառհատումների արդյունքում ավելի ինտենսիվ է ընթանում անտառի կազմի ոչ ցանկալի փոփոխություն՝ տնտեսապես ավելի բարձրարժեք կաղնու և հաճարենու փոխարինում է համեմատաբար ցածրարժեք բոխին: Բնականաբար՝ առկա է նաեւ անտառի նոսրացում: Անտառների հատումը, բացի ակնառու վտանգից, հանգեցնում է անտառի ստորին գոտու տեսակների անհետացմանը, այդ թվում՝ Կարմիր գրքում ընդգրկված հետևյալ տեսակները՝ *Galanthus alpinus*, *Galanthus artjuschenkoae*, *Galanthus lagodechianus*, *cyclamen verum*, *Colchicum goharae*, *Colchicum ninae*, *Colchicum umbrosum*:

Չնայած ըստ պաշտոնական տվյալների ապօրինի անտառհատումների ծավալը երկրում կրկնակի կրճատվել է, սակայն համատարած անտառհատման ենթարկված տարածքներում էկոլոգիական վիճակի բացասական փոփոխությունները երկարաժամկետ բնույթ են կրում: Որպես օրինակ կարելի է բերել ՀՀ Լոռու մարզի անտառային էկոհամակարգերի առկա վիճակի պատկերը (տես՝ ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը): Արձանագրվել է, որ 1991-2000 թթ. ապօրինի ծառահատումների պատճառով Լոռու մարզի անտառների բնական վերաճի պայմանները խաթարվել են, մերկացել են անտառապատ լեռնալանջերի զգալի տարածքներ: Սերմնային ծագման անտառների տարածքները պակասել և փոխարենը ավելացել են կոճղաշիվային և երկրորդական նշանակության ծառատեսակներն ու թփատեսակները: Լեռնային ռելիեֆի պայմաններում այս երևույթները խիստ անցանկալի են: Մարզի անտառներն ունեն բացառապես սանիտարահիգիենիկ և ջրապաշտպան նշանակություն: Մարզի անտառածածկ սարալանջերը հիմնականում ունեն թեքության բարձր աստիճան: Կախված լանջի թեքությունից ու բնակլիմայական պայմաններից, ինչպես նաև սեյսմիկ իրավիճակից՝ շատացել են սողանքային երևույթները, տեղատարվում է սևահողը, որի վերարտադրությունը լեռնային պայմաններում շատ երկար ժամանակ է պահանջում: Բնական աղբյուրների զգալի մասը դարձել է սակավաջուր: Ապօրինի և անկանոն անտառհատումների պատճառով հիմնական անտառկազմող ծառատեսակների բնական վերաճի պայմանները խաթարվել են և առանց լրացուցիչ անտառվերականգնման միջոցառումների հնարավոր չէ վերականգնել մարզի անտառային էկոհամակարգի նախկին վիճակը:

Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ անտառները լեռնային են, պաշտպանական նշանակության, և փայտանյութի ներքին պահանջարկը մի քանի անգամ գերազանցում է անտառների արտադրողականությունը, անհրաժեշտ է անտառի սոցիալ-տնտեսական նշանակությունը ստորադասել բնապահպանական նշանակությանը: Այս առումով պետական անտառկառավարման համակարգը պետք է դիտվի որպես դոտացիոն, մասնակի ինքնաձախսաձածկ, ոչ շահութաբեր ոլորտ՝ պահանջելով անտառների պահպանության և վերականգնման նպատակով միջոցների շարունակական ներդրումներ:

6. Հիդրոէներգետիկա. Հայաստանում ՓՀԷԿ-երի կառուցումը համարվում է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն, որն իրականացվում է ՓՀԷԿ-երի զարգացման սխեմային (2009 թ.) համապատասխան: Սխեմայով նախատեսվում է 115 ՓՀԷԿ-ի կառուցում: 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության համար լիցենզիաներ են տրվել 150 ՓՀԷԿ-ին:

ՓՀԷԿ-երի զարգացման զարգացման սխեմայի իրականացմանը զուգահեռ, Հայաստանում առաջացել են ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի, կենսաբազմազանության, ԲՀՊՏ-ների, լանդշաֆտների, բնակչության սոցիալական վիճակի եւ կյանքի որակի հետ կապված խնդիրներ (<<Փոքր ՀԷԿ-երի սոցիալ-էկոլոգիական ազդեցության վերլուծություն>>, Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան): ՓՀԷԿ-երի նախագծման և շահագործման ընթացքում հիմնականում հաշվի չեն առնվում ջրային ֆաունայի կարիքները, իսկ լեռնային գետերի ջրային ռեժիմի փոփոխության ազդեցությունը ասփամերձ և ջրային էկոհամակարգերի ու կենսաբազմազանության վրա ոչ միայն չի գնահատվել, այլև չի ուսումնասիրվել:

2014 թ. Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբի կողմից իրականացված մոնիթորինգը բացահայտել է, որ ձվադրավայր հանդիսացող գետերի վրա կառուցված ՓՀԷԿ-երը, որոնք հիմնականում չունեն նորմերին համապատասխանող ձկնանցարաններ և ձկնապաշտպան կառույցներ, ուղղակիորեն վտանգում են ձկնատեսակների սեռահասուն առանձնյակների գոյությունը, որոնք ձվադրավայրեր հասնելու համար գետերով բարձրանում են դեպի վեր: Բացի այդ, շատ ՓՀԷԿ-եր չեն պահպանում ջրի թույլատրելի էկոլոգիական թողքերի սահմանված չափաքանակները, ինչը բերում է գետերի էկոհամակարգերի դեգրադացման:

7. Ռեկրեացիա և զբոսաշրջություն. Էկոհամակարգերի վրա ռեկրեացիայի և զբոսաշրջության ազդեցությունը հիմնականում դրսևորվում է բուսածածկի ռեկրեացիոն տրոփման ձևով: Մյուս կողմից անտառների ռեկրեացիոն նպատակներով թերօգտագործումը անուղղակիորեն նպաստում է բնափայտի մթերման ծավալների աճին, մինչդեռ ռեկրեացիայի և էկոզբոսաշրջության զարգացումը մի քանի անգամ տնտեսապես և բնապահպանական տեսանկյունից առավել ձեռնտու և շահեկան ուղղություն է, որի կազմակերպման համար դեռևս չկան համապատասխան մոտեցումներ: Վտանգ է ներկայացնում խնջույքների վայրերում կենցաղային թափոններով աղտոտումը: Վերջին տարիներին իրավիճակը մասնակիորեն բարելավվում է, մասնավորապես՝ <<Դիլիջան>> ազգային պարկի Հաղարծնի ձորում ստեղծվել են բացօթյա խնջույքների համար կահավորված վայրեր, նույնը Գառնիում, Օրգովում և այլն:

Գեղազարդ ծաղիկների հավաքը սպառնալիք է հանդիսանում որոշ բուսատեսակների պաշարների կրճատման և տեսակային կազմի փոփոխության համար, օրինակ՝ սակավատերև կակաչը (*Papaver paucifoliatum*) փոխարինում է արևելյանին (*P. orientale*):

Անհրաժեշտ է բնապահպանական նորմերի պահպանմամբ զարգացնել զբոսաշրջային ինդուստրիան՝ ստեղծելով համապատասխան ենթակառուցվածքներ:

1.4.2. Կենսառեսուրսների գերօգտագործում. Սպառնալիքներից են՝ անօրինական որսորդությունը, օգտակար բույսերի անկանոն մթերումները և այլն, որոնք պայմանավորված են ոչ միայն բնապահպանական վերահսկողական կառույցների անբավարար աշխատանքով, այլև օրենսդրության անկատարությամբ, հատկապես՝ կենսառեսուրսների օգտագործման նորմավորման և չափաքանակների որոշման առումով: Կենսառեսուրսների արդյունավետ կառավարման հիմնական անհրաժեշտ տարրերը՝ հաշվառումը, գույքագրումը և մոնիթորինգը, դեռևս պատշաճ մակարդակով և ծավալով չեն իրականացվում: Կենսաբազմազանության վերաբերյալ լիարժեք տեղեկատվական համակարգի բացակայությունն իր հերթին բացառում է կենսաբազմազանության վրա մարդածին և բնական գործոնների ազդեցության իրական գնահատումը, պատճառած վնասի հաշվառումը և ամենակարևորը՝ հստակ տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացումը:

Չնայած որսի ժամկետների, որսատեսակների ցանկի և չափաբաժինների հետ կապված հարցերը քննարկվում են համապատասխան կազմակերպությունների մասնագետների հետ, սակայն միշտ չէ, որ նրանց կողմից արված առաջարկությունները հաշվի են առնվում:

Ինչ վերաբերում է բուսատեսակների օգտագործման չափերին, ապա պատկերը պարզ չէ: Ըստ պաշտոնական տվյալների՝ դեղատու, ուտելի, տեխնիկական, գեղազարդ վայրի բույսերի օգտագործման նպատակով տրամադրված թուլտվությունների թիվը անհավատալի փոքր է (2011-2013 թթ. բուսական աշխարհի օբեկտների արտահանման և ներմուծման համար 5 թույլտվություն է տրվել): Այս իրավիճակում զարմանալի չէ, որ բնօգտագործման դիմաց վճարների ընդհանուր կառուցվածքում կենսապաշարների օգտագործման վճարները 2012 թ.-ին կազմել են 0.7 տոկոս:

Վերջին տարիներին զգալիորեն ավելացել է նաև գեղազարդ վայրի բույսերի հավաքը ծաղկային ձևավորումների նպատակով, այդ թվում՝ Կարմիր գրքում գրանցված տեսակների՝ նեկտարասկորդում եռավտնաչափ (*Nectaroscordum tripedale*), ձնծաղիկ ալպիական (*Galanthus alpinus*), ձնծաղիկ Արտյուշենկոյի (*Galanthus artjuschenkoae*), ձնծաղիկ լագոդեչիի (*Galanthus lagodechianus*), վարդատերեփուկ մուշկային (*Amberboa moschata*), հիրիկ նրբագեղ (*Iris elegantissima*), հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica*), հիրիկ սիբիրյան (*Iris sibirica*), ջրաշուշան սպիտակ (*Nymphaea alba*), արջտակ գարնանային (*Cyclamen verum*), ինչը անհրաժեշտ է կարգավորել օրենսդրորեն և պատշաճ վերահսկողությամբ:

1.4.3. Շրջակա միջավայրի աղտոտում. Կենսաբազմազանության և էԾ-ների փոփոխությունները հիմնականում առաջանում են հողերում վնասակար քիմիական նյութերի կուտակման, ստորերկրյա ջրերի և գետերի աղտոտման, արդյունաբերական թափոնների կուտակման և լանդշաֆտների դեգրադացման պատճառով, ինչը

առաջացնում է տեսակների աճի, զարգացման և վերարտադրության պայմանների խախտում, անտառային էկոհամակարգերում արժեքվոր, անհետացող և հազվագյուտ տեսակների ոչնչացում, ագրոցենոզների բերքատվության անկում, բերքի որակի վատթարացում:

Հիմնական վտանգն առաջանում է հանքարդյունաբերական թափոնների առաջացման, կուտակման և պահպանման դեպքում: Ներկայումս ՀՀ տարածքում հաշվում են թվով 19 պոչամբարներ, որոնցում կուտակված է շուրջ 220 մլն. մ³ ապարներ: Պոչամբարների հետևանքով աղտոտված գետ է համարվում Ողջին, որի հովտում մոտավոր հաշվարկներով կան 150 մլն. տ պոչանք, որոնք պարունակում են թելուր, սելեն, բիսմութ, ռենիում, գալիում, պղինձ, մոլիբդեն և այլն: Էկոլոգիական ճգնաժամային վիճակում է գտնվում նաև Դեբեդ գետը, որի աղտոտման պատճառ են դառնում Ալավերդու պղնձաձուլական և Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատները: Այս և այլ աղտոտված գետերի ֆաունան միանշանակ կրճատվել է, իսկ գետային և ցամաքային էկոհամակարգերի աղետալի վիճակը խորանում է տարեցտարի:

Տագնապալի է նաև Կոտայքի մարզում գործող ցեմենտի արտադրությունը, որտեղ տեխնիկական սարքավորումների անկատարության պատճառով օդ է արտանետվում ցեմենտային փոշին, որն ազդում է բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների վրա՝ փոփոխելով հողային պայմանները, ազդելով հատկապես անողնաշար կենդանիների ֆաունայի և բույսերի ֆոտոսինթետիկ ակտիվության վրա:

Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրահոսքերը՝ գետեր, առվակներ, դրենաժային համակարգեր, վեր են ածվել կոյուղագծերի: 2009-2012 թվականներին կեղտաջրերի ընդհանուր ծավալը գրեթե կրկնապատկվել է: Հանրապետության մաքրման կայաններում լավագույն դեպքում կատարվում է մեխանիկական մաքրում: Մնացած հոսքաջրերը լցվում են հոսող ջրային էկոհամակարգեր: Ընդ որում՝ տնտեսական նպատակներով վերցվող ջրի և արտազատված հոսքաջրերի քանակները տարեցտարի աճում են (աղյուսակ 13):

Աղյուսակ 13.

Հայաստանի ջրային էկոհամակարգերից իրականացված ջրառը և ջրահեռացումը 2009-2012 թթ. ժամանակահատվածում

Տարիներ	Ջրառ (մլն. մ ³)	Ջրահեռացում / որից առանց մաքրման (մլն. մ ³)
2009	22464,7	359,3 / 37,0
2010	2126,4	430,5 / 139,1
2011	2438,3	750,5 / 246,8
2012	2 941,1	813,4 / 307,4

Գետերում հայտնաբերված ֆիտոպլանկտոնային ջրիմուռների 60 %-ը հանդիսացել են ջրերի օրգանական աղտոտվածության կենսաինդիկատորներ: Համապատասխան չափանիշների վերլուծությունը ցույց տվեց, որ Սևանա լճի

ավագանի հիմնական գետերի ջրերում առկա է թույլ օրգանական աղտոտվածություն: Գետերն առավել մաքուր են եղել 2008 թ.-ին, 2009-2011 թթ. ժամանակահատվածում դիտվել է աղտոտվածության որոշակի աճ:

Մակերևութային հոսքերը և լանդշաֆտները աղտոտվում են նաև կոշտ կենցաղային թափոններով: Շարունակվում է չլուծված մնալ վտանգավոր թափոնների և ժամկետանց քիմիական նյութերի, այդ թվում՝ թունաքիմիկատների ուտիլիզացիայի հարցը: Օրինակ՝ վերջին տարիներին ի հայտ եկավ <<Էրեբունի>> արգելոցի մոտակայքում գտնվող քիմիական նյութերի գերեզմանոցի խնդիրը:

Գյուղատնտեսության մեջ հիմնական վտանգը առաջանում է պարարտանյութերի և պեստիցիդների ոչ չափավոր օգտագործումից: Ընդ որում՝ հաճախ օգտագործվում են ժամկետանց նյութեր և արյունավետության բարձրացման համար մեծացվում է դրանց չափաբաժինը, ինչը գյուղատնտեսական մթերքի միջոցով լուրջ վտանգում է մարդկանց առողջությանը: Վերջին տարիներին այդ գործընթացի մասին պաշտոնական տվյալները բացակայում են:

1.4.4. Օտարածին տեսակների ազդեցություն. Հայաստանի առավել վտանգավոր ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ժամանակակից տարածման վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից որոշները վերջին տարիներին զգալիորեն ընդլայնել են իրենց տարածման սահմանները (հավանաբար կապված կլիմայական պայմանների փոփոխման և խախտված բնակմիջավայրերի տարածքների ընդլայնման հետ): Բարձրացել է այդ տեսակների պոպուլյացիաների խտությունը, սկսվել է բնական էկոհամակարգեր դրանց ներթափանցումը և հաստատումը: Այնպիսի ագրեսիվ տեսակների տարածման վերաբերյալ, ինչպիսիք են Ամբրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia*), Կաթնափուշ բժավոր (*Silybum marianum*), Երկնածառ բարձրաբուն (*Ailanthus altissima*), Ռոբինիա կեղծ ակացիան (*Robinia pseudoacacia*), դիտարկման աշխատանքները սկսվել են միայն վերջին տարիներին: Նկատվել է թվարկված տեսակների ինտենսիվ տարածում, սակայն վերահսկման որևէ միջոցներ չեն ձեռնարկվում: Կարգավորված չէ օտարածին տեսակների ինտրոդուկցիայի իրականացման օրենսդրությունը: Գյուղատնտեսական նշանակության տեսակների համար տրվում է թույլտվություն ՀՀ ԳՆ-ի կողմից՝ առանց կենսաբանական ինվազիաների ռիսկերի գնահատման:

Վերջին տարիներին հանրապետությունում կատարվել է ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածման ընդհանուր գնահատում: Արդյունքում նշվել է 77 օտար ինվազիվ և տեղական էքսպանսիվ տեսակներ, որոնք ներկայումս տարածվում են խախտված բնակմիջավայրերում և արդեն ներխուժել են բնական էկոհամակարգեր՝ վտանգելով վայրի կենսաբազմազանությունը: Այդ տեսակներից առավել անհանգստացնող են հետևյալները՝ Հազարտերևուկ ասպիրակի (*Achillea filipendulina*), Երկնածառ բարձրաբուն (*Ailanthus altissima*), Անթեմ շնային (*Anthemis*

cotula), Անթեմ Տրիումֆետիի (*Anthemis triumfettii*), Գազ այծմորուքանման (*Astragalus galegiformis*), Տերեփուկ արևային (*Centaurea solstitialis*), Սպիտակաձրիկ սովորական (*Leucanthemum vulgare*), Կառ հայկական (*Onopordum armenum*), Կաթնափուշ բժավոր (*Silybum marianum*), Լվաձաղիկ կուսատերև (*Tanacetum parthenium*), Եռակողասերմիկ անդրկովկասյան (*Tripleurospermum transcaucasicum*), Թխկի հացենիատերև (*Acer negundo*), Սխտորաբույս դեղատու (*Alliaria petiolata*), Կանճրակ թուրքեստանյան (*Carthamus turkestanicus*), Տերեփուկ իբերիական (*Centaurea iberica*), Խիժաճարճատուկ կնյունանման (*Chondrilla juncea*), Տատասկ ալեհեր (*Cirsium incanum*), Հոտոտ արևելյան (*Clematis orientalis*), Կոնիզա կանադական (*Conyza canadensis*), Դառը բիան (*Goebelia alopecuroides*), Բալդրդան Սոսնովսկու (*Heracleum sosnowskyi*), Կառ փշոտ (*Onopordum acanthium*), Խոնդատ փոված (*Verbascum laxum*) և այլն: Բացի այդ վերլուծվել է ինվազիվ տեսակների կառավարման ժամանակակից համաշխարհային փորձը և առանձնացվել է Հայաստանում հանդիպող ավելի քան 300 տեսակ (ինտրոդուցված և աբորիգեն), որոնք ապագայում կարող են վտանգ ներկայացնել, որպես ինվազիվ տեսակներ:

Միջազգային առևտրի զարգացումը բերում է ինտրադուցված տեսակների թվի մեծացմանը: Վերջին տարիներին հանրապետության շատ տնտեսություններում մեծ վնաս են հասցնում ամերիկյան սպիտակ թիթեռը (*Hyphantria cunea*), կարտոֆիլի ցեցը (*Phthorimaea oherculella*): Վերջինիս առաջին վնասները նկատվել են 2012 թ. Արարատյան դաշտում և համապատասխան միջոցառումներ չիրականացնելու հետևանքով, այն արագորեն տարածվել է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի ավելի քան 45 համայնքներում: Այն տարածվել է նաև բնական էկոհամակարգերում:



**Ամբրոզիա օշինդրատերև
Ձորագետ ե/գ կայարանի մոտ**



**Կաթնափուշ բժավոր
Հարավային Հայաստանում**



**Երկնածառ բարձրաբուն
Հարավային Հայաստանում**



**Ռոբինիա կեղծ ակացիա
Հարավային Հայաստանում**



**Գազ այծմորուքանման
Հյուսիսային Հայաստանում**



**Հոտոտ արևելյան
Արփա գետի ձորում**



Կոնիզա կանադական Հարավային Հայաստանում

2014 թ. հայտնաբերվել է խոշոր եղջերավոր անասունների նոր տեսակի մակարոյ՝ *Buxtonella sulcata* ինֆուզորիան: Գնահատված չէ *Trichoferus campestris*-երկարաբեղիկ բզեզի ազդեցությունը վայրի ծառափայլին բուսականության վրա: Այս տեսակը, հավանաբար, ինտրոդուցվել է բնափայտի հետ և 1990-ական թվականներին գրանցվել է Երևան և Գյումրի քաղաքներում, իսկ վերջին տարիներին հայտնաբերվել է Հրազդանի, Կապանի, Արմավիրի շրջակայքներում: Այս տեսակների ազդեցությունը կենսացենոզների և դրանց առանձին բաղադրիչների վրա դեռ ուսումնասիրված և գնահատված չէ:

1.4.5. Կլիմայի փոփոխություն. Համաձայն ՄԱԿ-ի <<Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ՀՀ երկրորդ ազգային հաղորդագրության մշակում>> (2010թ.) ծրագրի շրջանակներում իրականացված վերլուծությունների՝ Հայաստանում սպասվում է չորային լանդշաֆտների ընդարձակում, անտառային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտների զբաղեցրած տարածքների նվազում և անտառների խոցելիության ավելացում: Էկոլոգիապես առավել անկայուն հարավային դիրքադրության անտառներում տեղի կունենա քսերոֆիտացում և չորասեր նոսր անտառների ուղղաձիգ տեղաշարժ դեպի վեր: Անտառների ստորին սահմանում սպասվում է սերմնային վերարտադրության պայմանների վատացում, կիսաանապատային տեսակների ներթափանցում, ինչպես նաև անտառի ստորին սահմանի տեղաշարժ դեպի վեր: Կենտրոնական և հարավային Հայաստանի անտառտարածքների ստորին գոտում զգալի կլինի լեռնատափաստանային բուսականության ազդեցությունը և կոճղաշիվային ծագման ծառուտների նահանջը: Մակերևութային բարձր հոսք ունեցող չորային լանդշաֆտների ընդարձակումը կհանգեցնի էրոզիոն-սելավային երևույթների ինտենսիվության և անտառային հողերի տեղատարման, մակերևութային հոսքի որակական և քանակական բնութագրերի վատթարացման, ջրային հաշվեկշռի խախտման: Արիդայնության արդյունքում էրոզիոն երևույթների ակտիվացումն առանց կանխարգելիչ միջոցառումների իր հերթին կհանգեցնի կենտրոնական և հարավային Հայաստանի անտառտարածքների ստորին գոտում և հարավային դիրքադրության լեռնալանջերին անտառաճման պայմանների վատթարացմանը և անտառաճածկի նվազեցմանը:

Ներկայումս սկսվել են Հայաստանի էկոհամակարգերի կլիմայի փոփոխության հետ կապված մոդելավորման աշխատանքներ: ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում ուսումնասիրությունների անցկացման համար օգտագործվում է էկոհամակարգերի փոփոխությունների մոդելավորում՝ հիմնված <<Հոլդրիջի կենսական գոտիների>> համակարգի վրա («Holdridge Life Zones»): Ելնելով կլիմայի փոփոխության կանխատեսումներից՝ մշակվել են <<կենսակլիմայի>> փոփոխության և հիմնական էկոհամակարգերի փոփոխության համապատասխան կանխատեսումներ: Բնական էկոհամակարգերի փոփոխության մոդելավորման

հիման վրա անց է կացվել կլիմայի փոփոխության վտանգի գնահատում Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված 452 տեսակի համար: Պարզվել է, որ դրանցից 238 բուսատեսակի համար սպասվող կլիմայի փոփոխությունը զգալի ազդեցություն չի ունենա, իսկ 140 տեսակների համար կլիմայի փոփոխության արդյունքում պայմանները զգալիորեն կբարելավվեն: Դրանք ջերմասեր տեսակներ են, որոնց ավելի լայն տարածման համար ներկայումս արդյունավետ ջերմաստիճանների գոմարը բավարար չէ: Մյուս կողմից՝ 74 բարձրակարգ բուսատեսակի համար էկոհամակարգերի և աճելավայրերի փոփոխությունները դառնալու են գոյատևման որոշիչ գործոններ: Բույսերի այս խմբին են պատկանում առաջին հերթին այն տեսակները, որոնք հարմարված են մերձալպյան և ալպյան գոտիների մեզոֆիլ պայմաններին և որոնց համար կլիմայի փոփոխությունը կհանգեցնի աճելավայրերի բազմազանության կտրուկ կրճատման: Այս տեսակներին են պատկանում՝ *Botrychium lunaria* (Ողկուզապտեր կիսալուսնաձև), *Allium egorovae* (Սոխ Եգորովայի), *Antennaria caucasica* (Կատվատոտիկ կովկասյան), *Eriophorum latifolium* (Կիզիսոտ լայնատերև), *Rhododendron caucasicum* (Մրտավարդ կովկասյան), *Lomatogonium carinthiacum* (Լոմատոգոնիում կարինտյան), *Scilla rosenii* (Մկնասոխ Ռոզենի) և այլն: Այս նույն խմբին են պատկանում նաև ստորին և միջին լեռնային գոտիների գերխոնավ տարածքների ներկայացուցիչները, որոնց աճելավայրերի մակերեսները զգալիորեն կրճատվելու են տեղումների նվազման և ջերմաստիճանի բարձրացման հետևանքով, այդ թվում՝ *Carex pendula* (Բոշխ կախված), *Trigonella capitata* (Հացհամեմ գլխիկավոր) և այլն: Բացի այդ՝ կլիմայի փոփոխության վտանգը մեծ է տափաստանների, մարգագետնատափաստանների և մարգագետինների մեզոֆիլ տեսակների համար, որոնց պոպուլյացիաները շատ փոքր են, ունեն մեկուսացված աճելավայրեր և հասանելի կդառնան կլիմայի փոփոխության արդյունքում: Այս խմբին են պատկանում՝ *Acanthus dioscoridys* (Ականթ դիոսկորեյանման), *Sternbergia colchiciflora* (Շտերնբերգիա շնդեղածաղկային), *Grossheimia caroli-henricii* (Գրոսհեյմիա Կարլ-Հենրիի) և այլն: Հաշվի առնելով, որ նշված բույսերի մեծ մասի համար գոյություն ունեն այլ լուրջ սպառնալիքներ, մասնավորապես՝ աճելով տնտեսական ինտենսիվ գործունեության գոտում, կլիմայի փոփոխությունը գոմարվելով դրան, դառնալու է գոյատևման հիմնական վտանգ:

Կլիմայի փոփոխությունը, մասնավորապես՝ ջրի ջերմաստիճանի բարձրացումը կարող է հանգեցնել հիդրոբիոտոնների ջերմային սթրեսի և, հետևաբար, օրգանիզմների ֆիզիոլոգիական գործընթացների և վարքագծի խախտման:

Կլիմայի տաքացման պայմաններում տեղի է ունենում նաև խորքային սառը շերտերի ջերմացում, որի հետևանքով ամռան ամիսներին խիստ սահմանափակվում է սառը ջրերին հարմարված ձկնատեսակների գոյության համար օպտիմալ տարածքը: Սևանա լճում հանդիպող առավել արժեքավոր սաղմոնազգի ձկնատեսակները սառը ջուր նախընտրող ձևեր են: Հետևաբար ջրի ջերմաստիճանի

բարձրացման դեպքում դրանց համար կստեղծվեն ոչ նպաստավոր պայմաններ: Այդ առումով առավել խոցելի տարածք է Մեծ Սևանը, որի խորությունը զգալիորեն փոքր է Փոքր Սևանի համեմատ և ավելի շատ է ենթակա ջերմային փոփոխությունների:

Սևանա լճի հիմնական արդյունագործական ձկնատեսակի՝ սիգի համար վերարտադրման հաջողությունը կախված է թթվածնային և ջերմաստիճանային ռեժիմից, գրունտի բնույթից, ալեկոծությունից և այլն: Ջերմաստիճանի փոփոխությունը կարող է բացասաբար անդրադառնալ նաև նրանց կերային բազայի զարգացման վրա՝ հանդես գալով որպես սահմանափակող գործոն:

Ջերմաստիճանի բարձրացումը կարող է դրական ազդեցություն ունենալ ծածանի պոպուլյացիայի վրա: Վերջինս աչքի է ընկնում մեծ ճկունությամբ և արագ հարմարվելով նոր պայմաններին կարող է դառնալ լուրջ մրցակից մյուս արժեքավոր սաղմոնազգի ձկնատեսակների համար: Կյանքի առաջին տարում ծածանը սննդային սպեկտրի առումով մրցակցում է սիգի և կողակի հետ, առավել մեծ տարիքում՝ կողակի և բեղլուի հետ: Ընդհանուր առմամբ ակնկալվում է, որ ջերմաստիճանի բարձրացումը պայմաններ կստեղծի առավել սակավարժեք ձկնատեսակների զարգացման համար:

1.5. Կենսաբազմազանության փոփոխությունների ազդեցությունը ԷԾ-ների վրա և դրա սոցիալ-տնտեսական ու մշակութային հետևանքները

Լեռնային էկոհամակարգերը կարևոր արտադրական ռեսուրս են հանդիսանում և բնակչությունը դարեր շարունակ օգտվում է էկոհամակարգերի կողմից տրամադրած բարիքներից ու ծառայություններից: Հայաստանի տնտեսության ճյուղերի զարգացումը՝ ներառյալ գյուղատնտեսության, ուղղակի կամ միջնորդավորված, լիովին կամ մասնակի կախվածություն ունի բնական էկոհամակարգերի կարգավորող, ապահովող, մշակութային, նպաստող (կամ միջավայրագոյացնող) ծառայություններից (աղյուսակ 14): Ընդ որում՝ էկոհամակարգերի եւ դրանց գործառույթների թեկուզ մասնակի վերականգնումը սովորաբար շատ ավելի թանկ է, քան դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը: Դրա ցայտուն օրինակը այն ֆինանսական նարդրումներն են, որոնք վերջի 10 տարվա ընթացքում ուղղվում են Սևանա լճի մակարդակի բարձրացման վրա, կամ Սևանա լճում ձկնային պաշարների վերականգնմանը (տարեկան միայն երկու տեսակի մանրաձկան աճեցման և լիճ վերադաձման համար պետքյուջեից տրամադրվում է 60 մլն.դրամ): Հաշվի առնելով մեր երկրում բնության վրա մարդու ազդեցության ծավալները, ԷԾ-ների պահպանումը և վերականգնումը պետք է դառնա տնտեսական գործունեության անբաժանելի մասը, ինչը պահանջում է տնտեսական վարքի նորմերի ու կանոնների, ինչպես նաև որոշումների կայացման փոփոխություն:

Աղյուսակ 16.

ԷԾ-ների դասակարգումը և դրանց դերը Հայաստանի բնության և մարդկանց բարեկեցության համար

Բնական ԷԾ-ների բնույթը	Տվյալ ծառայություններ տրամադրող էկոհամակերգերը	Դրական ազդեցությունը բնության, տնտեսության և բնակչության համար	Կենսաբազմազանության և ԷԾ-ների փոփոխման սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքները
Ապահովող ծառայություններ՝ էկոհամակարգերից ստացված ապրանքներ			
1. Սննդամթերք 2. Դեղամիջոցներ 3. Նյութեր 4. Վառելիք 5. Անասնակեր	Կիսաանապատային, տափաստանային, անտառային, մարգագետնային, ենթալպյան, ալպյան, ջրաճահճային	Բնական էկոհամակարգերի արտադրանքի օգտագործում՝ վայրի ֆլորայի, ֆաունայի ու սնկերի առանձին ներկայացուցիչների, փոշոտիչների գործունեության արդյունքի ուղղակի յուրացում: Տարբեր տնտեսական ճյուղերի զարգացում:	Չկանոնակարգված հավաքի, մթերման, գերօգտագործման պատճառով դեղաբույսերի, ուտելի, կերային ու տեխնիկական բույսերի տեսակների, ձկնային պաշարների կրճատում, անտառային տարածքների նոսրացում, արոտավայրերի կազմալուծում: Նվազում է էկոհամակարգերի կողմից տրամադրվող բարիքների ծավալն ու քանակը, խորանում է բնակչության աղքատության մակարդակը, ինչը ստիպում է մարդկանց կրկին ուժեղացնել ճնշումը բնական էկոհամակարգերի ու դրանց բաղադրիչների վրա:
Քաղցրահամ ջուր	Ջրային էկոհամակարգեր	Մարդու գոյատևման և առողջ կյանքի, տնտեսական ճյուղերի զարգացման, կենդանի բնության գոյության և վերարտադրության ապահովում:	Քաղցրահամ ջրի բացակայության կամ քանակի նվազեցման դեպքում կտուժի երկրի բնակչությունը՝ խմելու ջրի ու սննդամթերքի պակասի, առողջական խնդիրների սրման, էներգետիկ ռեսուրսների անկման պատճառով: Խոր փոփոխություններ կարձանագրվեն կենսաբազմազանությանում, քանի որ բազմաթիվ տեսակների համար կփոխվեն բնակմիջավայրի օպտիման պայմանները:
Գենետիկական ռեսուրսներ	Բոլոր էկոհամակարգերը	Մշակաբույսերի և ընտանի կենդանիների գենոֆոնդի պահպանման շնորհիվ սելեկցիայի, դեղամիջոցների ստացման և կենսատեխնոլոգիաների միջոցով նոր նյութերի արտադրման ապահովում:	Սպառնում են գյուղատնտեսության զարգացմանը, մարդկանց ապահով կյանքին, էկոհամակարգերի կայունությանը, քանի որ գենետիկական ցածր բազմազանությամբ պոպուլյացիաները շատ ավելի դժվար են ընտելանում շրջակա միջավայրի պայմանների փոփոխություններին:

Բնական ԷԾ-ների բնույթը	Տվյալ ծառայություններ տրամադրող էկոհամակերգերը	Դրական ազդեցությունը բնության, տնտեսության և բնակչության համար	Կենսաբազմազանության և ԷԾ-ների փոփոխման սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքները
Կարգավորող ծառայություններ՝ էկոհամակարգերի չխաթարված գործընթացներից ստացվող օգուտներ			
Օդի որակի և կլիմայի կարգավորում	Բոլոր էկոհամակարգերը, հատկապես անտառային	Կենսաբազմազանության և էկոհամակարգերի վիճակի ու զարգացման բնական դինամիկայի ապահովում, համապատասխան կլիմայական պայմաններին հարմարված գյուղատնտեսության առկայություն, կայուն սանիտարահիգիենիկ վիճակ:	Մոտակա 100 տարիների ընթացքում բնական էկոհամակարգերի սահմանների հնարավոր տեղափոխությունը կարող է հանգեցնել էկոհամակարգերի և կենսաբազմազանության առանձին ներկայացուցիչների տարածման լուրջ փոփոխությունների՝ անտառի վնասատու միջատների զանգվածային բազմացման, բարձր լեռնային գոտու մեզոֆիլ տեսակների արեալի կրճատման և նույնիսկ անհետացման, քսերոֆիլ, այդ թվում՝ մոլախոտերի և ինվազիվ տեսակների ինտենսիվ տարածման: Դրանք սպառնալիք են բնակչության առողջության, մնունդապահովման, ջրապահովման համար:
Ածխածնի կլանում և կուտակում	Բոլոր էկոհամակարգերը, հատկապես անտառային	Էկոհամակարգերի բուսական ծածկույթը, կլանելով մթնոլորտից ածխաթթու գազը և կուտակելով ածխածինը հյուսվածքներում, կարգավորում է գլոբալ կլիման՝ ջերմոցային գազերի նվազեցման միջոցով:	Ցամաքային էկոհամակարգերում պահպանված ածխածինը արտազատվում է էկոհամակարգերի քայքայման կամ վերափոխման ժամանակ: Չխաթարված էկոհամակարգերը, բնորոշ կենսաբազմազանությամբ, դրական դեր են կատարում կլիմայի կարգավորման և մարդկանց առողջ կյանքի ապահովման առումով:
Հիդրոլոգիական ռեժիմի կարգավորում	Բոլոր էկոհամակարգերը, հատկապես անտառային	Գետային հոսքի ձևավորում, ջրապահովման բնական պարբերականության պահպանություն, ջրի պաշարների պահեստավորում և դրա գոլորշիացման կարգավորում՝ բնակչության համար ջրի մատչելիության ապահովման համար	Այդ գործառույթի խախտումը բերում է հողի ջրային և քամու էրոզիայի ավելացում, անապատացման ուժեղացում, բազմաթիվ բուսա- և կենդանատեսակների վիճակի վատթարացում, ագրոցենոզների խախտում և այլն: Հայաստանում անտառատնտեսության պատճառով էկոհամակարգերը կորցրել են ջրակարգավորիչ ֆունկցիաները, նկատվում է աղբուրների, փոքր լճակների, ջրաճահճային այլ տարածքների չորացում, հիդրո- և մեզոֆիլ տեսակների քանակի փոքրացում:

Բնական ԷԾ-ների բնույթը	Տվյալ ծառայություններ տրամադրող էկոհամակարգերը	Դրական ազդեցությունը բնության, տնտեսության և բնակչության համար	Կենսաբազմազանության և ԷԾ-ների փոփոխման սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքները
Ծայրահեղ եղանակային երևույթների մեղմում	Բոլոր էկոհամակարգերը	Էկոհամակարգերը ստեղծում են բնական աղետների հակազդող պաշտպանիչ գոտիներ՝ կանխելով հնարավոր վնասը տնտեսության և բնակչության համար: Ջրաճահճային համակարգերը կլանում են գարնանը ձնհալից առաջացող ջրերը, իսկ բուսածածկը ամրապնդում է լանջերը:	2011-2013 թթ. տարեկան արձանագրվել է 300-400 դեպք՝ ջրհեղեղ, սելավ, սողանք, տեղատարափ անձրև, ցրտահարություն և այլն: Բնական աղետների մասշտաբը և պատճառված վնասը հիմնականում բնական էկոհամակարգերի կազմալուծման և դրանց ծառայությունների լուրջ խախտման հետևանք են: Հայաստանում բնական աղետներին նպաստում են անտառային տարածքների կրճատումը և դեգրադացիան, ջրային էկոհամակարգերի ջրանցողության խախտումը, ճահիճների չորացումը, թափոնակույտների առաջացումը:
Հողի էրոզիայի կանխում	Կիսաանապատային, տափաստանային, անտառային, մարգագետնային, ենթալպյան, ալպյան էկոհամակարգեր:	Բուսածածկույթը կանխարգելում է ջրի և քամու էրոզիան՝ նվազեցնելով ջրհեղեղների, սողանքների հավանականությունը: Դրական դեր է խաղում բնակչության կյանքի որակի բարձրացման տեսակետից՝ որոշ լանդշաֆտային գոտիներում արոտավայրերի դեգրեյսիան կանխելու, ինչպես նաև շնչառական հիվանդությունների ռիսկը նվազեցնելու առումով:	Հայաստանում պիտանի հողերի մոտ 30 տոկոսը էրոզացված է, իսկ մշակահողերի տարեկան միջին էրոզացվածությունը 3-4 % է: Ոռոգվող շրջաններում էրոզիայի պատճառ է հանդիսանում արագ հոսող ոռոգման ջուրը, որը ողողում ու դաշտերից տանում է մեծ քանակությամբ տիղմ՝ հարուստ հանքային նյութերով ու հումուսի մեծ պաշարով: Թեք լանջերի անկանոն մշակումը, անտառների զանգվածային հատումը, բուսական ծածկի ոչնչացումը, արոտավայրերի չկանոնակարգված շահագործումը, կլիմայի փոփոխությունը նպաստել են երկրի շուրջ 80 % -ի անապատացման երևույթների դրսևորմանը, որից 30 %-ը առավել խիստ անապատացված տարածքներն են: Էկոհամակարգերի կողմից այս ծառայության կորուստը սպառնում է պարենային անվտանգությանը, մարդկանց սոցիալական հարցերի լուծմանը: Ջրային և քամու էրոզիայի ենթարկվում են քիմիկատներով մշակված հողերը, որոնց մասնիկները ներթափանցում են օրգանիզմ, ավելանում են առողջական խնդիրները:

Բնական էԾ-ների բնույթը	Տվյալ ծառայություններ տրամադրող էկոհամակարգերը	Դրական ազդեցությունը բնության, տնտեսության և բնակչության համար	Կենսաբազմազանության և էԾ-ների փոփոխման սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքները
Թափոնների կենսաբանական վերամշակում և աղտոտվածության մակարդակի նվազեցում	Բոլոր էկոհամակարգերը, հատկապես ջրաճահճային	Աղտոտվածության նվազեցման, հիվանդածին օրգանիզմների վերացման շնորհիվ երաշխավորվում է բնության և բնակչության առողջ կյանքը:	Հողում թափոնների մեծամասնությունը քայքայվում է մանրէների կենսաբանական ակտիվության շնորհիվ, որով վերանում են պաթոգենները և նվազում է հողի, բիոտայի և գյուղմթերքի աղտոտվածությունը: Աղտոտման չեզոքացումը կայունացնում է էկոհամակարգերը, կենսաբազմազանության և մարդու համար ապահովում է կենսագործունեության օպտիմալ պայմաններ:
<i>Մշակութային ծառայություններ՝ ոչ նյութական օգուտներ, որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից հոգևոր հարստացման, գիտահետազոտական գործունեության զարգացման, ռեկրեացիայի, էսթետիկական փորձի և այլնի միջոցով</i>			
Մշակութային բազմազանություն, հոգևոր և կրոնական արժեքներ, էսթետիկական արժեքներ	Բոլոր էկոհամակարգերը	Վայրի բնության ազդեցությունը մարդկանց մշակույթի և աշխարհայացքի զարգացման, հարմարավետ և հաճելի շրջակա միջավայր ձևավորելու վրա:	Այս էԾ-ի կորուստը առաջացնում է կյանքի նկատմամբ խիստ անբավարարվածություն, նոր մշակութային արժեքների ստեղծման հնարավորությունների պակաս, հոգեկան և սոմատիկ առողջական պրոբլեմներ:
Գիտական և կրթական արժեքներ	Բոլոր էկոհամակարգերը	Էկոհամակարգերը, դրանց բաղադրիչները և նրանցում տեղի ունեցող գործընթացները նպաստում են գիտական ուսումնասիրությունների զարգացմանը և կրթական ծրագրերի իրականացմանը:	Բնության և դրա բաղադրիչների կորուստը ստեղծում է անհաղթահարելի խոչընդոտներ գիտության զարգացման համար, ինչը սպառնում է երկրների զարգացմանը, մարդկության ապահով և բարեկեցիկ կյանքին:
Ռեկրեացիա և էկոգրոսաշրջություն	Բոլոր էկոհամակարգերը	Էկոհամակարգերը և կենսաբազմազանությունը կարևոր դեր են խաղում գրոսաշրջության տարբեր ձևերի համար, որն ապահովում է զգալի տնտեսական օգուտներ, բնակչության եկամուտներ և կրթվածության բարձրացում:	Այս էԾ-ի մատուցման խաթարումը սպառնում է կենսաբազմազանության, լանդշաֆտների և գեներտիկական պաշարների պահպանությանը, բնակչության կայուն եկամուտներ ստանալու հնարավորությանը, կենսամակարդակի բարձրացմանը, զբաղվածության ապահովմանը, ավելացնում է տեղաբնակների կախվածությունը բնական պաշարներից:

Բնական ԷԾ-ների բնույթը	Տվյալ ծառայություններ տրամադրող էկոհամակերգերը	Դրական ազդեցությունը բնության, տնտեսության և բնակչության համար	Կենսաբազմազանության և ԷԾ-ների փոփոխման սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքները
Նպաստող ծառայություններ, որոնք անհրաժեշտ են մյուս ԷԾ-ների գործարկման համար			
Հողագոյացում	Կիսաանապատային, տափաստանային, անտառային, մարգագետնային, ենթալպյան, ալպյան էկոհամակարգեր	Հողագոյացման ծառայությանն աջակցող հիմնական աղբյուրը հողային բիոտան է, որի տեսակային և ենթատեսակային բազմազանությունից է կախված այդ գործընթացի ակտիվությունը:	Հողի բերրի շերթի պակասը ուժեղացնում է հողերի դեգրադացման պրոցեսները, դանդաղեցնում է բույսերի աճը և զարգացումը: Հողային բիոտայի կորուստը խախտում է սննդային շղթան, որից կախման մեջ են գտնվում կենսաբազմազանության այլ բաղադրիչներ և ամբողջական էկոհամակարգը: Կտրուկ անկնում է ապրում գյուղատնտեսության ճյուղերի արդյունավետությունը, ինչն անրադառնում է բնակչության կենսամակարդակի վրա:
Նյութերի կենսաերկրաքիմիական ցիկլերի պահպանում, սնդարար նյութերի և ջրի շրջանառություն	Բոլոր էկոհամակարգերը	Բնությունը և ընդհանրապես կյանքը երկրագնդում միանշանակ կապված է և ի վիճակի են գոյատևել միայն այդ պրոցեսների անընդատության դեպքում:	Այս ծառայության մատուցման խաթարումը կարող է բերել բոլոր կենդանի օրգանիզմների վերացմանը:
Ֆոտոսինթեզ	Բոլոր էկոհամակարգերը, որոնք պարունակում են բուսական օբյեկտներ	Ֆոտոսինթեզի արդյունքում ստեղծվում է կենդանի օրգանիզմներին անհրաժեշտ թթվածինը և կառուցվածքային նյութերը:	Այս ծառայության մատուցման խաթարումը կարող է բերել բոլոր կենդանի օրգանիզմների վերացմանը:

Հայաստանում կենսաբազմազանության և էԾ-ների թերագնահատումը պայմանավորված է հետևյալ խնդիրներով՝

1. հասարակության ներկայացուցիչները, էԾ-ներից օգտվողները, որոշումներ ընդունողները անտեղյակ են էկոհամակարգերի նման գործառույթներից կամ էԾ-ները նույնացնում են էկոհամակարգերում առկա ռեսուրսների հետ.
2. էԾ-ներից ստացվող օգուտները դեռևս գնահատված չեն և ներառված չեն շուկայական հարաբերություններում.
3. էԾ-ների արժեքը հաճախ հաշվի չի առնվում տնտեսական գնահատումների և որոշումների ընդունման ժամանակ, չի արտացոլվում երկրի տնտեսական ցուցանիշներում.
4. կարգավորված չէ էԾ-ներին վերաբերող օրենսդրությունը:

Արդյունքում՝ ճիշտ որոշումների ընդունման համար իրազեկվածության ցածր մակարդակը, անհրաժեշտ ուսումնասիրությունների ու տեղեկատվական բազայի ոչ լիարժեքությունը, կենսաբազմազանության ու էԾ-ների անհրաժեշտության թերի ընկալումը խոչընդոտում են այն գործընթացների ծավալմանը, որոնք կսահմանափակեն կենսաբազմազանության հետագա կորուստը և բնական կապիտալի ոչնչացումը:

էԾ-ների հետ կապված իրավահարաբերությունները դեռևս կարգավորված չեն ՀՀ օրենսդրությամբ: 2013 թ. արվել է առաջին փորձը էԾ գաղափարախոսության հիմնական դրույթները իրավաբանորեն ամրագրելու ուղղությամբ՝ բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգի հաստատման միջոցով (ՀՀ կառավարության 2013 թ. ապրիլի 25-ի նիստի N 16 արձանագրային որոշում): Հայեցակարգը մշակվել է Հայաստանում կենսաբազմազանության և էկոհամակարգերի թերագնահատման խնդիրների լուծման, շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ապահովելու, ինչպես նաև բնապահպանական ներդրումների և ֆինանսական ռեսուրսների համալրման նպատակներով: Այն կարևորում է էԾ-ների վերաբերյալ իրազեկվածության, շուկայական հարաբերությունների ձևավորման, տնտեսական գնահատումների, որոշումների ընդունման, ինչպես նաև տնտեսության մեջ ինտեգրման խնդիրները: Հայեցակարգում տրված առաջարկներն ուղղված են էԾ-ների հետ կապված իրավահարաբերությունների կարգավորմանը, բնական կապիտալի տնտեսական գնահատմանը, էԾ տնտեսական կամ արժեքային գնահատման մեթոդաբանության մշակմանը: Մասնավորապես՝ առաջարկվում է էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարների համակարգի ներդրում, որը գործնականում չի փոխարինելու բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգին, այլ կիրառվելու է դրան զուգահեռաբար:

Կենսաբազմազանության և ԷԾ-ների տնտեսական գնահատման փորձառության և տնտեսության մեջ դրանց ինտեգրման ուղղությամբ բացը լրացնելու նպատակով վերջին շրջանում տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվում են փորձնական ծրագրեր, որոնց իրականացման ընթացքում ձեռք բերված արդյունքները առայժմ լայնորեն լուսաբանված չեն:

<<Աղքատություն և շրջակա միջավայր նախաձեռնության>> ծրագրի շրջանակներում իրականացվել է Տեխնիկական աջակցություն, որի առաջնային նպատակն է ԷԾ-ների տնտեսական գնահատման գաղափարախոսության և մեթոդոլոգիայի ցուցադրական ներդրումը՝ շեշտը դնելով տնտեսական զարգացման և մարդկանց բարեկեցության գործում բնական կապիտալի կայուն կառավարման անհրաժեշտության դերի ընկալման վրա: Իրականացվել է պիլոտային գնահատման բաղադրիչ՝ ԷԾ-ների վրա Լոռու մարզի հանքարդյունաբերության ոլորտի գործունեության (Քարաբերդի ոսկու հանքավայրի օրինակով) ազդեցության գնահատման ուղղությամբ: Զուգահեռաբար աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԲՊՆ-ին՝ <<Շրջակա միջավայրի պահպանության մասին>> նոր շրջանակային օրենքում ԷԾ-ների մոտեցումների և համապատասխան դրույթների ներդրման հարցում:

ԿՏԲԿ-ի (RECC) կողմից նման ուսումնասիրություններ են իրականացվում <<Աջակցություն Հարավային Կովկասի լեռնային շրջաններում կենսաբազմազանության պահպանության քաղաքականության և փորձի զարգացման>> ծրագրի շրջանակներում: Դրանք վերաբերում են բուսականության, անտառների և կենդանական աշխարհի տնտեսական գնահատմանը:

<<Էկոհամակարգային ծառայությունների վճարների սխեմաների ներդրում Հայաստանի վերին Հրազդանի պիլոտային գետավազանում>> ծրագիրը փորձարկում է ՄԱԿ ԵՏՀ-ի կողմից մշակված ԷԾ վճարների ուղեցույցի չափանիշները՝ Հայաստանի գետավազաններում ԷԾ-ների համար վճարների համակարգի ներդրման և կիրառման նպատակով (ընտրվել է Հրազդան գետի վերին հոսանքները մինչև Քաղսի բնակավայրը՝ ներառյալ աջակողմյան Մարմարիկ և Ծաղկաձոր վտակները):

<<Անտառային օրենսդրության կիրարկման և անտառային ոլորտի կառավարման բարելավում>> (ENPI FLEG II, ԵՄ/ՀԲ, ԲՊՄՄ, ԲՀՀ) ծրագրի շրջանակներում անտառային սեկտորի համար նախատեսվում է իրականացնել ԷԾ-ների շրջանակային գնահատում և ճանապարհային քարտեզի մշակում:

Կենսաբազմազանության պահպանությունը և էկոհամակարգերի կայուն կառավարումը գերակա դիրք պետք է գրավի երկրի մնայուն արժեքների շարքում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ գործողություններ՝ փոխելով բնության, և հատկապես կենսառեսուրսների, նկատմամբ երկրում ձևավորված սպառողական վերաբերմունքը՝ բացառելով

անվերահսկելի գործընթացները: Նման գործողությունների հիմքում պետք է դրվեն հետևյալ սկզբունքները.

1. քաղաքական որոշումների կայացման գործընթացը պետք է հիմնվի էկոհամակարգերի և դրանց առանցքային բաղադրամաս կազմող կենսաբազմազանության իրական դերի ու արժեքների վրա.
2. դեգրադացված էկոհամակարգերը պետք է վերականգնվեն շահավետ (քիչ ծախսատար) եղանակներով կամ կոնսերվացվեն՝ բնականոն գործընթացների շնորհիվ դրանց բնական վիճակը վերականգնելու նպատակով.
3. բնակչության կենսամակարդակի աճը պետք է ապահովվի տնտեսական գործունեության մեջ էԾ-ների և վերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման այնպիսի մեթոդներով, որոնք բացառում են դրանց սպառումը և երաշխավորում են վերականգնումը՝ ի շահ ապագա սերունդների.
4. կենսաբազմազանության հիմնախնդիրների վերաբերյալ որոշումները պետք է հիմնված լինեն գիտական տեղեկատվության վրա՝ օգտագործելով էկոհամակարգային մոտեցումը.
5. անհրաժեշտ է ապահովել համագործակցությունը կառավարական կառույցների, քաղաքացիների, ձեռնարկատերերի ու այլ շահագրգիռ կողմերի միջև՝ որոշումների ընդունման և հետագայում իրականացման գործընթացներում.
6. կենսաբազմազանության վրա վնասակար մարդածին ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար պետք է մշակվեն և որոշումների ու ծրագրերի նախագծերի նախապատրաստման փուլում ներդրվեն միջճյուղային համագործակցության նոր արդյունավետ ձևերը:

ՄԱՍ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1. Ընդհանուր վերլուծություն

Հայաստանի ԿՌԳԾ-ն մշակվել է 1999 թ.-ին՝ <<Կենսաբազմազանության մասին>> կոնվենցիայի պահանջներին համապատասխան և պլանավորվել է 5 տարվա ժամանակահատվածի համար՝ 2000-2004 թթ.: Այն ներառում է 245 գործողություն և միջոցառում, որոնք բխում են կենսաբազմազանության պահպանման ազգային պահանջներից՝ ընդգրկելով օրենսդրության և ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործումը, կենսաբազմազանության արդյունավետ պահպանությունը և կայուն օգտագործման կարգավորումը:

Հարկ է նշել, որ ԿՌԳԾ-ի լիարժեք ծավալով իրականացումը, ընդհանուր առմամբ, իրատեսական չէր՝ նախատեսված ժամկետներում սակավ պետական ֆինանսավորման, անբավարար ռեսուրսային բազայի, գործընթացին միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավածության պակասի, ինչպես նաև որոշում ընդունողների մոտ կենսաբազմազանության դերի թերագնահատման և դրա պահպանության կարևորության ու անհրաժեշտություն անբավարար գիտակցման պատճառով: ԿՌԳԾ-ի մի շարք դրույթներ գտնվում են տարբեր նախարարությունների և գերատեսչությունների գործունեության ոլորտում, սակայն մինչ օրս դրանց ճյուղային ծրագրերում կենսաբազմազանության պահպանության խնդիրները գրեթե արտահայտված չեն: Երկիրը չի ունեցել և մինչ այժմ էլ դեռ չունի բավարար մասնագիտական կադրային ներուժ, նյութա-տեխնիկական և, հատկապես, ֆինանսական ռեսուրսներ ԿՌԳԾ-ում պլանավորված բոլոր գործողություններն իրականացնելու համար:

ԿՌԳԾ-ի կառուցվածքը, ռազմավարական ուղղությունները և դրանց կատարմանն ուղղված գործողությունների իրականացման ընդհանուր արդյունքները մանրամասն վերլուծվել և ամփոփվել են 4-րդ ազգային զեկույցում: Նշված փաստաթղթում համապարփակ ձևով ներկայացվել է ԿՌԳԾ-ի գործողությունների կապը կոնվենցիայի Նպատակային խնդիրների հետ, դրանց իրականացման ազգային ինդիկատորները, նպատակների կատարմանն աջակցող միջոցառումները և վերջնական կամ (եթե գործողությունը շարունակական բնույթ ունի) միջանկյալ արդյունքները: 5-րդ Ազգային զեկույցի մշակման ընթացքում վերլուծվել է ԿՌԳԾ-ի 13 ուղղությունների բոլոր գործողությունների առ այսօր կատարման ընթացքը և դրանք գնահատվել են հետևյալ սանդղակով՝

- գործողությունն ավարտված է.
- գործողությունն ընթացքում է՝ ավարտական փուլում, կարիք չկա ներառելու նոր ԿՌԳԾ-ի մեջ.

- գործողությունը շարունակական բնույթ ունի և պետք է ներառվի նոր ԿՌԳԾ-ի մեջ.
- գործողությունը չի իրականացված, պետք է ներառվի նոր ԿՌԳԾ-ի մեջ.
- գործողությունը չի իրականացված, սակայն ներկա պայմաններում առաջնային չէ:

Նման վերլուծության արդյունքում արված են հետևյալ եզրակացությունները՝

1. ԿՌԳԾ-ի 43 %-ը իրականացվել է.
2. 16 %-ը շարունակական են և գտնվում են իրականացման ընթացքի տարբեր փուլերում.
3. մնացած գործողությունները տարբեր պատճառներով չեն իրականացվել:

ԿՌԳԾ-ի իրականացման դրական արդյունքներից կարելի է նշել.

- ոլորտի օրենսդրության կատարելագործումը.
- ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործումը, հատկապես՝ ԲՀՊՏ-ների կառավարման հետ.
- նոր ԲՀՊՏ-ների ստեղծումը.
- <<Խոսքովի անտառ>> պետական արգելոցը ԵԽ-ի պահպանվող տարածքների եվրոպական դիպլոմին արժանացնելը (Եվրոպայի նախարարների կոմիտեի 2013 թ. հուլիսի 10-ի CM/ResDip (2013)2 հատուկ որոշում).
- ԲՀՊՏ-ների սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքների իրականացումը (<<Խոսքովի անտառ>>, <<Շիկահող>> և <<Էրեբունի>> պետական արգելոցներ, մի շարք պետական արգելավայրեր).
- <<Խոսքովի անտառ>> 7 <<Iikahwx>> արգելոցների, <<Սևան>>, <<Դիլիջան>>, <<Արփի լիճ>> ազգային պարկերի կառավարման պլանների մշակումը և դրանց ֆինանսական, տեխնիկական ու մարդկային ներուժի հզորացումը.
- հազվագյուտ և անհետացման վտանգի տակ գտնվող կենդանական տեսակների (կովկասյան ընձառյուծ, հայկական մուֆլոն, բեզուարյան այծ. ազնվացեղ եղջերու, սև անգղ) պահպանության ծրագրերի մշակումը և իրականացումը.
- դեգրադացված էկոհամակարգերի վերականգնումը, հատկապես՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման համար լճի ջրի մակարդակի բարձրացումը.
- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքի վերանայումը և նոր տարբերակի հրատարակումը (2010 թ.).
- բնության հուշարձանների գույքագրումը և ցանկի հաստատումը.
- Սևանա լճում ձկնային պաշարների համալրում և էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիաների վերականգնման միջոցառումները.
- <<Հայաստանի բույսերի գենետիկական ռեսուրսների կառավարման և օգտագործման ազգային ռազմավարության>> մշակումը.
- ՀՀ էկոլոգիական կրթության ռազմավարության և գործողությունների ծրագրի ՀՀ կառավարության կողմից հաստատումը:

ԿՌԳԾ-ի նպատակների և նախատեսված գործողությունների կատարմանը խոչընդոտող հիմնական գործոններից են՝

- կենսաբազմազանության և էԾ-ների կարևորության թերագնահատումը.
- տնտեսական խթանիչների բացակայությունը.
- կենսաբազմազանության բաղադրիչների պետական հաշվառման և մոնիթորինգի անբավարար իրականացումը.
- կենսառեսուրսների օգտագործման բնագավառում պետական վերահսկողության պակասը.
- բարձր որակավորում ունեցող մասնագիտների, ֆինանսական ու տեխնիկական ռեսուրսների պակասը.
- տարբեր բնագավառների միջև համագործակցության պակասը, միջճյուղային կապերի թերի զարգացումը, ճյուղային քաղաքականություններում կենսաբազմազանության խնդիրների սակավ ներգրավումը.
- կենսաբազմազանության վերաբերյալ հանրության կրթվածության ու իրազեկության ցածր մակարդակը:

Համաձային ԿԲԿ-ի X և XI կոնֆերանսների որոշումների և ի կատարումն Այիչիի 17-րդ Նպատակային խնդրի պահանջների՝ ներկայումս Հայաստանում իրականացվում է 2015-2020 թթ. համար <<Կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի>> մշակումը: Այդ ռազմավարական փաստաթղթի պատրաստման համար վերլուծվել են Կոնվենցիայի 2010-2020 Ռազմավարական պլանի Նպատակները և Այիչիի Նպատակային խնդիրները, որոշվել է ԿՌԳԾ-ի դեռևս չիրականացված գործողությունների համապատասխանությունը այդ Նպատակային խնդիրներին: Բացի այդ, հաշվի առնելով երկրի ժամանակակից պայմանները, կենսաբազմազանության առկա վիճակը, միտումները և սպառնալիքները, շահագրգիռ կողմերի հետ քննարկման ընթացքում կորոշվեն այն նոր գործողությունները, որոնք բխում են Այիչիի Նպատակային խնդիրներից և ազգային պահանջներից:

2.2. 2009-2013 թթ. Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ Հայաստանում ձեռնարկված գործողությունները և դրանց հիմնական արդյունքները

2.2.1. Օրենսդրության

կադրաբեղագործում.

Հայաստանում

կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման ապահովման ուղղությամբ 2009-2013 թթ. ընթացքում մշակվել և ընդունվել են մի շարք իրավական ակտեր ֆլորայի և ֆաունայի, անտառների, ԲՀՊՏ-ների, կրթության և այլ բնագավառներում: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ոլորտին առընչվող <<Կենդանական աշխարհի մասին>> ու <<Բնապահպանական և բնօգտագործման վճարերի մասին>> ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության կողմից հաստատվել են

մոտ 50 կառավարության որոշումներ, իսկ ԲՀՊՏ-ների հետ կապված օրենսդրության կատարելագործման համար՝ շուրջ 20 որոշում (Հավելված 5): Մշակվել և հաստատման փուլում են՝ <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, Անտառային օրենսգիրքը, <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման ռազմավարության և գործողությունների ազգային ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

2.2.2. Կառավարման համակարգի բարեփոխումներ. 2008 թ. դեկտեմբերին ՀՀ նախագահի կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողով, որի աշխատանքային գործունեության հիմքում դրվել է Սևանա լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացման համակարգումը:

ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9 N 1185-Ն որոշմամբ ստեղծվել է <<Սևան>> ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ՝ ՀՀ փոխվարչապետի նախագահությամբ: Խորհրդի գործունեության հիմնական նպատակն է բարելավել և ուժեղացնել հսկողությունը Սևանա լճի և ափամերձ տարածքների էկոհամակարգերի վերականգնման ուղղությամբ, թափանցիկ դարձնել ոլորտը կարգավորող որոշումների ընդունման գործընթացը:

ՀՀ կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի N 517-Ն որոշմամբ ստեղծվել է Սևանա լճի վերականգնման, պահպանման և զարգացման հիմնադրամ, որի նպատակն է աջակցել Սևանա լճի, որպես Հայաստանի քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի, վերականգնման, պահպանման և օգտագործման, ջրի մաքրության ապահովման համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերմանը:

ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշմամբ ստեղծվել է <<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ը՝ ներառելով <<Արևիկ>> ազգային պարկը, <<Շիկահող>> պետական արգելոցը, <<Սոսու պուրակ>>, <<Զանգեզուր>>, <<Խուստուփ>>, <<Բողաքար>> և <<Սև լիճ>> պետական արգելավայրերը: Նույն որոշմամբ ընդլայնվել է <<Զանգեզուր>> պետական արգելավայրի տարածքը և ստեղծվել է նոր՝ <<Խուստուփ>> պետական արգելավայրը: Այս կառույցի ստեղծումը նպատակ ունի աջակցելու Սյունիքի մարզում կենսոլորտային պահպանավայրի հիմնմանը, որում կներառվեն <<Շիկահող>> պետական արգելոցը, դրա պահպանման գոտին և հարակից տարածքները՝ <<Սոսու պուրակ>>, <<Զանգեզուր>> և <<Խուստուփ>> արգելավայրերը: Նշված

տարածքները համապատասխան էկոլոգիական միջանցքներով նախատեսվում է միավորվել մեկ համակարգի սահմաններում:

2.2.3. Կենսաբազմազանության in-situ պահպանությունը. Հայաստանում այն հիմնականում իրականացվում է ԲՀՊՏ-ներում, որտեղ կենտրոնացված է ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70 %-ը, այդ թվում՝ հազվագյուտ, կրիտիկական վիճակում գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Հայաստանի ԲՀՊՏ-ները ներկայացված են պետական արգելոցներով, ազգային պարկերով, պետական արգելավայրերով և բնության հուշարձաններով: Դրանք հիմնվել են պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա և կառավարվում են պետական կազմակերպությունների կողմից, իսկ բնության հուշարձանները, որոնք առկա են ինչպես պետական, այնպես էլ համայնքային սեփականության հողերում, դեռևս լիարժեք չեն կառավարվում՝ համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով:

Ներկայումս հանրապետությունում գործում են հետևյալ ԲՀՊՏ-ները (Հավելված 4), որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 387054 հա, այսինքն ՀՀ ամբողջ տարածքի 13.1 տոկոսը՝

- 3 պետական արգելոցներ (<<Խոսրովի անտառ>>, <<Շիկահող>> և <<Էրեբունի>>), որոնք զբաղեցնում են 35 439.6 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 1.19 %-ը.
- 4 ազգային պարկեր (<<Սևան>>, <<Դիլիջան>>, <<Արփի լիճ>> և <<Արևիկ>>), որոնք զբաղեցնում են 236 802.1 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 7.96 %-ը.
- 232 բնության հուշարձաններ.
- 27 պետական արգելավայրեր, որոնք զբաղեցնում են 114 812.7 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 3.95 %-ը:

2009-2014 թթ. ընթացքում Հայաստանի ԲՀՊՏ-ների թվաքանակը և ընդհանուր տարածքը զգալիորեն աճել է, ստեղծվել են հետևյալ նոր պահպանվող տարածքները՝ <<Զանգեզուր>> (ՀՀ կառավարության 15.10.2009 թ. № 1187-Ն որոշում), <<Զիկատար>> (ՀՀ կառավարության 08.04.2010 թ. № 380-Ն որոշում), <<Խուստուլի>> (ՀՀ կառավարության 19.12.2013 թ. № 1465-Ն որոշում) արգելավայրերը և <<Արփի լիճ>> (ՀՀ կառավարության 16.04.2009 թ. № 405-Ն որոշում), <<Արևիկ>> (ՀՀ կառավարության 15.10.2009 թ. № 1209-Ն որոշում) ազգային պարկերը:

ՀՀ 2012 թ. պետական բյուջեի շրջանակներում իրականացվեց <<Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման

աշխատանքներ>> ծրագիրը, որի իրականացման արդյունքում ՀՀ կառավարության 02.05.2013 թ. № 473-Ն որոշմամբ հաստատվում է բնության հուշարձանների նոր ցանկը՝ 232 անվանումով: Դրանցից 106-ը հանդիսանում են երկրաբանական, 48-ը՝ ջրաերկրաբանական, 40-ը՝ ջրագրական, 17-ը՝ բնապատմական և 21-ը՝ կենսաբանական հուշարձաններ:

ԲՀՊՏ-ների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2009-2011 թթ. մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են են <<Խոսքովի անտառ>> արգելոցի և <<Արփի լիճ>> ազգային պարկի կառավարման պլանները:

Ճշգրտվել ու քարտեզագրվել են պետական արգելոցների և մի շարք արգելավայրերի սահմանները: Բարելավվել են ֆինանսա-տեխնիկական միջոցները (համեմատաբար ավելացել են ԲՀՊՏ-ների ֆինանսավորման ծավալները), մասամբ նաև կադրային ապահովվածությունը: Իրականացվում են առկա ԲՀՊՏ-ների տեխնիկական հզորությունների ուժեղացման, գոյություն ունեցող և ստեղծվող ԲՀՊՏ-ների ենթակառուցվածքների զարգացման, այցելուների կենտրոնների ստեղծման, թանգարանների վերականգնման և այլ ծրագրեր:

<<Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին>> կոնվենցիայի շրջանակներում Հայաստանում ստեղծվող <<Էմերալդ ցանցում>> ներառված են 12 տարածքներ, որոնցից 8-ը ընդգրկված են Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում (<<Խոսքովի անտառ>> պետական արգելոց, <<Սևան>>, <<Դիլիջան>>, <<Արփի լիճ>>, ազգային պարկեր, <<Խոր Վիրապ>>, <<Սոսու պուրակ>>, <<Արագածի ալպյան>>, <<Իջևան>> արգելավայրեր): <<Էմերալդ ցանցի>> ստեղծումը ԿԲԿ-ի դրույթների կատարմանն ուղղված կարևորագույն քայլերից մեկն է և հանդիսանում է նախադեպ Հայաստանում էկոլոգիական ցանցի ստեղծման ու միջազգային էկոլոգիական ցանցերին, տվյալ դեպքում ՀԷՑ-ին միանալու ուղղությամբ: <<Խոսքովի անտառ>> պետական արգելոցը, Եվրոպական դիպլոմի արժանացնելուց հետո, արդեն իսկ համարվում է ՀԷՑ-ի պաշտոնական տարածք (core area), իսկ <<Էմերալդ ցանցի>> մնացած 11 տարածքները Բեռնի Կոնվենցիայի Մշտական կոմիտեի նիստում, սահմանված ընթացակարգի համաձայն, քննարկվելուց հետո պաշտոնապես կընդունվեն որպես Հայաստանի <<Էմերալդ ցանցի>> տարածքներ և, հետևաբար, նաև ՀԷՑ-ի առանցքային տարածքներ (core areas): Առանձնացվել են նաև Հայաստանի 18 կարևոր թռչնաբանական տարածքներ, որտեղ պահպանության տակ են վերցվել հանրապետության թռչունների վտանգված տեսակները: Կազմվել է 16 կարևոր բուսաբանական տարածքների նախնական ցանկը:

2.2.4. Կենսաբազմազանության ex-situ պահպանությունը. Բույսերի գենետիկական ռեսուրսների ex-situ պահպանումը, հանդիսանալով կենսաբազմազանության պահպանության կարևոր միջոց, հնարավորություն է ընձեռում վերականգնել բնական աղետների կամ մարդկային գործոնի հետևանքով վտանգված կամ ոչնչանցված ռեսուրսները՝ միաժամանակ հետազոտողներին և ֆերմերներին տրամադրելով դրանցից մշտապես օգտվելու հնարավորություն:


Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի գիտական հաստատություններում ներկայումս պահվում են սերմերի հավաքածուների մոտ 13220 նմուշներ (նկար 17): ՀԱԱՀ-ի սերմերի հավաքածուներում (<<Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն>> մասնաճյուղ և Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիա) պահվող նմուշները ներկայացված են հիմնականում տեղական ծագում ունեցող տեսակներով և տեղական սելեկցիայի սորտերով, իսկ ՀՀ ԳՆ <<Երկրագործության գիտական կենտրոն>>, <<Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ների և Գյումրիի սելեկցիոն կայանի հավաքածուները՝ նաև ICARDA-ի, CIMMYT-ի և սելեկցիոն տնկարանների նմուշներով, որոնք օգտագործվում են սելեկցիոն գործընթացներում:

Բույսերի գենետիկական ռեսուրսների ex-situ պահպանման բնագավառում մեծ առաջընթաց է նկատվել վերջին հինգ տարվա ընթացքում: Այսպես, ՀԱԱՀ Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիայի նմուշների թիվը 2008-2013 թվականների ընթացքում աճել է 24 %-ով, ՀՀ ԳՆ <<Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի հավաքածուի քանակը՝ 3.5 անգամ, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտինը՝ 2.8 անգամ: Ինչ վերաբերում է ՀՀ ԳՆ <<Երկրագործության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի հավաքածուին, ապա այստեղ նմուշների թվի նվազումը պայմանավորված է որակական փոփոխություններով, քանի որ կենտրոնը, վերանայելով իր ex-situ պահպանման ռազմավարությունը, կենտրոնացել է հացահատիկային և հատիկալնդեղեն մշակաբույսերի տեղական սելեկցիայի սորտերի պահպանման վրա (նկար 17):


Պարենի և գյուղատնտեսության համար օգտագործվող բույսերի գենետիկական ռեսուրսների ազգային գենետիկական բանկում 2008-2013 թվականների ընթացքում նմուշների թիվը աճել է 8 անգամ՝ այլ հաստատությունների հետ նմուշների փոխանակման, արշավախմբային ուսումնասիրությունների և հավաքների կազմակերպման ու արտերկրի գենետիկական բանկերի հետ տարվող համագործակցության շնորհիվ: Գենետիկական բանկում պահվում են երկրի համար առաջնային համարվող գյուղատնտեսական մշակաբույսերը և դրանց վայրի ազգակիցները, առաջնությունը տրվում է տեղական ծագում ունեցող մշակաբույսերին (նկար 18):

ՀԱԱՀ Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիայում պահվում են վայրի ցորենի, գարու, աշորայի, այծակնի, վայրի բանջարային բույսերի (ճակնդեղ,


գազար, սոխ, սպանախ, հազար, ծնեբեկ, խավրժիկ, ծովաբողկ և այլն), համեմունքային (գինձ, մաղադանոս, կոտեմ, ցիտրոն և այլն), հատիկալնդեղենների (տափուլոռ, ոսպ, վիկ, երեքնուկ, առվույտ) սերմեր: Լաբորատորիայում ստեղծվել է ամփոփալիդների և մշակաբույսերի սորտանմուշների 4320 նմուշ (նկար 19):



Նկար 17. Հայաստանի գիտական հաստատություններում պահվող սերմերի հավաքածուների նմուշների թիվը



Նկար 18. Ազգային գենետիկական բանկի նմուշների թիվը՝ ըստ մշակաբույսերի խմբերի



Նկար 19. Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիայի հավաքածուի նմուշների թիվը՝ ըստ հիմնական մշակաբույսերի և տարիների

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում 2005 թ. հիմնադրվեց Սերմերի գենետիկական բանկը, որի նպատակն է Հայաստանի ֆլորայի տեսակների սերմերի հավաքածուի ստեղծումը և հազվագյուտ ու անհետացող բուսատեսակների ex-situ պահպանումը: 2011 թ.-ից սերմերի հավաքը շարունակվել է Millenium Seed Bank-ի (Royal Botanic Gardens, Kew, Great Britain (MSBP) հետ համատեղ նախագծի շրջանակներում և Botanical Garden & Botanical Museum Berlin-Dahlem-ի աջակցությամբ: Ներկայումս սերմերի հավաքածուն ընդգրկում է 51 ընտանիքի 251 գեղի 552 տեսակի 2464 նմուշ: Առավել ներկայացվածն են Fabaceae (22 գեղ, 64 տեսակ, 1377 նմուշ) և Poaceae (29 գեղ, 64 տեսակ, 588 նմուշ) ընտանիքները:

2012 թ.-ին Մշակաբույսերի կենսաբազմազանության գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող <<Տարածաշրջանային գերակայություն ունեցող մշակաբույսերի հավաքածուների վերարտադրություն>> ծրագրի շրջանակներում հայկական ծագման ցորենի, գարու և այծակնի կարևոր տեսակներն ուղարկվել են ICARDA, CIMMYT և Շաիցբերգենի կղզու վրա հիմնված Սվալբարդի գլոբալ սերմերի դամբարան (Svalbard Global Seed Vault), որը կապահովի սերմերի կենսունակ լինելը երկար ժամանակահատվածում: Համաշխարհային նշանակության սերմերի այս բանկում Հայաստանը ներկայացված է 176 յուրահատուկ տեսակների նմուշներով:

2007 թ.-ից լինելով Բույսերի գենետիկական ռեսուրսների միջազգային համաձայնագրի կողմ երկիր՝ Հայաստանը միացել է դրա ներքո գործող նմուշների փոխանակման և ազատ մատչելիության ապահովման բազմակողմանի համակարգին և տրամադրել 2496 նմուշ: Բազմակողմանի համակարգում ներառված նմուշները գրանցված են Բույսերի գենետիկական ռեսուրսների EURISCO-ի էլեկտրոնային կատալոգում:

2011 թ.-ից FAO-ի կողմից ֆինանսավորվող <<Ծիրանի գենետիկական ռեսուրսների պահպանում և օգտագործում>> ծրագրի շրջանակներում հիմնվել է ծիրանենու կոլեկցիոն այգի, որը բաղկացած է ծիրանենու հայկական 82 և

արտերկրից ներկրված 12 սորտերից, որոնք առավել մեծ պահանջարկ ունեն եվրոպական շուկայում: Ծիրանենու կոլեկցիոն այգու ստեղծման նպատակն է պահպանել Հայաստանի ծիրանենու յուրահատուկ գենոֆոնդը, միաժամանակ հնարավորություն ստեղծելով արդյունավետ օգտագործելու ծիրանենու տեղական ծագման և արտերկրի գենետիկական ռեսուրսները:


Կենդանի բույսերի հավաքածուները կազմում են բուսաբանական այգիների ու դենդրոպարկերի հիմքը: Ներկայումս Հայաստանի բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում աճեցվում և պահպանվում են շուրջ 6000 բուսատեսակ, այդ թվում՝ 5000 Երևանի բուսաբանական այգում, որտեղ բաց գրունտում աճող շուրջ 1200 տեսակ ծառաթփային և մոտ 2000 տեսակ ծաղկային բույսերից բացի, ջերմատնային պայմաններում պահպանվում են արևադարձային և մերձարևադարձային բույսերի շուրջ 1000 տեսակ: Երևանի բուսաբանական այգու դենդրարին հիմնադրվել է էկոլոգո-աշխարհագրական սկզբունքով, որտեղ ստեղծված են Կովկասի ու Ղրիմի, Եվրոսիբիի, Արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի, Հյուսիսային Ամերիկայի դենդրոֆլորաների էքսպոզիցիոն հավաքածուները: Կենդանի հավաքածուների կազմում առանձնակի կարևորություն է ներկայացնում Հայաստանի աբորիգեն ֆլորայի էքսպոզիցիան՝ շուրջ 800 տեսակներով:

Կենդանիների ex-situ պահպանությունն իրականացվում է Երևանի կենդանաբանական այգում, որտեղ հաջողությամբ բազմացվում են Հայաստանի մի շարք վտանգված տեսակներ՝ Հայկական մուֆլոնը, բեզուարյան այծը, սիրիական գորշ արջը և այլն:

ԲՀՀ կողմից իրականացվում է ծրագիր՝ Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերականգնումը Հայաստանում, որի շրջանակներում նախատեսվում է ստեղծել եղջերուի բուծման կենտրոն <<Դիլիջան>> ազգային պարկում և բուծված կենդանիների հետագա վարադարձը բնություն:

2.2.5. Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ.

Համաձայն պաշտոնական տեղեկատվության՝ 2009-2013 թթ. <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ում և ԲՀԴՏ-ներում (<<Դիլիջան>> և <<Արևիկ>> ազգային պարկեր) իրականացվել են անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ՝ 1756,5 հա տարածքի վրա (նկար 20): Այս ոչ մեծ ցուցանիշը պայմանավորված է պետական բյուջեյից տրամադրվող փոքր ֆինանսավորմամբ: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ վերոհիշյալ ծավալներում զգալի մաս են կազմում միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները:



Նկար 20. 2009-2013 թթ. իրականացված անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների ծավալները

Այսպես, ՀՀ ԳՆ տվյալներով, 2010 թ.-ին, ոչ պետական ֆինանսավորմամբ, տարբեր ծրագրերի հաշվին Հայաստանում անտառապատման աշխատանքներ են իրականացվել 150 հա տարածքում: Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ 25 հա անտառապատվել է Արթիկ քաղաքի շրջակայքում: Նույնքան տարածք է անտառապատվել Սյունիքի մարզում՝ UNDP-ի <<Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնաանտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում>> ծրագրով: Շարունակվել է նախորդ տարիներին հիմնված անտառային տարածքների անտառապատումը՝ 329.5 հա-ի վրա, ինչպես նաև անտառների խնամքը 2 178 հա տարածքի վրա, հիմնվել է նաև 5.335 հա տարածք ունեցող տնկարան:

Ճապոնիայի կառավարության <<Պարենային արտադրության աճ>> ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին ՀՀ Լոռու, Տավուշի, Սյունիքի, Կոտայքի, Շիրակի, Արագածոտնի մարզերում և Երևան քաղաքում չորս տարվա ընթացքում իրականացվել են անտառապատման և ցանկապատման աշխատանքներ՝ շուրջ 1300 հա տարածքում:

2011 թ. Կապանի անտառտնտեսությունը 2006 թ.-ին հրդեհված տարածքում շուրջ 20 հա-ի վրա անտառվերականգնման աշխատանքներ է իրականացրել UNDP-ի աջակցությամբ: Տնկվել են շուրջ 7 հազար հատ գիհու եւ կաղնու տնկիներ:

BMU-ի և KfW-ի ֆինանսավորմամբ, WWF-ի հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ, Լոռու մարզի Գուգարքի անտառտնտեսություն մասնաճյուղում 2009-2010 թթ. հիմնադրվել են 240 հա անտառմշակույթներ:

2013 թ. «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը <<Հայաստան-ծառատունկ ծրագրի>> շրջանակներում Լոռու մարզում հիմնել է 32.4 հեկտար անտառ՝ տնկելով

128 հազար տնկի: «Էյ Թի Փի» ԲՀ-ի աջակցության շնորհիվ մինչ օրս Հայաստանում տնկվել է ավելի քան 3.500.000 ծառ:

2014 թ. նախատեսվում է Տավուշի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում իրականացնել անտառվերականգնողական աշխատանքներ 35 հեկտար ընդհանուր տարածքներում, իսկ Կոտայքի մարզում շուրջ 100 հեկտար անտառածածկ տարածքներում կիրականացվեն սանհիտարական ձևավորման աշխատանքներ: Հայաստանի Հանրապետության անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի կողմից 2014 թ.-ին նախատեսվում է նաև ավարտին հասցնել Երևանի անտառտնտեսության <<Էրեբունի անտառապետության>> 51 հեկտար տարածքում անտառապատման ծրագիրը: Այն իրականացվում է նոր տեխնոլոգիայով, որը թույլ կտա խուսափել հնարավոր սողանքներից: Նախորդ տարի տարածքում իրականացվել են ջրագծի և ցանկապատի կառուցման աշխատանքներ:

Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալներն ընդլայնելու, պաշտպանական, հակէրոզիոն անտառաշերտեր ստեղծելու, կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել տնկարանային տնտեսությունները: Այսպես՝ FAO-ի աջակցությամբ <<Հայաստան>> ՊՈԱԿ-ի <<Հրազդանի անտառտնտեսություն>> մասնաճյուղում ստեղծվել է ժամանակակից տնկարանային տնտեսություն: Կառուցվել է փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցման տնկարան, որտեղ աճեցվում է անտառային ծառատեսակների (սոճի, հացենի, թխկի և այլն) տնկանյութ: 2013-2014 թթ. WWF-Շվեյցարիայի ֆինանսավորած ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տարածքում ստեղծվել է վտանգված անտառային տեսակների տնկարան, որտեղ առկա է անտառային շուրջ 22 տեսակ, որոնցից 8-ը արժեքավոր և անհետացող են: Տնկարանում աճեցվող տնկանյութը հետագայում կօգտագործվի անտառների վերականգնման միջոցով վտանգված բուսական և կենդանական տեսակների բնակության վայրերի վերականգնման համար:

2.3. Միջազգային համագործակցության և միջազգային ծրագրերի դերը կենսաբազմազանության պահպանության գործում

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է բնապահպանական ոլորտի 22 միջազգային կոնվենցիաների ու արձանագրությունների:

2011-2013 թթ. շարունակվել է համագործակցությունը գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների՝ UNEP-ի, UNDP-ի, OECD-ի, ԵՄ-ի, ԿՏԲԿ-ի, ԳԷՀ-ի, KfW-ի, WWF-ի, CNF-ի և մի շարք օտարերկրյա պետությունների հետ՝ միջազգային ծրագրերի նախապատրաստման, համաձայնեցման, հաստատման, համակարգման և իրականացման ուղղությամբ:

Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործընթացներում արդյունավետ համագործակցություն է իրականացվում Գերմանիայի Դաշնային

Հանրապետության, մասնավորապես՝ BMZ-ի և KfW-ի հետ: Նշված կառույցները WWF-ի և CI-ի կազմակերպության հետ միասին հիմնադրեցին <<Կովկասի բնության հիմնադրամը>>, որի ստեղծման նպատակն է աջակցել կովկասյան էկոտարածաշրջանում ԲՀՊՏ-ների արդյունավետ պահպանմանը, մասնավորապես՝

- արգելոցների, ազգային պարկերի և արգելավայրերի կառավարմանը.
- լանդշաֆտների և բնական ռեսուրսների պահպանությանը.
- բնապահպանության կառավարման խնդիրներով զբաղվող օղակների միջև համագործակցության կայացմանը:

CNF-ը 2011 թ. և 2013 թ. ՀՀ ԲԴՆ-ի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերել <<Խոսրովի անտառ>> և <<Շիկահող>> արգելոցներին, <<Արևիկ>>, <<Արփի լիճ>>, <<Դիլիջան>> ազգային պարկերին: 2013 թ.-ին CNF-ի աջակցության ընդհանուր գումարը կազմել է 182.8 մլն. դրամ:

2011-2013 թթ. բնապահպանության ոլորտում ակտիվ համագործակցություն է իրականացվել Իրանի Իսլամական Հանրապետության հետ: 2012 թ. ստորագրվել է երկկողմ Հուշագիր՝ Իրանի և Հայաստանի ընդհանուր սահմանում <<Բարեկամության և խաղաղության այգի ստեղծելու մասին>>:

Տարածաշրջանային համագործակցություն շրջանակներում Հայաստանը կովկասյան այլ երկրների հետ համատեղ (Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Թուրքիա, Իրան) ակտիվորեն մասնակցում է <<Կովկասյան էկոտարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության ծրագրի>> կատարմանը, որի առաջին տարբերակը պատրաստվել է 2006 թ.-ին՝ ԲՀՀ-ի աջակցությամբ և 6 երկրների շուրջ 150 փորձագետների մասնակցությամբ: 2012 թ.-ին պատրաստվել է Ծրագրի վերանայված և արդիականացված տարբերակը, որի գործողությունները նախատեսված են 20 տարվա համար: Հայաստանի համար առավել կարևորվում են անտառային էկոհամակարգերի պահպանման և կայուն օգտագործման, տեղական համայնքների ներգրավմամբ անտառվերականգնման, հարավային Հայաստանում նոր ԲՀՊՏ-ի և մի քանի էկոլոգիական միջանցքների ստեղծման, քաղցրահամ ջրային էկոհամակարգերի պահպանման և կայուն օգտագործման, կարևորագույն տեսակների և դրանց բնակության վայրերի պահպանման վերաբերյալ գործողությունները:

ԿԲԿ-ի նպատակային խնդիրների կատարման համար 2009-2013 թթ. Հայաստանում իրականացվել և շարունակվում են իրականացվել մի շարք ծրագրեր, որոնցից կարելի է նշել հետևյալները.

- 1. <<Անտառային օրենսդրության կիրարկման և անտառային ոլորտի կառավարման բարելավում>> (ENPI FLEG I՝ 2008–2012 թթ. և ENPI FLEG II՝ 2013-2016 թթ.)** ծրագիրը ֆինանսավորվել է Ավստրիական զարգացման

գործակալության և ԵՄ-ի կողմից, **իրականացվել է WB, IUCN և WWF կողմից**, որի առաջին փուլի իրականացման ընթացքում ստեղծվել են ճանաչողական բնույթի տպագիր նյութեր, Գյուլագարակի, Իջևանի և Արջատխլենու անտառային արգելավայրերի GIS քարտեզներ: Իրականացվել են նաև երկու պիլոտային ծրագրեր, որոնք ուղղված են անտառի կայուն օգտագործմանը, Կողբ և Դսեղ համայնքների բնակչության ապրելամիջոցների բարելավմանը: Ծրագրի 2-րդ փուլի գործողություններն ուղղված են անտառային օրենսդրության վերանայմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումներին, մարդկային ռեսուրսների կարողությունների ստեղծմանը, անտառների վերաբերյալ հասարակության իրազեկմանը, մոնիթորինգին, անտառների կայուն կառավարման բարելավմանը և անտառային ռեսուրսների կայուն օգտագործմանը:

2. **<<Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ>> (2011-2015 թթ.)**. Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից, իրականացնողը՝ WWF-Հայաստան: Ծրագրի նպատակն է բարձրացնել Հարավային Կովկասում անտառային էկոհամակարգերի կայունությունը կլիմայի փոփոխության նկատմամբ և բարելավել կենսաբազմազանության վիճակն ու տեղական բնակչության կենսամիջոցները: Ծրագրի իրականացման արդյունքում 150 հա միատարր անտառային տնկարկներ կենթարկվեն տրանսֆորմացիայի, կստեղծվեն կլիմայի փոփոխության նկատմամբ առավել կայուն անտառտնկարկներ, որոնք հարակից համայնքներին կենսամիջոցների տրամադրման մեծ հնարավորություններ կտան:

3. **<<Հյուսիսային Հայաստանի անտառային լանդշաֆտի վերականգնում>> (2012-2015 թթ.)**. Ծրագիրը ֆինանսավորվում է WWF-Շվեյցարիայի կողմից, իրականացնողը՝ WWF-Հայաստան: Ծրագրի նպատակն է անտառների վերականգնման միջոցով վերականգնել վտանգված բուսական և կենդանական տեսակների բնակության վայրերը: Արդյունքում կվերականգնվի շուրջ 70 հեկտար լեռնային անտառ <<Թռչկանի ջրվեժ>> բնության հուշարձանին հարող տարածքում (Լոռու մարզի Մեծ Պառնի համայնք), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տարածքում կստեղծվի վտանգված անտառային տեսակների տնկարան: Տեղի բնակչությունը մասնակցելով ծրագրի տարբեր փուլերին, կավելացնի սեփական եկամուտները:

4. **<<Կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմացում անտառային լանդշաֆտների վերականգնման միջոցով>> (2008-2011 թթ.)**. Ծրագիրը ֆինանսավորվել է BMU-ի կողմից՝ KFW-ի միջոցով: Ծրագիրն իրականացվել է ՀՀ Լոռու մարզի համայնքներում WWF-Հայաստան կողմից՝ <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի և <<Էյ Թի Փի>> Բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագրի արդյունքում անտառապատվել է մոտ 630 հա տարածք, իրականացվել է

տեղական բնակչության իրազեկության բարձրացում՝ կլիմայի փոփոխության ազդեցությունների մարտահրավերների վերաբերյալ, ինչպես նաև նախադրյալներ են ստեղծվել համայնքային անտառկառավարման հետագա ծրագրերի իրականացման համար:

5. <<Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնաանտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում>> (2009-2013 թթ.). Ծրագիրը ֆինանսավորվել է UNDP-ի կողմից՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Ծրագրի արդյունքում մշակվել և իրականացվել են անտառային էկոհամակարգերի դիմադրողականության և հարմարվողականության ապահովմանն ուղղված միջոցառումներ այդ թվում՝ Սյունիքի անտառտնտեսությունում 15 հա դեգրադացված անտառների վերականգնում, Կապանի անտառտնտեսությունում 20 հա այրված գիհուտների վերականգնում:

6. <<Կենսաբազմազանության կայուն կառավարում Հարավային Կովկասում>> (2008-2016 թթ.). Ծրագիրը ֆինանսավորվում է BMZ-ի և իրականացվում է GIZ-ի կողմից: Ծրագրի նպատակն է բնական ռեսուրսների տնտեսապես արդյունավետ և կայուն օգտագործման մեխանիզմների ինտեգրումը կառավարման ոլորտ, բիզնես և հասարակություն: <<Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> և <<Հայաստան>> ՊՈԱԿ-ներին տրամադրվել է տեխնիկական աջակցություն, իրականացվել են շուրջ 20 հա տարածքի վրա վերականգնման և 350 հա տարածքի վրա կոճղաշիվային վերածի օժանդակման միջոցառումներ:

7. <<Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուրները ցուցադրելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում Հայաստանում>> (2013-2016 թթ.). Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի և UNDP-ի կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում: Նպատակն է՝ բնական ռեսուրսների կառավարման կայուն, շրջակա միջավայրի համար անվնաս աշխատանքային ակտիվների որդեգրում՝ Հայաստանի լեռնային էկոհամակարգերի վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունների ներքո, որպեսզի հնարավոր լինի ապահովել էկոհամակարգերի ամբողջականությունը եւ դրանց ծառայությունների շարունակական մատակարարումը, ներառյալ՝ ածխածնի կլանումը եւ պահեստավորումը, արոտավայրերի կառավարման համակարգի ներդրումը, 2000 հա մարգագետինների և 60 հա անտառային տարածքների վերականգնումը:

8. <<Կովկասի Պաշտպանվող Տարածքների Աջակցության Նախաձեռնություն: Հայաստանի Բաց Ծրագիր>> (2009-2012 թթ.). Ծրագիրն իրականացվել է Հայաստանի հետ Գերմանիայի Ֆինանսական Համագործակցության շրջանակներում և ֆինանսավորվել է KfW-ի կողմից: Կատարված գործողությունների շնորհիվ պարզաբանվել է հարավային Հայաստանում UNESCO-ի

պահանջներին համապատասխանող կենսոլորտային պահպանավայրի հիմնման հնարավորությունը, որի սահմաններում պետք է ընդգրկվեն <<Շիկահող>> արգելոցը, <<Սոսու պուրակ>> և <<Խուստուփ>> արգելավայրերը, հարակից հինգ համայնքները (Ծավ, Ներքին Հանդ, Սրաշեն, Շիկահող և Ճակատեն) և <<Հայաստան>> ՊՈԱԿ-ի <<Կապանի>> անտառտնտեսության մասնաճյուղի որոշ ընտրված տարածքներ: Նշված կենսոլորտային պահպանավայրի հիմնումը նախատեսվում է իրականացնել ծրագրի երկրորդ փուլում:

9. <<Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում>> (2011-2014 թթ.). Ծրագիրը ֆինանսավորվում և իրականացվում է GEF/UNDP-ի կողմից: Ծրագրի իրականացման արդյունքում վերանայվել է ԲՀՊՏ-ների օրենսդրությունը, ստեղծվել է <<Խուստուփ>> արգելավայրը, ընդլայնվել են <<Հանգեզուր>> արգելավայրի սահմանները, մշակվել են մեթոդական ուղեցույցներ ինստիտուցիոնալ կապերի ձևավորման և կառավարման մոդելների ներդրման վերաբերյալ, կազմվել են կառավարման և բիզնես պլաններ, իրականացվել են համայնքների իրազեկության բարձրացման և ԲՀՊՏ-ների կառավարիչների վերապատրաստման դասընթացներ:

10. <<Հայաստանում կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիր>> (2013-2020 թթ.). Ծրագիրն իրականացնում է WWF-ի հայաստանյան մասնաճյուղը ՀՀ բնապահպանության նախարարության հետ միասին, WWF-Գերմանիայի և Orange Արմենիայի ֆինանսավորմամբ, ինչպես նաև Պրոմեթեյ բանկի աջակցությամբ: Նպատակն է <<Դիլիջան>> ազգային պարկում հիմնել ազնվացեղ եղջերուի կենսունակ վերարտադրվող խումբ: Ծրագրի գործողությունները ներառում են՝ <<Դիլիջան>> ազգային պարկում եղջերուների բազմացման կենտրոնի ստեղծում, 4 արու և 11 էգ առանձնյակների ձեռքբերում և տեղափոխում Հայաստան, բազմացման կենտրոնի աշխատակիցների ուսուցում, կենդանիների խնամք և բազմացում, նրանց ազատ արձակում բնություն և հետագա մոնիթորինգ:

11. <<Կենսաբազմազանության պահպանություն և համայնքային զարգացում>> (2007-2011 թթ.). Ծրագիրը ֆինանսավորվել է Նորվեգիայի կառավարության և իրականացվել է WWF-ի կողմից: Ծրագրի նպատակն էր ապահովել կենսաբազմազանության պահպանությունը տեղական համայնքների զարգացմանը համընթաց՝ նպաստելով հարավային Հայաստանի ԲՀՊՏ-ների պահպանության ռեժիմների պահպանմանը (<<Խոսրովի անտառ>> և <<Շիկահող>> արգելոցներ, <<Արևիկ>> ազգային պարկ), ինչպես նաև ստեղծել կենդանիների տեղաշարժման միջանցքներ՝ բարձրացնելով տեղական բնակչության իրազեկությունը և տրամադրելով գյուղական համայնքներում այլընտրանքային ապրելամիջոցներ:

12. <<Պահպանվող տարածքներ կենդանի մոլորակի համար>> (2007-2011 թթ.).

Ծրագիրը ֆինանսավորվել է MAVA-ի և իրականացվել է WWF-ի կողմից Կովկասի էկոտարածաշրջանի 5 երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Ռուսաստանում և Թուրքիայում: Այն նպաստել է ԿԲԿ-ի շրջանակներում ԲՀՊՏ-ների վերաբերյալ գործողությունների ծրագրի իրականացմանը՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերի վերլուծություն և առաջարկությունների մշակում, ԲՀՊՏ-ների համակարգի կառավարման արդյունավետության ու հզորությունների գնահատում, գործողությունների պլանի մշակում, ֆինանսական կարիքների գնահատում և կայուն ֆինանսավորման պլանի մշակում, հասարակայնության հետ կապված գործողություններ և այլն:

13. <<Պահպանվող տարածքների ստեղծում Հայաստանի Զավախքի (Աշոցք) տարածաշրջանում>> (2007-2014 թթ.).

Ծրագիրն իրականացվում է ՀՀ ԲՊՆ-ի և WWF-ի կողմից՝ <<Հարավային Կովկասում էկոտարածաշրջանային բնապահպանական ծրագրի>> շրջանակներում, որը հանդիսանում է BMZ-ի կողմից մեկնարկված Կովկասյան նախաձեռնության մի մասը: Ծրագիրն ուղղված է Կովկասի էկոտարածաշրջանի յուրօրինակ կենսաբազմազանության պահպանման համար Շիրակ-Զավախք անդրսահմանային համագործակցության խթանմանը՝ որպես Հայաստանի և Վրաստանի միջև համագործակցության ևս մեկ ոլորտ: Նպատակն է պահպանել Զավախք-Շիրակ սարահարթի կենսաբազմազանությունը Հայաստանում և աջակցել հյուսիսային Շիրակում համայնքային կայուն զարգացմանը՝ <<Արփի լիճ>> ազգային պարկի ստեղծման և պահպանման գոտու ծրագրի իրականացման միջոցով:

14. <<Գնիշիկ>> համայնքային պահպանվող տարածքի ստեղծում>> (2011-2014 թթ.).

Ծրագիրը ֆինանսավորվում է CEPF-ի, իրականացվում է WWF-ի կողմից: Նպատակն է էկոլոգիական միջանցքների ինտեգրումն ու ընդլայնումը, ինչպես նաև գլոբալ կարևորության կենսաբազմազանության պահպանությունը՝ <<Գնիշիկ>> համայնքային պահպանվող տարածքի ստեղծման եղանակով: Հիմնական գործողություններն են՝ պահպանվող տարածքի մասնակցային պլանավորումը, պահպանության ռեժիմի կիրառումը, զբոսաշրջային ենթակառուցվածքի զարգացումը և պահպանման գոտու հարակից համայնքներում այլընտրանքային կենսամիջոցների ստեղծումը:

15. <<Ընծառյուծի պահպանությունը հարավային Հայաստանում>> (2002-2016 թթ.).

WWF-ի ծրագրի նպատակն է՝ անհետացման եզրին գտնվող Կովկասյան ընծառյուծի (*Panthera pardus saxicolor*) պոպուլյացիայի ավելացումը՝ որպես պահպանության բարելավման, շրջակա միջավայրի կառավարման ուժեղացման և էկոլոգիական գործընթացների կայունացման ցուցանիշ: Հիմնական թիրախային տարածքներն են <<Խոսրովի անտառ>> արգելոցից մինչև <<Արևիկ>> ազգային պարկը:

- 16. <<Աջակցություն Հարավային Կովկասի լեռնային շրջաններում կենսաբազմազանության պահպանման քաղաքականության և պրակտիկայի զարգացմանը>> (2011-2014 թթ.).** Իրականացվում է ԿՏԲԿ կողմից՝ Նորվեգիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ: Նպատակն է՝ հզորացնել տեղական համայնքների և տեղական իշխանությունների կարողությունները, բարելավելու կենսաբազմազանության մասնակցային կառավարումը, բարձրացնել տեղական համայնքների և ազգային մակարդակում որոշում կայացնողների իրազեկվածությունը անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության արժեքների, դրանց կայուն օգտագործման և պահպանման օգտակարության մասին, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնման և դրանց նշանակության բարձրացման պիլոտային ծրագրերի իրականացման միջոցով ցույց տալ դրանց գործնական կիրառումը:
- 17. <<Կլիմայի փոփոխության հարմարվողականության արձագանքման բացահայտում և իրականացում Հարավային Կովկասի արիդ և սեմիարիդ էկոհամակարգերում ագրոկենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման նպատակով>> (2011-2014 թթ.).** Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ, իրականացվում է ԿՏԲԿ կողմից: Նպատակն է՝ նպաստել ագրոկենսաբազմազանության պահպանությանը՝ կլիմայի փոփոխության նկատմամբ ազգային և տեղական մակարդակներով հարմարվողականության աջակցման քաղաքականության կիրառմամբ, ինչպես նաև բարձրացնել արիդ և սեմիարիդ համակարգերում ինստիտուցիանալ և անհատական կարողությունները՝ ապահովելով կլիմայի փոփոխության նկատմամբ ագրոկենսաբազմազանության և բնակչության կենսամակարդակի կայունությունը:
- 18. <<Աջակցություն Կովկասի լեռնային համայնքների համայնքային անտառակառավարման պրակտիկային եւ քաղաքականությանը>> (2009-2012 թթ.).** Ծրագիրը ֆինանսավորվել է ԵՄ-ի և իրականացվել է ԿՏԲԿ կողմից: Այն ուղղված էր նպաստելու համայնքային անտառակառավարման ինստիտուցիոնալ, իրավական եւ տեխնիկական հիմքերի նախապատրաստմանը, համայնքի անդամների, համայնքային կառույցների և ՏԻՄ-երի իրազեկության բարձրացմանը և կարողությունների հզորացմանը: Արդյունքում՝ ապահովվել է ծրագրի դրական ազդեցությունը և թափանցիկությունը:
- 19. <<Հայաստանում էկոհամակարգերի ծառայությունների փնտեսական գնահատում>> (2011-2013 թթ.).** Ծրագիրն իրականացվել է UNDP/UNEP <<Աղքատություն և շրջակա միջավայր նախաձեռնության>> հովանու ներքո և ուղղված է եղել ներդրում կատարելու աղքատության կրճատման և աղքատ ու խոցելի խմբերի բարեկեցության բարձրացմանը՝ ազգային զարգացման գործընթացներում բնապահպանական հարցերի ներգրավման միջոցով: ԷԾ-ների գնահատման նպատակով ընտրվել էր Քարաբերդ համայնքի ոսկու հանքավայրի

օրինակով: Կատարվել է հիմնական էկոհամակարգերի և էԾ-ների ուսումնասիրություններ և տրվել է տարածքի տնտեսական գնահատումը՝ հանքավայրի շահագործման և առանց հանքավայրի շահագործման: Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԲՊՆ-ին՝ <<Շրջակա միջավայրի պահպանության մասին>> նոր շրջանակային օրենքում էԾ-ների մոտեցումների և համապատասխան դրույթների ներդրման հարցում:

20. <<Հարավային Կովկասում կլիմայի փոփոխությանը հարմարվելու և կենսաբազմազանությունը պահպանելու համար անհրաժեշտ տեղական հնարավորությունների և տարածաշրջանային համագործակցության զարգացում>> (2011-2013 թթ.). Ծրագիրը ֆինանսավորվել է ԵՄ-ի կողմից և իրականացվել է CENN-ի ու Մերսի Քորփս միջազգային հասարակական կազմակերպության կողմից: Նպատակն է՝ կանխարգելել և կառավարել կլիմայի փոփոխության բացասական հետևանքները և ռիսկերը, ինչպես նաև պաշտպանել Քուռ գետի ավազանի թիրախային անդրսահմանային տարածքների վտանգված տեղական համայնքների ապրելամիջոցները, տեղական կենսաբազմազանությունը և էկոհամակարգերը: Որպես թիրախային տարածք ընտրվել է Լոռու մարզը և համապատասխան հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում կատարվել է հարմարվողականությանն ուղղված գործողությունների առաջնահերթության որոշում և ռազմավարության մշակում:

Բացի վերը նշված ծրագրերից՝ Հայաստանում իրականացվում են նաև կենսաբազմազանության պահպանությանը և էկոհամակարգերի կայուն կառավարմանն աջակցող միջազգային մի շարք ծրագրեր, որոնցից են.

1. <<Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն>> (2011-2016 թթ.). Ծրագիրն իրականացվում է ՀԲ-ի ֆինանսավորմամբ: Նպատակն է՝ ընտրված համայնքներում արոտավայրերի արտադրողականության և կայունության բարելավումը: Ծրագրի գործողությունները ներդրվել են 67 համայնքներում: 54 համայնքներում ստեղծվել են <<Արոտագտագործողների միավորում>> սպառողական կոոպերատիվներ: 49 համայնքում մասնակցային հիմունքներով մշակվել են արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլաններ: Արոտավայրերի համայնքային կառավարման արդյունավետությունը, որը գնահատվում է համայնքային բյուջետային հոսքերի ավելացմամբ, բարձրացել է 55 %-ով:

2. <<Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում>> (2014-2016 թթ.). Ծրագիրը նախատեսվում է իրականացնել GIZ/ADA և ՀՀ կառավարության համատեղ ջանքերով: Նպատակն է՝ համակարգված միջոցառումներով հաղթահարել հողերի էրոզիան և դեգրադացիան: Նախատեսվում է Արագածոտնի և Շիրակի մարզերում

ուսումնասիրել և գնահատել հողերի էրոզիականությունն ու ռիսկերը, դրանց հիման վրա մշակված միջոցառումների ծրագրով նպաստել հողաշերտերի վերականգնմանը և արդյունավետ օգտագործմանը: Ծրագիրը ենթադրում է նաև իրավական, ինստիտուցիոնալ բարեփոխումներ և նոր տեխնիկական լուծումներ:

ՀՀ կառավարության կողմից 2011 թ. ընդունվել է <<Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> թիվ 1594-Ն որոշումը, որը հանդիսանում է բնապահպանական միջազգային կոնվենցիաների պահանջների իրագործման հնգամյա (2012-2016 թթ.) գործողությունների պլան և նպատակ ունի ապահովել 15 բնապահպանական կոնվենցիաներից բխող համապատասխան աշխատանքների համակարգված իրականացումը: Սույն որոշումով նախատեսված աշխատանքների ընթացքի մասին տեղեկատվությունը հավաքագրվում և հաշվետվությունների ձևով ներկայացվում է ՀՀ արտաքին գործերի նախարարություն: Նշված որոշման ցանկերում ներառվել են՝

1. ԿԲԿ-ի ուղղությամբ 4 գործողություն, այդ թվում՝ նոր ԲՀՊՏ-ների ստեղծման, Հայաստանում կենսոլորտային պահպանավայրի հիմնման նպատակով ազգային օրենսդրության վերլուծություն և համապատասխան իրավական ակտերի մշակման վերաբերյալ:
2. <<Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես ջրլող թռչունների բնադրավայրերի մասին>> կոնվենցիայի ուղղությամբ 5 գործողություն, այդ թվում՝ Հայաստանում խոնավ տարածքների պահպանության և օգտագործման ազգային ծրագրի ու գործողությունների պլանի մշակում, <<Խոր Վիրապ>> արգելավայրի քարտեզագրում և կառավարման պլանի մշակում, Հայաստանում խոնավ տարածքների կենսաբանական և սոցիալ-տնտեսական արժեքների գնահատում:
3. <<Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին>> կոնվենցիայի (CITES) ուղղությամբ 1 գործողություն՝ կոնվենցիայի իրականացման վերաբերյալ պարբերական հաշվետվությունների պատրաստում և դրանց փոխանցում քարտուղարությանը:
4. ԵԽ <<Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին>> կոնվենցիայի ուղղությամբ 3 գործողություն՝ Հայաստանում բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող պոտենցիալ տարածքների Էմերալդ ցանցի ձևավորմանն ուղղված աշխատանքների իրականացում, վայրի ֆլորայի, ֆաունայի տեսակների, վտանգված բնական միջավայրերի պահպանման անհրաժեշտության, Էմերալդ ցանցի ձևավորման վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվության տարածում:

5. <<Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին» Բոննի կոնվենցիայի ուղղությամբ 4 գործողություն՝ կոնվենցիայի I և II հավելվածներում ընդգրկված, ՀՀ տարածքում հանդիպող տեսակների վերլուծություն, ցանկում ընդգրկվելիք նոր տեսակների վերաբերյալ առաջարկությունների մշակում, <<<< տարածքում վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության հայեցակարգ և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակում, ՀՀ տարածքում հանդիպող վայրի կենդանիների միգրացվող տեսակների էկոլոգիական առանձնահատկությունների և տարածվածության վերաբերյալ տեղեկատվական և քարտեզագրական բազայի ստեղծում:

2.4. Կենսաբազմազանության խնդիրների ներգրավումը ճյուղային և միջճյուղային ռազմավարություններում, պլաններում և ծրագրերում

ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատվել է <<<< **2014-2025 թվականների հեռանկարային զարգացման Ռազմավարական ծրագիրը**>>, որում հաշվի է առնվել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումներն ու նոր իրողությունները: Ծրագրում նշվում է, որ 2009-2011 թթ. Հայաստանում բնապահպանության ոլորտի զարգացումներն իրականացվել են կայուն զարգացման գերակայությունների շրջանակներում՝ համապատասխանելով <<Հայաստանի շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագրին>>: Առաջիկայում անհրաժեշտ է տնտեսության աճի բարձր տեմպերին զուգահեռ նվազեցնել բնապահպանական ռիսկերը, մասնավորապես՝

1. մետաղների միջազգային գների աճով պայմանավորված բնապահպանական ռիսկերը.
2. գազի գնի աճով պայմանավորված ապօրինի անտառահատումները.
3. ստորերկրյա ջրային ռեսուրսներն օգտագործող ենթաճյուղերի արագ զարգացմամբ և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ ջրային ռեսուրսների գերշահագործումը.
4. անապատացման վտանգի աճը:

Վերջին ռիսկային գործոնի հետ կապված՝ ծրագրում մեծ տեղ է տրվում հողերի նպատակային նշանակության ապահովման, հողերի կարգավիճակի փոփոխման և դեգրադացիայի առկա բացասական միտումների կանխարգելմանն ուղղված տնտեսական և վերահսկման մեխանիզմների մշակմանը և իրագործմանը, այդ թվում՝ դիֆերենցված հարկման համակարգի ձևավորումը, որը կխթանի գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային կայուն օգտագործմանը: Դեգրադացված հողերի ռեկուլտիվացիան խթանելու համար նախատեսվում է կիրառել ՄԱԿ-ի

<<Կլիմայի փոփոխության մասին>> կոնվենցիայի ներքո ձևավորվող գլոբալ ֆինանսական աջակցության մեխանիզմները (<<Կանաչ կլիմայական հիմնադրամ>> (Green Climate Fund), <<Արտանետումների նվազեցում անտառահատումից և անտառների դեգրադացիայից>> (REDD+), <<Ադապտացիոն ֆոնդ>>):

Հանրապետության անտառային հողերում անտառվերականգնման, անտառապատման, ինչպես նաև անտառների որակական հատկանիշների բարելավման նպատակով կվերանայվի և կիրականացվի անտառի ազգային ծրագիրը: Այս աշխատանքներին զուգընթաց կկատարելագործվեն ապօրինի հատումների վերահսկողության մեխանիզմները:

Կմշակվեն <<Ռիո+20>>-ի որոշումներին համահունչ <<Կանաչ>> նորամուծությունների ներդրումները խրախուսելու տնտեսա-իրավական մեխանիզմներ, այդ թվում՝ ԷԾ-ների գնահատման չափորոշիչները: Բնապահպանական մոնիթորինգի համակարգի կատարելագործման նպատակով կսահմանվեն մոնիթորինգի միասնական չափորոշիչներ՝ շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ վստահելի տեղեկատվության հավաքագրման և այլ աղբյուրներից ստացվող վիճակագրական տեղեկատվության համալրման նպատակով:

Կշարունակվեն ԲՀՊՏ-ների կառավարման համակարգի կատարելագործման աշխատանքները, որը ենթադրում է օրենսդրության կատարելագործում, համակարգի ընդլայնում, <<Շիկահող>> արգելոցի հիման վրա կենսոլորտային պահպանավայրի ստեղծում, կենսառեսուրսների մշտադիտարկման և հաշվառման համակարգի զարգացում, կայուն կառավարման ապահովում և համայնքային մասնակցության մեխանիզմների զարգացում:

Սույն Ռազմավարական ծրագիրը հստակեցնում է ճյուղային քաղաքականությունների շրջանակները և ամրացնում է միջճյուղային կապերի զարգացման հիմքերը: Սակայն այս փաստաթղթում կենսաբազմազանության խնդիրները և դրանց լուծման միջոցները արտացոլված չեն:

Վերջին տասնամյակում մեծ տարածում ստացած կանաչ էկոնոմիկայի սկզբունքները վկայում են, որ այն հենված է էկոհամակարգային մոտեցման վրա՝ ընդունելով էկոհամակարգերի ամբողջականությունը: Այս սկզբունքների կիրառման պարագաներում արդիական է դառնում բնապահպանական խնդիրների ներգրավումը երկրի տնտեսության այլ ոլորտների զարգացման ծրագրերում և ռազմավարություններում: Հետևաբար՝ գյուղատնտեսության, արդյունաբերության և էներգետիկայի քաղաքականությունները պետք է համահունչ լինեն բնապահպանական քաղաքականությանը: Անհրաժեշտ է փաստել, որ Հայաստանի առկա պայմաններում այս ուղղությամբ կատարված քայլերը դեռ անբավարար են:

2010 թ.-ին ՀՀ կառավարության N 1476-Ն որոշմամբ հաստատված **<<Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի**

Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը>> սահմանել է պետական ագրարային քաղաքականության հիմնական ուղղություններն ու դրանց կենսագործման միջոցառումները, այդ թվում՝ շրջակա միջավայրի և բնական լանդշաֆտների պահպանությունը, ագրոգրոսաշրջությունը և օրգանական գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև բնական կերահանդակների կազմալուծման և Արարատյան հարթավայրի ոռոգելի հողերում երկրորդային աղակալման ու անապատացման գործընթացների նվազեցմանն ուղղված միջոցառումները:

Բույսերի գենետիկական ռեսուրսների հուսալի պահպանումն ապահովելու նպատակով ռազմավարությունում շեշտադրվում են հետևյալ գործողությունները՝

- մշակել և իրականացնել Հայաստանի գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման ծրագիրը.
- վերազինել գենետիկական ռեսուրսների հավաքածուներ պահպանող կազմակերպությունները անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական միջոցներով.
- ստեղծել պտղի և խաղողի տեղական սելեկցիոն սորտերի դաշտային հավաքածուներ՝ կոլեկցիոն այգիների վերականգնման, այլ երկրների գենետիկական բանկերից հայկական ծագում ունեցող նմուշների ձեռքբերման և նոր այգիների հիմնադրման միջոցով.
- ընդլայնել վեգետատիվ եղանակով բազմացող բույսերի համար կենսատեխնոլոգիական եղանակով (in vitro) պահպանման և վերարտադրության հնարավորությունները.
- նպաստել բույսերի գենետիկական ռեսուրսների աճելավայրերի (in-situ) կառավարման բարելավմանը՝ տարածվածության, բուսական համակեցությունների և նրանց տեսակային կազմի գույքագրման, տարածման գոտիների ճշգրտման, պաշարի հաշվառման և մոնիթորինգի իրականացման միջոցով.
- մշակել և իրականացնել գյուղացիական տնտեսությունների պայմաններում (on-farm) բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման ծրագրեր.
- ապահովել եզակի նշանակություն ունեցող գենետիկական ռեսուրսների կրկնօրինակումը արտերկրի գենետիկական բանկում՝ անվտանգ պահպանման և ռիսկերի նվազման նպատակով:

Սույն ռազմավարության իրականացումն ապահովող գործողությունների ծրագրում ՀՀ ԲՊՆ-ն համակատարող է հանդիսանում հետևյալ գործողություններում՝

- գյուղատնտեսական հողերի և, հատկապես, արոտավայրերի դեգրադացիայի (վատթարացման) և անապատացման դեմ պայքարի միջոցառումների իրականացում.
- հողերի մոնիթորինգի ցուցանիշների տվյալների ստացման և տրամադրման մեթոդաբանության մշակում և իրականացում.
- Հայաստանի գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ցեղակիցների գենետիկական ռեսուրսների պահպանության և հավասարակշռված օգտագործման ծրագրի մշակում և իրականացում.
- կլիմայի փոփոխության հետևանքով գյուղատնտեսության խոցելիության նվազեցման միջոցառումների իրականացում:

Կենսաբազմազանության պահպանության հարցերին ավելի մեծ տեղ է տրվում <<**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն**>> (**ՀԳՌԿՄ**) երկրորդ ծրագրով, որը կիրականացվի Համաշխարհային բանկի աջակցությամբ: Այս ծրագրով նախատեսվում է կանխարգելել շինարարական աշխատանքների ընթացքում բուսածածկույթի հնարավոր քայքայումը, լանջերի անկայունությունը, էրոզիան, լանդշաֆտների դեգրադացիան, ինչպես նաև հողի և ջրի աղտոտումը՝ որակյալ նախագծերի առկայությամբ, ճշգրիտ պլանավորված տարածական և ժամանակային ընթացակարգով:

Անտառային տնտեսության ոլորտում մեծ առաջընթաց է գրանցվել՝ կապված 2006-2011 թթ. հանրապետության գրեթե բոլոր անտառտնտեսությունների համար կառավարման պլանների մշակման հետ: Մշակված անտառկառավարման պլանները ներառում են կենսաբազմազանության նկարագիրը և, կապված անտառի նպատակային նշանակությունից, անտառային տարածքների պահպանության միջաջառումները: Սակայն նշված փոստաթղթերում չեն սահմանված հատուկ պահպանման միջոցառումներ անտառային այն տարածքների նկատմամբ, որոնք հանդիսանում են առավել հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանության կրողներ, կամ տրամադրում են անփոխարինելի էկոհամակարգային ծառայություններ: Բնապահպանական բարձր արժեք ունեցող անտառների գաղափարը նույնպես չի արտացոլվում անտառկառավարման պլաններում:

<<Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնման>> ծրագրի (<<Կառավարության 2012 թ. նոյեմբերի 15-ի N 1441-Ն որոշում) նպատակն է Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը անտառածածկ տարածքների ընդլայնմամբ: Նախատեսվում է նոր անտառների հիմնում՝ 1113.2 հեկտար <<Սևանա>> ազգային պարկի և համայնքային տարածքների վրա, Վարդենիկի տնկարանի վերականգնում 13.70 հեկտարի վրա: Ծրագրի ֆինանսավորումը 2014-2023 թթ. ժամանակահատվածում նախատեսվում է

իրականացնել բարեգործական հիմնադրամներից և միջազգային կազմակերպություններից ներգրավվող միջոցների հաշվին: Համայնքների տարածքներում անտառպատման աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսության համար չօգտագործվող հողերում:

2014 թ.-ին մեկնարկել է <<Հայաստանի անտառների հասարակական մոնիթորինգ>> ծրագիրը, որի նպատակն է անտառներում բացահայտել ապօրինի գործողությունները, գրանցել, հավաքագրել և ներկայացնել հասարակայնությանը: Այդ նպատակով <<Գեոինֆո>> գիտա-կիրառական կենտրոն>> կազմակերպության կողմից կստեղծվեն ակտիվիստների տեղական խմբեր, որոնցում կներառվեն ՀԿ-ներ, բնապահպանական կազմակերպություններ և տեղաբնակներ:

Հանքարդյունաբերության զարգացմամբ պայմանավորված՝ ռիսկերի նվազեցումը առաջնային է էկոհամակարգերի և կենսաբազմազանության խնդիրների լուծման համար: Այս ոլորտում տարբեր շահագրգիռ կառույցների միջև համակարգված աշխատանքների օրինակները շատ քիչ են, քանի որ բաց հանքերի շահագործման պատճառով առաջացող գլխավոր գետէկոլոգիական հետևանքների նվազեցումը և վերացումը (լանդշաֆտների դեգրադացում, հողային և բուսական ծածկույթի խախտում, կենսաբազմազանության ապրելավայրերի/աճելավայրերի ֆրագմենտացիա և վերացում, թունավոր թափոնների պահեստավորում, ջրային ռեսուրսների աղտոտում) շահագործող կազմակերպությունների համար չի համարվում առաջնային հիմնախնդիր: Միայն երկու ընկերություն, Vallex group-ը Թեղուտում և Lydian international-ը Ամուլսարում, որոշ միջոցառումներ են ձեռնարկում իրենց գործունեության տարածքում առկա կենսաբազմազանության առանձին տեսակների պահպանման ուղղությամբ: Այսպես՝ <<Vallex group>>-ը, մինչև հանքի արդյունահանման հիմնական գործունեություն սկսելը, ձեռնարկել է տարածքի կենսաբազմազանության գույքագրման աշխատանքներ, որի արդյունքում հայտնաբերվել են Հայաստանի Կարմիր գրքում և միջազգային Կարմիր ցուցակներում ընդգրկված, ինչպես նաև էնդեմիկ բույսերի և կենդանիների մի շարք տեսակներ: Վերջիններիս պոպուլյացիաների պահպանման համար օգտագործման համար նախատեսված տարածքներից հավաքվել են բուսատեսակների սոխուկներ ու սերմեր և տնկվել/ցանվել են նոր, էկոլոգիապես նմանատիպ տարածքներում: Ըկերությունը նաև ձեռնարկում է միջոցներ հանքարդյունաբերական գործունեության ընթացքում հատման համար պլանավորված անտառների փոխարեն նոր անտառների տնկման ուղղությամբ: Թեղուտում և Ամուլսարում գնահատվել են տարածքի առավել խոցելի հատվածները և հիմնական սպառնալիքները: Արվել են կենսաբազմազանությանը հասցվելիք վնասները նվազագույնի հասցնելու համար համապատասխան առաջարկություններ, մասնավորապես՝ տարածքում մոնիթորինգի համակարգի ներդրման, ինչպես նաև համայնքային պատկանելության արգելավայրի ստեղծման վերաբերյալ:

Հիդրոէներգետիկայի բնագավառի ռազմավարություններում ու ծրագրերում առկա չեն ջրային ու առափնյա ցամաքային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա սպառնալիքների մեղմացմանն ուղղված միջոցառումներ: Միակ հուսադրող փաստն այն է, որ ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 4-ի նիստի N 30 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարության 2009 թ. հունվարի 22-ի նիստի ՀՀ Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմային հավանություն տալու մասին>> N 3 արձանագրային որոշման ՀՀ Սևանա լճի ավազան>> բաժինը ուժը կորցրած է ճանաչվել, որի արդյունքում Սևանա լիճ թափվող գետերի վրա նոր ՓՀԷԿ-երի կառուցում այլևս չի իրականացվելու:

ՄԱՍ 3.

ԱՅԻԶԻՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ>> ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2010 թ.-ին ընդունված ԿԲԿ-ի Ռազմավարական Պլանի առաքելությունը կենսաբազմազանության կորուստի կանխման արդյունավետ միջոցների ընդունումն է, որպեսզի մինչև 2020 թ. ապահովվի էկոհամակարգերի կայունությունը՝ երաշխավորելով մոլորակի վրա կյանքի բազմազանությունը և ներդրումը մարդկանց բարեկեցության ու աղքատության վերացման գործում: Պլանի անկյունաքարն է այն դրույթը, որ կենսաբազմազանությունը հանդիսանում է էկոհամակարգերի գործունեության և մարդկանց բարեկեցության հիմքը, որն ապահովում է պարենի, մարդկանց առողջության, մաքուր օդի և ջրի առկայությունը, ինչպես նաև երկրների տնտեսական զարգացումը:

Վերջին հնգամյակում Հայաստանի բնապահպանական ոլորտի գործունեությունը իրականացվում էր հիմք ընդունելով մի շարք ռազմավարական փաստաթղթերում ամրագրված դրույթները և գործողությունները, որոնք նպաստում են կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման խնդիրների լուծմանը: Դրանցից են՝

- ՀՀ 2008-2021 թթ. Հայաստանի կայուն զարգացման ծրագիրը>>.
- ՀՀ Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագիրը՝ 2008-2012 թթ.>>.
- ՀՀ Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը՝ 2002-2010 թթ.>>.
- ՀՀ Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագիրը՝ 2006-2015 թթ.>>:

Նշված ռազմավարական ծրագրերը, թեև մշակվել են ավելի շուտ, քան ՀՀ 2010-2020 թթ. Կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման>>

Ռազմավարական պլանը և Այջիի նպատակային խնդիրները, սակայն ընդգրկում են դրանց համարժեք գործողություններ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ վերլուծվել են Հայաստանում 2009-2013 թթ. կենսաբազմազանության ոլորտային գործողությունների իրականացման արդյունքները:

Ռազմավարական նպատակ Ա.

Կենսաբազմազանության կորուստի հիմնական պատճառների դեմ պայքարի իրականացում՝ կառավարության և հասարակության գործունեության մեջ կենսաբազմազանության թեմատիկայի ներառմամբ

Նպատակային խնդիր 1. *Ոչ ուշ քան 2020 թ. մարդիկ իրազեկված են կենսաբազմազանության գնային արժեքի մասին և այն միջոցների մասին, որոնք նրանք կարող են ընձեռնել կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար:*

Կենսաբազմազանության գնային արժեքի գնահատումը դեռևս գտնվում է նախնական փուլում և իրականացվում է որոշ միջազգային ծրագրերի շրջանակներում (տես՝ 1.5. բաժինը): Կենսաբազմազանության և էԾ-ների կարևորության մասին հասարակության տարբեր շերտերի իրազեկումը իրականացվում է դասընթացների, կլոր սեղանների, քննարկումների, հրատարակումների, զանգվածային լրատվամիջոցների միջոցներով:

2002 թ.-ից ՀՀ ԲՊՆ նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի օժանդակությամբ Հայաստանում ստեղծվել են 15 Բնապահպանական հասարակական-տեղեկատվական Օրիու-կենտրոններ, որոնք ապահովում են պետական մարմինների և հասարակության միջև կապը՝ տեղեկատվության տարածման, և բնապահպանական խնդիրների շուրջ քննարկումներին հասարակության մասնակցությունն ապահովելու գործում:

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի աջակցությամբ 2008 թ.-ից գործում է <<Էկոլոգիական իրավունքի գիտակրթական կենտրոնը>>, որը շահագրգիռ տարբեր կողմերի համար կազմակերպում է ազգային էկոլոգիական իրավունքի և բնապահպանական կոնվենցիաների վերաբերյալ դասընթացներ:

Իրազեկման և էկոկրթական կարևորագույն առաքելություն է իրականացվում Հայաստանի բնության պետական թանգարանում, որը գործում է 1952 թ.-ից և միակն է Անդրկովկասում: Թանգարանում պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, ճանաչողական և կրթական բնույթի միջոցառումներ: Տարեկան թանգարանն ունենում է շուրջ 24000 այցելու և 500 էքսկուրսիա:

Նպատակային խնդիր 2. *Ոչ ուշ քան 2020 թ. կենսաբազմազանության գնային արժեքը ընդգրկվել է ազգային և տեղական զարգացման և աղքատության կրճատման ռազմավարություններում, ինչպես նաև*

պլանավորման գործընթացներում և համապատասխան դեպքերում ընդգրկվում է ազգային հաշվառման և հաշվետվությունների համակարգերում:

Այս խնդրի նպատակին հասնելու առաջին քայլերից է՝ ազգային օրենսդրությունում ԷԾ-ների հասկացության, դրանց դասակարգման և գնային արժեքի գնահատման մեթոդաբանության ամրագրումը: 2013 թ. ՀՀ կառավարությունը հաստատել է <<Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգը>> (ՀՀ կառավարության 2013 թ. ապրիլի 25-ի N 16 արձանագրային որոշում) և դրանից բխող միջոցառումների ծրագիրը (ՀՀ կառավարության 14 նոյեմբերի 2013թ N 47 արձանագրային որոշում): Այս փաստաթղթերում առաջարկվող գործողությունների շարքում (նախատեսվում է իրականացնել մինչև 2018 թ.) դիտարկվում է <<Էկոհամակարգային ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի ընդունումը: Հայաստանում պետք է ստեղծվեն բնական կապիտալի տնտեսական գնահատման, ԷԾ տնտեսական կամ արժեքային գնահատման մեթոդական հիմքերը, ձևավորվի համապատասխան կադրային կամ փորձագիտական ներուժ:

Ներկայումս կատարվում է <<Էկոքաղաքականության մասին>> ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որում մեծ տեղ է տրվում ԷԾ-ների հետ կապված դրույթներին:

Օրենսդրական համապատասխան հիմքի ստեղծման և կենսաբազմազանության ու ԷԾ-երի արժեքային գնահատման ավարտից հետո անհրաժեշտ է վերանայել ազգային և տեղական ռազմավարությունները, մասնավորապես՝ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման պլանները, ինչպես նաև ԲՀՊՏ-ների և անտառային տնտեսությունների կատարման պլանները՝ ներառելով դրանց մեջ ԷԾ-երից ստացված օգուտների հաշվարկները:

Նպատակային խնդիր 3. *Ոչ ուշ քան 2020 թ. նվազագույնի հասցնելու կամ բացասական ազդեցությունները կանխելու նպատակով վերացվել են, փուլ առ փուլ չեղյալ են համարվել կամ ձևափոխվել են խթանները, այդ թվում՝ սուբսիդիաները, որոնք վնաս են հասցնում կենսաբազմազանությանը և մշակվում ու օգտագործվում են կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման դրական խթաններ՝ համաձայն ու համահունչ կոնվենցիայի և այլ համապատասխան միջազգային պարտավորությունների՝ հաշվի առնելով ազգային սոցիալ-տնտեսական պայմանները:*

Հայաստանում չեն կիրառվում սուբսիդիաներ, որոնք վնաս են հասցնում կենսաբազմազանությանը: Ինչ վերաբերվում է կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը նպաստող դրական խթաններին, ապա անհրաժեշտ է մշակել և ներդնել տնտեսական մեխանիզմներ ԷԾ-ների վճարումների, ինչպես նաև ԲՀՊՏ-ների համակարգի զարգացմանը նպաստող փոխհատուցման և

խրախուսման ուղղությամբ: Փոխհատուցման մեխանիզմների ներդրումը պետք է նպատակաուղղվի հողի սեփականատերերին՝ գործող ԲՀՊՏ-ների սահմանների ընդլայնման, նոր ԲՀՊՏ-ների և էկոլոգիական միջանցքների ստեղծման գործընթացներում: Խրախուսման մեխանիզմների ներդրումը կնպաստի ինչպես ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների գործունեության, այնպես էլ ԲՀՊՏ-ների մասնակցային կառավարման գործընթացներում շահագրգիռ կողմերի մասնակցության արդյունավետության բարձրացմանը: Այս դրույթները ներգրաված են <<Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառի պետական ծրագրում>>:

Նպատակային խնդիր 4. *Ոչ ուշ քան 2020 թ. կառավարությունները, գործարար օղակները և գործունեության սուբյեկտները բոլոր մակարդակներում միջոցներ են ձեռնարկել կամ պլաններ են ներդրել արտադրության կայունության ձեռքբերման (նվաճման) և սպառման նպատակով, և չեն թույլատրում, որպեսզի բնական ռեսուրսների օգտագործման հետևանքները խախտեն էկոլոգիական կայունությունը:*

Այս կարևոր նպատակային խնդիրն ընդգրկում է տնտեսական գործունեության գրեթե բոլոր ոլորտները: 2014 թ. հուլիսին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց <<Շրջակա միջավայրի վրա ազդեցություն գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքը, որը հստակ սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում ձեռնարկողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության պլանավորման և իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա օբեկտները, որոնցից է նաև <<...բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը և գոյության պայմանները, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, Հայաստանի Հանրապետության կենդանիների կամ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքերում գրանցված կենդանիների, բույսերի առկայությունը>>: Այս օրենքի կիրարկումը թույլ կտա ձեռնարկատիրական գործունեության հենց նախնական փուլում խուսափել ռեսուրսների անկայուն օգտագործման ռիսկերից:

Սույն նպատակային խնդրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել միջգերատեսչական կառույց, որը կհամակարգի բնական պաշարների օգտագործման պլանների և ռազմավարությունների մշակման հարցերը հենց առաջին փուլում: Անհրաժեշտ է նաև ընդունել բնական ռեսուրսների օգտագործման ինտեգրված քաղաքականություն:

Ռազմավարական նպատակ Բ.

Կենսաբազմազանության վրա ուղղակի ծանրաբերվածությունների կրճատում և կայուն օգտագործման խթանում

Նպատակային խնդիր 5. Ոչ ուշ քան 2020 թ. բոլոր բնակության միջավայրերի, այդ թվում՝ անտառների, կորուստները նվազագույնը կիսով կրճատված են, իսկ այնպեղ, որպեղ հնարավոր է՝ համարյա զրոյին է հասցրած, իսկ դեգրադացումը և մասնատումը զգալիորեն նվազել են:

Հայաստանում անտառային էկոհամակարգերի կորուստի տեմպերի կրճատումը ապահովվում է անտառհատումների ծավալների նվազեցման, անտառային տարածքների վերականգնման և անտառպատման աշխատանքների իրականացման միջոցով: Ինչ վերաբերվում է բնակմիջավայրերի դեգրադացման և մասնատման կանխարգելմանը, ապա կարևոր նշանակություն ունի 2014 թ.-ին սկիզբ առած <<Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն>> տարածաշրջանային ծրագիրը, որի նպատակն է Կովկասի տարածաշրջանում ստեղծել չորս էկոլոգիական միջանցքներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի վերացնել մասնատվածությունը կենսաբազմազանության առանցքային տեսակների պոպուլյացիաների և դրանց ապրելավայրերի միջև, տարածական կապ հաստատել մի շարք ԲՀՊՏ-ների միջև, ինչը կնպաստի էկոհամակարգերի հետագա դեգրադացման կանխմանը: Ծրագիրը կտրամադրի ֆինանսական ռեսուրսներ՝ ընտրված էկոլոգիական միջանցքներում էկոլոգիապես կայուն հողօգտագործման նպատակով, որը կնպաստի կենսաբազմազանության պահպանությանը՝ չկրճատելով գյուղական բնակչության եկամուտները:

Սևանա լճի էկոհամակարգերի դեգրադացիան կանխելու/նվազեցնելու նպատակով աստիճանաբար բարձրացվում է լճի մակարդակը, որի շնորհիվ նկատելի է ձկնային պոպուլյացիաների և այդ էկոհամակարգին բնորոշ թռչնաշխարհի վերականգնումը: Յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվում է <<Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների ծրագիրը>>, որն ընդգրկում է արժեքավոր ձկնատեսակների պաշարների համալրումը, Սևանա լճի ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառումը, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանումը:

Նպատակային խնդիր 6. Ոչ ուշ քան 2020 թ. ձկան պաշարների և անողնաշարների որսը, ջրային բույսերի հավաքը կարգավորված է, իրականացվում են կայուն, իրավական հիմքերով և էկոհամակարգային մոտեցումների օգտագործմամբ ձկան պաշարների շահագործում, ներդրված են հազվագյուտ տեսակների վերականգնման ծրագրերը, ձկնորսությունը չի թողնում անբարենպաստ ազդեցություն վրանգված տեսակների և խոցելի էկոհամակարգերի վրա:

Այս նպատակային խնդիրը հիմնականում վերաբերում է ծովային էկոհամակարգերին, որոնք Հայաստանում բացակայում են: Հայաստանի համար այն նախ և առաջ արդիական է Սևանա լճի էկոհամակարգի և դրա կենսաբանական ռեսուրսների պահպանման ու վերականգնման խնդիրներով: Չնայած երկրում իրականացվում են Սևանա լճի էկոհամակարգի և դրա կենսաբանական ռեսուրսների պահպանմանն ուղղված տարբեր ծրագրեր, սակայն վիճակը հեռու է բավարար լինելուց: Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման հարցը պահանջում է քաղաքական լուծումների իրականացում՝ կապված լճի ջրի բարձրացման և <<Սևանա լճի մասին>> ՀՀ օրենքի պահանջների կատարման հետ:

Նպատակային խնդիր 7. *Մինչև 2020 թ. գյուղատնտեսական, ջրային կուլտուրաներով զբաղված տարածքներն ու անտառտնտեսությունները պետք է կայուն կառավարվեն՝ ապահովելով կենսաբազմազանության պահպանումը:*

Անտառների կայուն կառավարումը, որը նախատեսում է անտառային էԾ-ների ամբողջ սպեկտրի պահպանումը, որոշ չափով ամրագրված է Հայաստանի անտառտնտեսությունների անտառկարավարման պլաններում: ԲՀՊՏ-ների համակարգում 110.270 հա մակերես ունեցող անտառային տարածքների կառավարումն իրականացվում է տվյալ տարածքի կառավարման պլանի:

Անտառային էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանությունը, այդ թվում՝ հասուն, գերհասուն անտառներում, արդիական է և կարևոր: Այդ հարցերը պետք է լուծվեն FSC-ի կողմից սահմանված բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների որոշման, առանձնացման և պահպանման միջոցով: Եթե որևէ անտառի բնապահպանական արժեքը գնահատվում է բարձր, ապա ակնհայտ է դրա երաշխավորված պահպանության անհրաժեշտությունը: Սակայն այդպիսի խնդիր անտառտնտեսությունները երբեք չեն դրել, այլ ընդհակառակը՝ քիչ յուրացված անտառները դիտարկվել են որպես փայտամթերումների հիմնական ռեզերվ: Կուտակված բազմամյա փորձը ցույց է տվել, որ անտառային կենսաբազմազանության պահպանության համար անհրաժեշտ է, որպեսզի ցանկացած անտառային տարածքի մոտ 20 %-ը զերծ լինի ինտենսիվ շահագործումից: Ներկայումս Հայաստանում սկսվել են աշխատանքներ անտառների կայուն կառավարման և բնապահպանական բարձր արժեք ունեցող անտառների առանձնացման ուղղությամբ, որոնք իրականացվում են <<Անտառային օրենսդրության կիրարկման և անտառային ոլորտի կառավարման բարելավում>> (ENPI FLEG 11՝ 2013-2016 թթ.) և <<Հողերի և անտառի կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում>> (GEF/UNDP, 2014-2017 թթ.) ծրագրերի շրջանակներում:

Արոտավայրերի կայուն կառավարման գործողությունները ներկայումս սահմանափակվում են մի շարք մարզերում համայնքային արոտավայրերի կառավարման պլանների մշակմամբ և իրականացմամբ: Այսպես՝ <<Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն>> ծրագրի շրջանակներում 49 համայնքում մշակվել են <<Արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլաններ>>, իսկ 67 համայնքներում ներդրվել են արոտավայրերի կայուն կառավարման գործողություններ:

Չնայած Հայաստանում վերջին տարիներին ակնհայտ են ձկնաբուծության զարգացման միտումները, սակայն ակվակուլտուրայի ոլորտում բնական ռեսուրսների օգտագործումը գրեթե չի կառավարվում: Հանրապետությունում գործում են 250 ձկնաբուծական տնտեսություններ՝ հիմնականում Արմավիրի և Արարատի մարզերում: 2012 թ. տարեկան ձկնարտադրությունը կազմել է շուրջ 9000 տոննա: Միայն 2010-2011 թթ. լճակային ձկնարտադրության ծավալներն ավելացել են 23%-ով՝ կազմելով 7095 տոննա, որոնց գերակշիռ մասը սաղմոնազգիներ են: Այդ տնտեսություններում դեռևս չեն իրականացվում ձկնատեսակների գենետիկական բազմազանության ուղղությամբ աշխատանքներ, ձկնատեսակների բուծումը կատարվում է միայն ըստ շուկայական պահանջարկի:

Անհրաժեշտ է նաև իրազեկման աշխատանքներ տանել Սևանա լճի շրջակայքում գործող ձկնաբուծական տնտեսություններում՝ օտարածին ինվազիվ տեսակների բնական էկոհամակարգ ներտափանցումը կանխարգելելու նպատակով:

Նպատակային խնդիր 8. *Մինչև 2020 թ. նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի աղտոտումը, այդ թվում՝ մեծ քանակի բիոգեն նյութերի արդյաններումները հասցնել այն մակարդակներին, որոնց դեպքում էկոհամակարգերի գործունեությանը և կենսաբազմազանությանը վնաս չի հասցվում:*

Հայաստանում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ իրականացվում է առկա 393 խոշոր գետերից (10 կմ-ից ավել երկարության) առավել ոչսկային 39 գետերում, առկա 78 ջրամբարներից՝ 5 ոչսկային ջրամբարներում (Ախուրյանի, Արփի լճի, Ապարանի, Ազատի, Կեչուտի) և 2 լճերում (Սևանա լիճ, Երևանյան լիճ):

<<Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տվյալներով 2012 թ.-ին Սևանա լճում օրգանական նյութերի պարունակությունը եղել է բարձր՝ գերազանցելով ձկնատնտեսական սահմանային թույլատրելի նորմերը 1.1-1.3 անգամ (ՄԹԿ 30 մգ/մ³): Օրգանական նյութերի առկայությունը, ֆոսֆորի, նիտրիտների և ամոնիումի իոնների աճը հավանաբար պայմանավորված է ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ավամերձ տարածքում գտնվող թփուտների, հատված ծառերի մնացորդների ջրի տակ անցմամբ: Վերջիններիս հետագա փտման հետևանքների կանխարգելման նպատակով կատարվում է ջրածածկվելիք

տարածքների նախնական մաքրում, ինչպես նաև անտառային մնացորդներից ջրածածկ տարածքների մաքրում՝ 2005-2013 թթ. մաքրվել է 1612 հեկտար անտառ, որից պետբյուջեի միջոցներով՝ 1374 հեկտար: Ձկնային պաշարների արագացված վերականգնումը նույնպես կարևոր խնդիր է, քանի որ լճում առկա է կերային հսկա պաշար, որը չօգտագործվելու դեպքում կզարգանան լճի էֆտրոֆացման գործընթացները: Սևանա լճի ձկնային պաշարների համալրման նպատակով 2007-2013 թթ. պետական բյուջեի միջոցների հաշվին լիճ է բաց թողնվել ավելի քան 2 մլն 022 հազ.հատ մանրածուկ, ընդ որում՝ միայն վերջին չորս տարիներին՝ 1 մլն 292 հազար հատ ամառային իշխանի և գեղարքունի ձկնատեսակների մանրածուկ:

Սևանի ավազանի տարածքում առկա խոշոր քաղաքների և գյուղական համայնքների կողմից արտադրվող կեղտաջրերի արտահոսքը դեպի լիճ կանխարգելելու նպատակով կատարվել են Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Զերմուկ քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգման աշխատանքներ:

Նպատակային խնդիր 9. *Մինչև 2020 թ. ինվազիվ օտարածին տեսակները և դրանց ներմուծման ուղիները նույնականացված և դասակարգված են ըստ գերակայության, առաջնային տեսակները կարգավորվում են կամ ոչնչացված են, իսկ տեղափոխման ուղիների համար ձեռնարկվում են կարգավորման միջոցներ՝ դրանց ներմուծման և ներխուժման կանխման նպատակով:*

Հայաստանի տարածք օտարածին բուսական և կենդանական տեսակների ներմուծման կանխարգելման անհրաժեշտությունը և կանխարգելման հնարավոր միջոցները դեռևս պատշաճ կերպով չեն գիտակցվում, այդ թվում՝ որոշում ընդունողների շրջանակներում: Որոշ չափով մաքսային կետերում վերահսկվում են միայն կարանտինային տեսակների ներմուծման և գյուղատնտեսական մակաբույծերի տարածումը: Անհրաժեշտ է շարունակել գիտական հետազոտություններն օտարածին ինվազիվ օրգանիզմների բոլոր խմբերի համար, կազմել առավել վտանգավոր տեսակների լիարժեք ցանկերը և գնահատել դրանցով պայմանավորված հնարավոր ռիսկերը: Վերջիններս հնարավորություն կտան մշակել և իրականացել այս տեսակների ներմուծումը կանխարգելող կամ սահմանափակող միջոցառումներ:

Ռազմավարական նպատակ Գ.

Կենսաբազմազանության վիճակի բարելավում՝ էկոհամակարգերի, տեսակների և գենետիկական բազմազանության պահպանմամբ

Նպատակային խնդիր 10. *2020 թ.-ին ցամաքային և ներքին ջրերի առնվազն 17 %-ը, մերձափնյա և ծովային տարածքների 10 %-ը և, մասնավորապես, այն տարածքները, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն կենսաբազմազանության ու էԾ-ների պահպանման համար, պահպանվում են արդյունավետ ու արդարացի կառավարման, նաև*

էկոլոգիապես ներկայացուցչական ու պահպանվող տարածքների իրար հետ լավ կապված համակարգերի հաշվին և այլ բնապահպանական միջոցառումների կիրառման, ցամաքի և ծովերի ավելի լայն լանշաֆտների ընդգրկման հաշվին:

Վերջին տարիներին Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը ավելացել է ևս 76.3 հազ. հա-ով, որի արդյունքում ներկայումս այն կազմում է մոտ 387.0 հազ. հա կամ հանրապետության տարածքի շուրջ 13 %-ը:

Հայ-գերմանական համագործակցության շրջանակներում՝ ԲՀՊՏ-ների պահպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տեխնիկական վերազինման համար 2010-2013 թթ. CNF-ի կողմից հատկացվել է շուրջ 400 մլն. դրամի աջակցություն:

2013 թ.-ին մեկնարկել է Սյունիքի մարզում կենսոլորտային պահպանավայրի ստեղծմանն ուղղված, KfW-ի ֆինանսավորմամբ իրականացվող <<Հայաստանում պահպանվող տարածքների աջակցություն>> ծրագիրը (արժեքը՝ 8.25 մլն. Եվրո, տևողությունը՝ 5 տարի): Ծրագրի նպատակն է՝

- բնական պաշարների և ԲՀՊՏ-ների կայուն կառավարման ապահովումը.
- հարակից գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը,
- UNESCO-ի չափանիշներին համապատասխան կենսոլորտային պահպանավայրի ստեղծման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

Բնագավառի զարգացմանը նպաստող գործողություններն անհրաժեշտ է շարունակել՝ ելնելով կենսաբազմազանության պահպանման էկոհամակարգային մոտեցումից և <<<< բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառի պետական ծրագրից>>:

Նպատակային խնդիր 11. *2020 թ.-ին կանխարգելված է ոչնչացման վտանգի տակ գտնվող հայտնի տեսակների անհետացումը, հաղկապես այն տեսակների, որոնց քանակը առավել կրճատվում է, իսկ դրանց կարգավիճակը արդեն բարելավվել է:*

Սույն նպատակային խնդրի հետ կապված Հայաստանում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ տեսակների բնակության միջավայրերի պահպանություն ու վերականգնում, սպառնալիքների (որսագողություն, կլիմայի փոփոխություն) դեմ պայքարի ուժեղացում, in-situ և ex-situ պահպանություն: Իրականացվում են գործողություններ վտանգված տեսակների (հայկական մուֆլոն, հովազ, Սևանի իշխան և այլն) վերականգնմանն ուղղությամբ: Անհրաժեշտ է ապահովել նման աշխատանքների ընդլայնումը՝ հիմք ընդունելով ՀՀ Կարմիր գրքերում վտանգված և կրճատվող տեսակների վերաբերյալ բերված տեղեկատվությունը:

Նպատակային խնդիր 12. 2020 թ. պահպանվում է գյուղատնտեսական բույսերի, ընտանի կենդանիների և դրանց վայրի ցեղակիցների, սոցիալ-տնտեսական ու մշակութային տեսանկյունից այլ արժեքավոր տեսակների գենետիկական բազմազանությունը, մշակվել ու ներդրվել են գենետիկական էրոզիան նվազեցնելու, գենետիկական բազմազանությունը պահպանելու ռազմավարությունները:

Սույն նպատակային խնդիրը Հայաստանում արդիական է, քանի որ երկրի կենսաբազմազանությունը հարուստ է մշակովի բույսերի և ընտանի կենդանիների վայրի ցեղակիցներով և մշակաբույսերի տեղական սորտերով ու կենդանիների ցեղերով: Պետության և դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվում են գենետիկական ռեսուրսների ուսումնասիրմանը, սելեկցիայում օգտագործմանը, ex-situ և in-situ պայմաններում պահպանմանն ուղղված մի շարք ծրագրեր, որոնցից են՝

- <<Բույսերի գենետիկական ռեսուրսների ex-situ հավաքածուի ուսումնասիրում, գնահատում, բազմացում, հարստացում, փաստաթղթավորման համակարգի բարելավում և նախասելեկցիոն աշխատանքներ>>՝ 2012-2014 թթ.
- <<Մորմագգի մշակաբույսերի համաշխարհային գենոֆոնդի հավաքածուների ուսումնասիրում>>՝ 2010-2012 թթ.
- <<Տարածաշրջանային առաջնայնություն ունեցող մշակաբույսերի հավաքածուների վերարտադրություն>>՝ 2011-2012 թթ.
- <<Խաղողի արքիգեն մի շարք արժեքավոր սորտերի և դրանց կլոնների ուսումնասիրում>>՝ 2012-2014 թթ.
- <<Տեղական ծագման մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների ձեռքբերում, ռեգեներացիա, բնութագրում, փաստաթղթավորում և պահպանում>>՝ 2012-2014 թթ.
- <<Ծիրանի գենետիկական ռեսուրսների պահպանում և օգտագործում>>՝ 2011-2014 թթ:

Ռազմավարական նպատակ Դ.

Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների ապահովման միջոցով մարդկանց համար օգուտների ծավալը մեծացել է

Նպատակային խնդիր 13. 2020 թ. վերականգնվել և պահպանվում են կարևոր ծառայություններ ապահովող էկոհամակարգերը, այդ թվում՝ ջրի հեղեղ կապված ծառայությունները, նաև որոնք նպաստում են առողջության պահպանությանը, կենսաապահովմանն ու բարեկեցությանը՝ հաշվի առնելով կանանց, բնիկ ու տեղական համայնքների, աղքատների ու բնակչության խոցելի շերտերի կարիքները:

Հանրապետության ջրային էկոհամակարգերից հատկապես կարևորվում է Սևանա լիճն իր ջրհավաք ավազանով, որի կողմից մատուցվող ԷԾ-ներից (խմելու և ոռոգման ջրի տրամադրում, պարենով ապահովում, կլիմայի կարգավորում, էներգետիկ ռեսուրսների տրամադրում, ռեկրեացիա, էսթետիկական և հոգևոր բավարարվածություն) կախման մեջ է գտնվում հանրապետության գրեթե ամբողջ բնակչությունը:

Հաշվի առնելով Սևանա լճի կարևորությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Արդյունքում՝ 2003-2010 թթ. լճի մակարդակը բարձրացել է 384 սմ, ինչը նախադրյալներ է ստեղծում ջրաէկոհամակարգի և կենսաբազմազանության վերականգնման համար:

Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում լուծվել են ոռոգման և կենդանիներին ջրի մատակարարման խնդիրները, սակայն ոռոգման նպատակով հիմնականում օգտագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, ամառային իշխանին, գեղարքունիին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, վերականգնման և կայուն օգտագործման նպատակով 2010 թ.-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009 թվականի աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույցը>>, որի համաձայն իրականացվում են 43 միջոցառումներ, այդ թվում՝ մի շարք իրավական ակտերի մշակումը, կենսաբազմազանության վերարտադրության խթանումը, ինչպես նաև Սևանի ավազանի խոշոր բնակավայրերի ջրամատակարարման, կոյուղացման և կեղտաջրերի մաքրման համալիր ծրագրերի իրականացումը և այլն:

Նպատակային խնդիր 14. 2020 թ. բնության պահպանության ու վերականգնման միջոցով բարձրացել է էկոհամակարգի դիմադրողականությունն ու ավելացել է կենսաբազմազանության ներդրումը ածխածնի պաշարների կուտակման գործում՝ այդ թվում՝ դեգրադացված էկոհամակարգերի առնվազն 15 %-ի վերականգնման միջոցով,

որը նպաստել է կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանը, էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացմանը, ինչպես նաև անապատացման դեմ պայքարին:

Համաձային FAO-ի կողմից 2010 թ.-ին կատարված <<Գլոբալ անտառային պաշարների գնահատման զեկույցում>> բերված տվյալների՝ Հայաստանում անտառի կենսազանգվածում (վերգետնյա և ստորգետնյա մասեր) կուտակված ածխածնի պաշարը կազմում է 48 տոննա 1 հա-ի վրա: Ի դեպ՝ անտառային կենսազանգվածում կուտակված ածխածնի պաշարը 1990-2010 թթ. ընթացքում նվազել է 17 մլն. տոննայից մինչև 13 մլն. տոննա, ինչը վերագրվում է այդ ժամանակահատվածում Հայաստանում կատարված զանգվածային անտառահատումներին: Էկոհամակարգերի դիմադրողականությունն ու ածխածնի պաշարների կուտակման գործում կենսաբազմազանության ներդրումն ավելացնելու տեսակետից կարևորվում է նաև ջրաճահճային տարածքների պահպանման և վերականգնման խնդիրը ինչպես Սևանա լճի ավազանի տարածքում, այնպես էլ այլ մարզերում:

Ներկայումս Հայաստանում իրականացվում են մի շարք պիլոտային ծրագրեր՝ կլիմայի փոփոխության պայմաններում էկոհամակարգերի հարմարողականության և ածխածնի կուտակման ներուժի բարձրացման ուղղությամբ: Անհրաժեշտ է ընդլայնել այդ գործողությունները՝ առավել շատ էկոհամակարգերի ընդգրկմամբ: Արդիական է նաև ածխածնի կլանման և կուտակման համար երկրի բոլոր էկոհամակարգերի պոտենցիալ հնարավորությունների ուսումնասիրումն ու գնահատումը, ինչպես նաև առավել կարևոր էկոհամակարգերի վերականգնման ազգային ծրագրի մշակումն ու իրականացումը:

Նպատակային խնդիր 15. *2015 թ. գենետիկական ռեսուրսների հասանելիության կարգավորման և դրանց կիրառումից սրացված օգուտների արդար ու հավասարաչափ բաշխմամբ համարել օգտագործման Նագոյայի արձանագրությունը մտել է ուժի մեջ և գործում է համաձայն ազգային օրենսդրության:*

Տվյալ խնդիրը Հայաստանում իր արտացոլումը կգտնի սույն արձանագրությանը միացման գործընթացի ավարտմամբ:

Ռազմավարական նպատակ Ե.

Հասարակական պլանավորման իրականացման, գիտելիքների կառավարման և ներուժի ստեղծման արդյունավետության բարձացում

Նպատակային խնդիր 16. *2015 թ. յուրաքանչյուր Կողմ երկիր մշակել և, որպես քաղաքականության գործիք, ընդունել է կենսաբազմազանության պահպանության արդյունավետ, համարել ու նորացված ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր ու սկսել է իրականացնել դրանք:*

<<Կենսաբազմազանության պահպանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի>> վերանայումը և արդիականացումը իրականացվում է 2014 թ.-ի մայիս ամսից ԳԷՀ/ՀԲ ֆինանսական աջակցությամբ: Այդ փաստաթղթի մշակումը կավարտվի 2015 թ--ի առաջին կիսամյակում:

Նպատակային խնդիր 17. 2020 թ. ավանդական գիտելիքները, նորարարությունները և բնիկների ու տեղական համայնքների փորձը, որոնք կարևոր են կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար, նաև հարգված է կենսաբանական ռեսուրսների ավանդական օգտագործումը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային պարտավորություններին համապատասխան լիովին ինտեգրված և արտացոլված են Կոնվենցիայի իրականացման գործընթացում՝ բնիկների և տեղական համայնքների ամբողջական ու արդյունավետ մասնակցությամբ:

Հայաստանը մոնոէթնիկ երկիր է: Ըստ 2011 թ վիճակագրագան տվյալների՝ բնակչության 98 տոկոսն ազգությամբ հայեր են: Հետևաբար՝ տվյալ նպատակային խնդիրն առնչվում է միայն տեղական համայնքներին, որոնց մասնակցությունը հիմնականում նպատակաուղղված է համայնքային անտառների հիմնման հնարավորությունների բացահայտմանը, առկա ԲՀՊՏ-ների կառավարման և բիզնես պլանների մշակմանը, համայնքային կառավարման ԲՀՊՏ-ների հիմնման համար նախադրյալների ստեղծմանը: Այդ տեսակետից նոր հնարավորություններ է ստեղծում <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծով և <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագրով>> նախատեսված ԲՀՊՏ-ների համակարգում պահպանվող լանդշաֆտի (ԲՊՄՄ չափորոշիչներով 5-րդ կատեգորիա) ամրագրումը, ինչը կարող է նպաստել բնապահպանական գործընթացներում համայնքների ակտիվ մասնակցությունը: Արդյունքում՝ կապահովվի գյուղական համայնքներում այլընտրանքային կենսամիջոցների զարգացման հնարավորությունների ստեղծումը՝ ուղղված կենսապաշարների կանոնակարգված և նորմավորված օգտագործմանը:

Նպատակային խնդիր 18. 2020 թ. կենսաբազմազանության, դրա գնային արժեքի, նշանակության, կարգավիճակի և այդ ոլորտում միտումների, ինչպես նաև դրա կորստի հետևանքների հետ կապված գիտելիքները, գիտական բազան և տեխնոլոգիաները կատարելագործվել են, լայնորեն համադրել օգտագործվում են, փոխանցվում և կիրառվում են:

Կենսաբազմազանության վիճակը և տեղի ունեցած փոփոխությունները վեր հանելու, վերլուծելու և գնահատելու համար հավաստի տվյալների ստացումը

պահանջում է շարունակական ուսումնասիրությունների և մոնիթորինգի առկայություն, ինչը հիմնվում է համապատասխան մասնագետների, կառույցների, մեթոդաբանության, նյութատեխնիկական ռեսուրսների և ֆինանսական միջոցների բավարար մակարդակի վրա: Վերջին հնգամյակում Հայաստանում շարունակվել են կենսաբազմազանության վիճակի, միտումների, ինչպես նաև դրա կորստի հետևանքների վերաբերյալ ակտիվ ուսումնասիրությունը: Անհրաժեշտություն է առաջացել առավել ուշադրություն դարձնել կենսաբազմազանության և էԾ-ների ինքնարժեքային նշանակությանը և դրա գնահատմանը, հատկապես ԲՀՊՏ-ների համակարգում: Ներկայումս տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացվում է գնահատման մեթոդների փորձարկում, դրանց կիրառումը որոշ ԲՀՊՏ-ների համար և ներդրումը Հայաստանի նորմատիվ բազայում:

ԲՀՊՏ-ների էԾ-ների տնտեսական գնահատման արդյունքները իրենցից տեղեկատվական հիմք են ներկայացնում վարչական խնդիրների լայն շրջանակի լուծման համար: Այդ ուսումնասիրությունների միջոցով նախատեսվում է ճշգրտել ԲՀՊՏ-ների մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ի կազմում, արժեքավորել դրանց կենսաբազմազանության և էԾ-ների ներդրումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ոլորտների մեջ, գիտականորեն հիմնավորել և որոշել ԲՀՊՏ-ների համար ֆինանսավորման անհրաժեշտ ծավալները:

Նպատակային խնդիր 19. Ոչ ուշ, քան 2020 թ., համեմատած ընթացիկ մակարդակների հետ, պետք է զգալիորեն ընդլայնվի ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացումը բոլոր աղբյուրներից՝ 2011-2020 թվականներին կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման Ռազմավարական պլանի արդյունավետ իրականացման նպատակով, ըստ Ռեսուրսների մոբիլիզացիայի ռազմավարության ընդհանրացված ու համաձայնեցված գործընթացի հետ:

Հայաստանում շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ապահովելու համար, բացի ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցներից, <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> ՀՀ օրենքի կիրարկման շնորհիվ զգալիորեն ավելացել են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջե մուտքագրվող եկամուտները, ինչպես նաև, առանձին դեպքերում, նվազել են շրջակա միջավայրի վրա ներգործության ծավալները: Այսպես՝ 2013 թ.-ին բնօգտագործման և բնապահպանական վճարների գծով պետական բյուջեի մուտքերը, համեմատած 2009 թ.-ի հետ, ավելացել են մոտ 2.7 անգամ: Վերջին տարիներին Հայաստանում բնապահպանական և բնօգտագործման վճարների հասցեական օգտագործման հիմնախնդիրների լուծումն իրականացվում է հետևյալ ուղղություններով:

1. <<<< բյուջետային համակարգի մասին>> << օրենքում ամրագրված է, որ <<Բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը>>:
